ՍՓՅՈՒՌՔԻ ԴԱՎԱՆԱՆՔԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևան
2011

ՀՏԴ 941 (479.25):2
ԳՄԴ 63.3 (2Հ)+86.3
U 989

U 989 Սփյուռքի դավանանքային հատվածների խնդիրները և հնարավորությունները - Եր.: «Նորավանք» ԳԿՀ, 2011. – 132 էջ:

Գիրքը նվիրված է Սփյուռքի Հայության կրոնադավանական հատվածների՝ կաթողիկե, ավետարանական և իսլամացված հայերի խնդիրների ուսումնասիրությանը: Հատուկ ուշադրություն է դարձվում հայ ժողովրդի պատմական ճակատագրում կաթողիկե և ավետարանական հայերի ունեցած դերին ու նշանակությանը՝ մշակույթի, գիտության, հայապահպանության և այլ բնագավառներում: Մատնանշվում է նրանց ավանդը հայկական քաղաքակրթության զարգացման գործում: Առանձին քննարկման առարկա է փոխադարձ ընկալումների, միջդավանանքային համերաշխության և համագործակցության հարցը:

Գիրքը նախատեսված է գիտական հանրության և ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 941 (479.25):2
ԳՄԴ 63.3 (2Հ)+86.3

ISBN 978-9939-825-11-3

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2011
© «Նորավանք» ԳԿՀ, 2011

Գիրքը հրատարակվում է
ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով,
«Նորավանք» ԳԿՀ փորձագիտական խորհրդի
որոշման հիման վրա

Հեղինակային խմբի ղեկավար՝

Արեստակես ՍԻՄԱՎՈՐՅԱՆ
«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար

Հեղինակային խումբ՝

Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն

Էդուարդ Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր,
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական,
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի
հին դարերի պատմության բաժնի վարիչ

Հովհաննես ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ Հայ եկեղեցու
պատմության և եկեղեցաբանության ամբիոնի դոցենտ

Ռուբեն ՄԵԼՔՈՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի փոխդեկան

Վահրամ ՀՈՎՅԱՆ
«Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ …… 5

1. ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԴԱՎԱՆԱՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 8

2. ՀԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ 23

3. ՄԻՋԴԱՎԱՆԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ 45

4. ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՅԵՐԸ 80

5. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴԸ
ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 90

6. ԵՎՐՈՊԱՅԻ ԿՐՈՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ ԽՄԲԵՐԸ 99

ԱՄՓՈՓՈՒՄ …… 115

РЕЗЮМЕ …… 121

SUMMARY …… 126

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի կյանքում, ինչպես հայտնի է, հոգևոր-ազգապահպան կենտրոնական դերակատարում ունի Հայ Առաքելական եկեղեցին, որի կողքին, անբարենպաստ և ողբերգական քաղաքական հանգամանքների բերումով առաջացել են մի կողմից՝ քրիստոնեական այլ դավանանքների հետևորդներ, մյուս կողմից՝ որպես Հայոց ցեղասպանության հետևանք, բռնի կրոնափոխվածներ Թուրքիայում և այլ երկրներում:

Այսօր համազգային հրատապ խնդիր է փոխադարձ հանդուրժողականության և համագործակցության, ազգային, քաղաքակրթական արժեհամակարգի շուրջ համախմբվելը: Հոգևոր առումով կարևոր է՝ գերակա խնդիրների լուծման անհրաժեշտության գիտակցմամբ, գործել միասնական ուժերով, ազգային ամբողջական գաղափարաբանության հրամայականով, քանզի հոգևոր հատվածայնությունը լի է միմյանցից օտարացման և դրա խորացման վտանգով: Այսօր արդեն պարզ է, որ կուտակված խնդիրների առկայությունը պարարտ հող է ստեղծում հոգեորսությամբ զբաղվող, օտար ծագում ունեցող տարբեր կազմակերպությունների համար:

Անհրաժեշտ է մշակել ազգանպաստ համագործակցությամբ միասնականանալու մեթոդաբանություն, որով հնարավորություն կստեղծվի մի կողմից՝ դիմակայել դրսից եկող բացասական ազդեցություններին ու երևույթներին, մյուս կողմից՝

հաղթահարիել ներքին տարանջատումները, և ազգային հոգևոր միակ ամբողջական կառույցի՝ Հայ Առաքելական եկեղեցու հսկայական պատմական փորձի հովանու ներքո լուծել խնդիրներն ազգի միասնականությունը պահպանող ոգով։

Հայրենիքում և Սփյուռքում պահանջվում են խնդրի միասնական ըմբռնում և ազգային ներկայացուցչական մարմինների ուշադրության ներքո լուծումների առաջադրում, ինչը, որպես ազգային անվտանգության գործոն, կնպաստի հայ հասարակության հոգևոր կայունության ապահովմանը։

Գիրքը ստեղծվել է 7 հոգուց բաղկացած հեղինակային խմբի համատեղ աշխատանքի արդյունքում՝ հեղինակային խմբի և «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար Արեստակես Սիմավորյանի ղեկավարությամբ։ Այն բաղկացած է 6 գլուխներից, որոնք ընդհանուր խնդրի համատեքստում անդրադառնում են մասնավոր խնդիրների։

Առաջին գլուխը, որը նվիրված է գլոբալ զարգացումների համատեքստում Հայության կրոնադավանանքային խնդիրներին, հեղինակել է «Նորավանք» ԳԿՀ տնօրեն Գագիկ Հարությունյանը։

Երկրորդ գլուխը՝ նվիրված կրոնական հարթության մեջ Հայության արդի խնդիրներին, հեղինակել է ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Հայ եկեղեցու պատմության դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը։

Երրորդ գլուխը, որն անդրադառնում է Սփյուռքում միջդավանանքային համերաշխության խնդիրներին, գրվել է «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար Արեստակես Սիմավորյանի և նույն կենտրոնի փորձագետ Վահրամ Հովյանի համատեղ հեղինակությամբ։

Չորրորդ գլուխը, որն անդրադառնում է Հայության առանձին դավանանքային հատվածներից մեկի՝ բողոքական հայերի ինքնընկալումներին, հեղինակել է «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ Վահրամ Հովյանը։

Հինգերորդ գլուխը՝ նվիրված հայոց քաղաքակրթական հիմունքների պահպանության գործում Մխիթարյան միաբանության ավանդին, հեղինակել է «Նորավանք» ԳԿՀ խորհրդական Էդուարդ Դանիելյանը։

Վեցերորդ գլուխը, որն անդրադառնում է Եվրոպայի կրոնադարձ հայերի խմբերին, հեղինակել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի փոխդեկան, «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ Ռուբեն Մելքոնյանը։

Վերջում ամփոփ ի մի են բերվել սույն հետազոտության հիմնական արդյունքները։

1. ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԴԱՎԱՆԱՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայկական ընդհանրական հանրության մի զգալի մասը, տարբեր գնահատականներով՝ 10-20%-ը, Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ չեն։ Ավելին, բացի հայ կաթոլիկներից, ավետարանականներից և ուղղափառներից, առկա է իսլամացված հայերի մի ստվար զանգված։ Ակնհայտ է, որ տարադավան և տարակրոն հայության վերաբերյալ զարգացած փորձագիտական պատկերացումների ձևավորումը ոչ միայն մեր ինքնաճանաչողության, այլև ազգային անվտանգության (ԱԱ) կարևոր մաս հանդիսացող հոգևոր անվտանգության (ՀԱ) հրատապ խնդիրներից է։ Կասկած չի հարուցում նաև այն, որ առանց տարադավան և տարակրոն հատվածների վերաբերյալ հստակ պատկերացումների՝ անհնարին է մշակել հայկական հանրության համերաշխ և արդյունավետ գործունեության մեխանիզմները։ Միևնույն ժամանակ, հայտնի է, որ ԱԱ համակարգում սկզբունքորեն չեն կարող լինել մեկուսացված ոլորտներ, և անգամ տարաբնույթ խնդիրներն այս կամ այն չափով փոխկապակցված են։ Այդ առումով ՀԱ-ին վերաբերող հարցերը, մասնավորապես, անմիջապես առնչվում են.

- Սփյուռքի անվտանգության խնդիրների հետ. հայտնի է, որ տարադավան և տարակրոն հայերի զգալի մասը բնակվում է ՀՀ և ԼՂՀ սահմաններից դուրս։
- Հայաստանի ներքաղաքական ակտուալ խնդիրների հետ, որոնք վերաբերում են տարադավան հատվածների փոխհարաբերություններին, աղանդավորական արտահայտումներին, հարկային-գույքային խնդիրներին, հուշարձանների պահպանման հարցերին և այլն։
- Արտաքին քաղաքական զարգացումներին՝ հաշվի առնելով տարակրոն և տարադավան հայության առկայությունը և քաղաքական ներուժը Թուրքիայում, Մերձավոր Արևելքում, ինչպես նաև Եվրոպայում և ամերիկյան մայրցամաքում։

Հարկ է ամրագրել, որ Հայության կրոնադավանական հատվածների ուսումնասիրությունը դասական հայագիտության կարևոր բաղկացուցիչ մասերից է։ Այդ խնդիրը ներառում է հայոց պատմությանը ներհյուսված հարուստ պատմագրություն, աստվածաբանական բնույթի հարցեր և բազմաթիվ այլ խնդիրներ։ Հայտնի է, որ այդ ոլորտների ուսումնասիրությունը խոր պատմական և գիտական ավանդույթներ ունի։ Միևնույն ժամանակ, երբեմն, թվացյալ գիտականության շղարշի ներքո, նկատելի են միտումներ, երբ փորձեր են կատարվում պարզունակ ձևերով մեկնել հայկական ծագումնաբանությունը կամ էլ, օրինակ, տալ «հայ» լինելու ձևակերպումները՝ հենվելով զուտ կրոնադավանական և լեզվական նախապայմանների վրա։

«Ով է հայը» խնդիրը և կիրառական հայագիտության նպատակները

«Ով է հայ, ով հայ չէ» խնդիրը չունի և չի կարող ունենալ լուծում մաթեմատիկական բանաձևի տեսքով, ինչպես որ չկան նման բանաձևեր բարդ պատմական-հասարակական երևույթների համար։ «Հայ» ֆենոմենը խիստ բարդ հասկացություն է, և այդ հարցի պարզաբանումն ամեն մի առանձին դեպքում (իսկ տարաբնույթ դեպքերն այս պարագայում ավելի քան բազմաթիվ են) պետք է թողնել կոնկրետ անձի զգացողությանը, հայկական հանրության գնահատականին, պետական կառույցների ու եկեղեցու մոտեցումներին և այլն։ Հայ լինելու խնդիրն այն խնդիրն է, որի պարագայում երբեք չպետք է գերագնահատել սեփական մոտեցումները և, ըստ մեզ, երբեմն անգամ ապավինել միայն Աստծուն, քանի որ կոնկրետացման փորձերը և թալմուդիստական բնույթի մտավարժանքները հայկական հանրության ներկա իրավիճակում կարող են տանել միայն դեպի փակուղի, բայց երբևիցե չեն տա կառուցողական արդյունքներ։ Այս ամենի համատեքստում տեղին է մեջբերել համառոտ դրվագներ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի ելույթից, որը նա արտասանել է ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության և ամերիկահայ առաջատար կազմակերպությունների կողմից իր պատվին կազմակերպված հանդիսավոր ընդունելության ժամանակ[1]. «Ընկալո՞ւմ ենք արդյոք, որ մշակութային, լեզվական, կրոնական բազմադեմու-

[1] Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության և ամերիկահայ առաջատար կազմակերպությունների կողմից իր պատվին կազմակերպված հանդիսավոր ընդունելության ժամանակ, http://www.president.am/events/news/arm/?pn=329&id=209

թյունը արատ չէ ամենևին, որի դեմ պետք է պայքարել, այլ հայությանը տրված առավելություն է, որ յուրահատուկ հնարավորություններ է ընձեռում: Հայի ինքնությունը չպետք է լինի բարդ և խորհրդավոր, այն պետք է հրաժարվի լեզվական, կրոնական, մշակութային, կուսակցական կամ գաղափարական տարանջատումներից: Անգլիախոս, թուրքախոս, ռուսախոս կամ հայախոս հայը, առաքելական, կաթոլիկ, բողոքական կամ մահմեդական հայը, սոցիալիստ կամ ժողովրդավար հայը, ազատական կամ ազգայնական հայը՝ պարզապես հայ է»: Այս մոտեցումը, կարծում եմ, պետք է ուղեցույց լինի հանրության համար այս հարցում: Նկատենք, որ նման ոգով է արտահայտվում նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը[1]:

Սակայն վերադառնանք մեր հարցերին: Դասական հայագիտությանը զուգահեռ՝ փոքր-ինչ նոր ավանդույթ կարելի է համարել ***կիրառական*** հայագիտության ձևավորումը, որի խնդիրները դուրս են գալիս նախորդ դարաշրջաններին բնորոշ գիտական չափորոշիչների սահմաններից և վերիմաստավորվում են որպես Հայաստանի և Հայության ազգային-քաղաքական շահերի պահպանմանն ուղղված ռազմավարություն[2]:

[1] «Մենք ընդունում ենք նրանց որպես մեր ազգի զավակների՝ պատմական ցավալի հանգամանքների պատճառներով հեռացած իրենց հայրերի հավատքից ու կրոնից: Մենք աշխատանք ենք տանում, որպեսզի նրանք վերագտնեն իրենց ազգային ինքնությունը, որի առանցքը կազմում է քրիստոնեական հավատը»: Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի պատասխանը իսլամացած հայերի վերաբերյալ ֆրանսահայ «Նոր յառաջ» թերթի տված հարցին,
http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6133

[2] *Գագիկ Տեր-Հարությունյանց,* Հոգևոր անվտանգությունը որպես ազգային անվտանգության բաղադրամաս, «Տարածաշրջան» (հատուկ թողարկում), 2(4), էջ 29, 2005; *Гагик Арутюнян,* Распад «системы» и формирование будущего, Ереван, НОФ «Нораванк», 2011.

Անշուշտ, նման մոտեցումը որևէ կերպ չի ենթադրում դասական հայեցակարգերի և հիմնարար գիտելիքների մոռացություն ու չի նշանակում, որ հայագիտության գործընթացները, ինքնաճանաչողության խնդիրները մղվում են հետին պլան և վերածվում ընդամենը պարզունակ քարոզչական և քաղաքականացված գործընթացի: Հակառակը. կիրառական հայագիտության նպատակն է հիմնարար հետազոտություններից ստացված արդյունքներն առավելագույնս արդյունավետ օգտագործել տեղեկատվական, գաղափարախոսական և միջազգային-քաղաքական հարթություններում և այդպիսով դրանք ի սպաս դնել Հայաստանի և Հայության ժամանակակից ու հրատապ խնդիրներին: Նման արդիականացված հարցադրումը նպաստում է միջդիսցիպլինար մեթոդների զարգացմանը և այդպիսով հայագիտության տարբեր ոլորտների սերտաճմանն ու նոր հիմնարար հետազոտական ուղղությունների ձևավորմանը[1]: Արևմտյան երկրների (հատկապես Միացյալ Նահանգների) և այսօր նաև Ռուսաստանի փորձը վկայում է, որ նման բնույթի գործունեություն, որպես կանոն, ծավալում են, այսպես կոչված, «ուղեղային կենտրոնները», և այս խնդիրներին մենք դեռ կանդրադառնանք նմանատիպ ազգային կենտրոններ ստեղծելու անհրաժեշտության համատեքստում[2]:

Հայության կրոնադավանական խնդիրներին նվիրված սույն գրքում ներկայացված դրույթները և մոտեցումներն իրենց

[1] *Գագիկ Տեր-Հարությունյանց,* Հոգևոր անվտանգությունը որպես ազգային անտանգության բաղադրամաս, «Տարածաշրջան» (հատուկ թողարկում), 2(4), էջ 29, 2005; *Гагик Арутюнян,* Распад «системы» и формирование будущего, Ереван, НОФ «Нораванк», 2011.

[2] *Գագիկ Հարությունյան*, Ուղեղային կենտրոնները և ազգային անվտանգությունը, 21-րդ Դար, #1(35), էջ 3, 2011:

բովանդակությամբ հետևում են կիրառական հայագիտության ոլորտում ձևավորվող նոր ավանդույթներին: Եվ կիրառական հայագիտության քաղաքական համատեքստում պետք է նկատենք, որ ներկա գլոբալ բուռն փոփոխությունները աշխարհաքաղաքական և անգամ աշխարհատնտեսական ոլորտում չեն կարող չանդրադառնալ հայկական պետությանը և ողջ հայկական հանրությանը, հետևաբար՝ նաև մեր ազգային կրոնադավանական խնդիրներին: Սա ընդամենը քաջ հայտնի փաստի ամրագրում է, քանի որ կրոնի, եկեղեցու պատմությունը մշտապես եղել և մնում է համաշխարհային պատմության կարևորագույն բաղադրիչ: Մասնավորապես, հոգևոր–կրոնական ոլորտի պատմությունը նաև պատերազմների պատմություն է, եթե հիշենք, օրինակ, խաչակրաց արշավանքները, որոնց մոդիֆիկացիաները, համաձայն վերլուծաբանների և քաղաքագետների, ընթանում են նաև այսօր:

Մեկ անգամ ևս փաստելով, որ տեղեկատվական հեղափոխության մեր դարաշրջանում ընթացող խոշոր փոփոխություններն անմիջականորեն անդրադառնում են հայկական իրողություններին, փորձենք տալ համառոտ պատասխան այն հարցին, թե ինչ իրավիճակ է տիրում գլոբալ հարթությունում հասարակական, հոգևոր-կրոնական ոլորտում: Ակնհայտ է, որ առանց զարգացած պատկերացումների մեզ շրջապատող աշխարհի վերաբերյալ մեզ խիստ դժվար կլինի ադեկվատ գործել արդի գլոբալացված, փոխկապակցված աշխարհում, որը բավական կոշտ է արձագանքում մեկուսացման միտումներին:

«Պոստսեկուլյար», բայց ըստ էության՝ ոչ այնքան հոգևոր աշխարհ

Ինչպես հայտնի է, ներկայիս դարաշրջանը, արդի հասարակագիտության գրեթե միասնական մոտեցումների համաձայն, համարվում է «պոստսեկուլյար»[1] կամ հետաշխարհիկ: Որ նման ձևակերպումը համընկնում է առկա իրողությունների հետ՝ վկայում է, մասնավորապես, այն փաստը, որ վերջին շրջանում ամեն տարի մոտ 105 հազար քրիստոնյա է զոհվում կրոնական պատկանելության համար, կամ, եթե փոքր-ինչ այլ ձևով հաշվարկենք, ամեն հինգ րոպեն մեկ աշխարհում մի քրիստոնյա է նահատակվում իր հավատքի համար: Հաշվարկված է նաև, որ կրոնական հատկանիշների հիման վրա աշխարհում (հատկապես Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում և Հարավարևելյան Ասիայում, Կենտրոնական և Հարավային Աֆրիկայի երկրներում և Հնդկաստանում) հալածանքների է ենթարկվում մոտ 100 մլն քրիստոնյա: Հալածանքների են ենթարկվում նաև այլ կրոնական հատվածները. բավական է նշել, որ տարեկան մոտ 35 մլն մահմեդականներ և այլ դավանանքների ներկայացուցիչներ ենթարկվում են հալածանքների (բավական է հիշել շիաների և սուննիների միջև երբեմն արյունալի, զանգվածային ահաբեկչությունների տեսք ընդունող հակամարտությունները[2]): Սրանք հավաստի տվյալներ են, որոնք ներկայացվել և քննարկվել են «Դավանանքի ազատություն. քրիստոնյաների

[1] Տե՛ս, օրինակ, *Аркадий Малер,* Постсекулярность или неоязычество? http://www.katehon.ru/html/top/philosophia/postsekularnost_ili_neojazychestvo.htm

[2] «Каждые пять минут в мире за веру умирает христианин», http://www.stoletie.ru/print.php?ID=112136

խտրականության և հետապնդման հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովում: Իզուր չէ, որ ստեղծված բարդ իրավիճակում օրերս Երևանում կայացած ԱՊՀ միջկրոնական խորհրդի նիստի ամփոփիչ փաստաթղթում ամրագրվեց այն ձգտումը, որ 21-րդ դարը պետք է դառնա բարոյականության դար, որի համար առնվազն, աշխարհը պետք է ընդունի և կիրառի այն ունիկալ փորձը, որը պարունակում է ժողովուրդների հոգևոր ավանդույթները[1]:

Այսպիսով, կարելի է փաստել, որ հոգևոր-կրոնական խնդիրները, ի տարբերություն Մոդեռնի դարաշրջանի, վերստին սկսել են առավել կարևորվել 21-րդ դարում: Ունենալով, անշուշտ, նաև դրական բովանդակություն, որոնց մենք դեռ կանդրադառնանք, «պոստսեկուլյար» աշխարհը պարունակում է նաև որոշակի ռիսկեր: Կա, մասնավորապես, երկու վտանգ՝ աշխարհաքաղաքական և հասարակական, որոնց արժե խիստ համառոտ անդրադառնալ:

Պատահական չէ, որ «պոստսեկուլյար դարաշրջանի» սկիզբը փորձագիտական հանրությունն անմիջականորեն կապում է ԽՍՀՄ և սոցիալիստական համակարգի փլուզման ու 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչության հետ: Վերջինս, փաստորեն, պատերազմ ազդարարեց ծայրահեղ իսլամիզմի դեմ, որը միայն պայմանականորեն ստացավ «հակաահաբեկչական պատերազմ» անվանումը, ինչը, սակայն, չէր կարող լիովին սքողել դրա քաղաքակրթական և մասամբ կրոնական ուղղվածությունը: Որպես այդ գլոբալ իրադարձությունների տրամաբանա-

[1] ԱՊՀ միջկրոնական խորհրդի նիստի ամփոփող փաստաթուղթը, http://www.interfax-religion.ru/?act=documents&div=1148

կան շարունակություն պետք է ընդունել նաև այն, ինչն այսօր կատարվում է Նոր Մերձավոր Արևելքում: Մասնավորապես, այդ տարածաշրջանում ընթանում է քաղաքական իսլամի կամ, այլ խոսքերով՝ թեոկրատիկ ռեժիմների վերադարձ: Այդ ուժերն առայժմ շարժվում են՝ օգտագործելով «չափավոր իսլամին» բնորոշ քաղաքական եզրաբանությունը և հռետորաբանությունը: Սակայն նման ռեժիմները, համաձայն մի շարք հիմնավորված կանխատեսումների, որոնք, մասնավորապես, հենված են ներկայիս Թուրքիայում ընթացող իսլամի ռադիկալացման երևույթի ուսումնասիրությունների վրա, ոչ հեռու ապագայում տեղաշարժվելու են դեպի ավելի ծայրահեղ դրսևորումներ՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով[1]:

Հիմնարար աշխատություններում, որոնք կատարել են ամերիկյան և եվրոպական ամենահեղինակավոր «ուղեղային կենտրոնները»՝ ԱՄՆ Ազգային հետախուզական խորհուրդը և ԵՄ Անվտանգության ուսումնասիրությունների ինստիտուտը, ներկայացվում են մոտ ապագայում աշխարհի մասնատման՝ ֆրագմենտացման սցենարները և, մասնավորապես, մեկուսացված Իսլամական աշխարհի ձևավորումը[2]: Այդ միտումներն այսօր հստակ ուրվագծվում են մերձավորարևելյան զարգացումների համատեքստում, և դա անմիջականորեն առնչվում է ոչ միայն մեր հայրենակիցների ճակատագրի, այլև ՀՀ և ԼՂՀ

[1] *Գագիկ Հարությունյան, Սերգեյ Գրինյան,* Հեղափոխություններ. նոր աշխարհակարգի կերտման ավարտը և գլոբալ կառավարման սցենարները. Գլոբուս ազգային անվտանգություն, #2(18) էջ 3, 2011:

[2] Global Governance 2025: At a Critical Juncture. National Intelligense Council, Europian Union Institute for Security Studies, September 2010.
http://www.iss.europa.eu/uploads/media/Global__Governance_2025.pdf.

անվտանգության խնդիրների հետ: Կարելի է վստահաբար փաստել, որ Սամյուել Հանթինգտոնի «քաղաքակրթությունների բախման» հայեցակարգն այսօր նորանոր նյութականացված հիմնավորումներ է ստանում[1]:

Երկրորդ վտանգն այն է, որ հոգևոր, մասնավորապես՝ քրիստոնեական սկզբունքները վերահաստատվում են արդի սպառողական կամ, այսպես կոչված, «կոնսյումերիստական» հասարակարգում, որի գլխավոր դերակատարը ոչ հոգևոր, խիստ նյութականացված մենթալիտետ ունեցող *Homo economicus*-ն է: Այսինքն՝ կրոնադավանական պատկերացումները կարծես ներդրվում են մի սոցիումում, որտեղ ժխտվում են հոգևոր սկզբունքները, ինչը տարաբնույթ և ոչ միշտ դրական գործընթացների տեղիք է տալիս: Շեշտենք, որ բոլոր պարագաներում երևույթն անհրաժեշտ է մեկնաբանել, առաջին հերթին, որպես կոմպենսացիոն մեխանիզմ կամ յուրահատուկ դեղամիջոց, որի առաքելությունն է լցնել ժամանակակից հասարակություններին բնորոշ հոգևոր վակուումը: Սակայն ակնհայտ են նաև այդ ճանապարհին առաջացող դժվարությունները, ինչը հիմք է տալիս ոմանց արդի եվրոպական հասարակությունների նկարագրման համար օգտագործել «հետքրիստոնյա աշխարհ» արտահայտությունը:

Այս ամենին զուգահեռ՝ պետք է նաև հաշվի առնել, որ հոգևոր դասը նույնպես կրում է ժամանակի սպառողական կնիքը: Դա հանգեցնում է նրան, որ արդի «պոստսեկուլյար» գործընթացները երբեմն ընդունում են արարողությունների և ծեսերի բացարձակացման, ձևականության բնույթ, ինչն իր հերթին

[1] *Самюэль Хантингтон,* Столкновение цивилизаций, Москва, Изд-во АСТ, 2003.

հարուցում է կղերականացման գործընթացներ: Նման մոտեցումները նույնքան անթույլատրելի են, որքան և հոգևոր սկզբունքների ժխտումը (այս առիթով հիշենք ինդուլգենցիայի կամ վճարում կատարելու միջոցով «մեղքերի թողություն» ստանալու միջնադարյան նախադեպը): Ստեղծված իրավիճակը որոշ հետազոտողների համար հիմք է ծառայում, որպեսզի այսօրվա «պոստսեկուլյարիզմը» ներկայացվի որպես «նեոհեթանոսություն»: Այդ կղերականացման և «նեոհեթանոսության» դրսևորումները երբեմն հասարակական ընդվզումների առիթ են հանդիսանում: Օրինակ, անգամ Լեհաստանի նման ամուր կաթոլիկ ավանդույթներ ունեցող երկրում 2011թ. խորհրդարանական ընտրություններում մոտ 10% ձայն (40 պատգամավոր) հավաքեց հակակղերական ուղղվածություն ունեցող «Պալիկոտի շարժում» կուսակցությունը[1]:

Այս ամենի առիթով նկատենք, որ ամենևին էլ պատահական չէ, որ տեղեկատվական դաշտում կարելի է հանդիպել այն մտքին, թե տարբեր զվարճալի պատմությունների հերոս *Homo soveticus*-ը (որն, ինչպես գիտենք, եկեղեցի չէր հաճախում, ծեսեր չէր կատարում և չէր հետևում ընդունված արարողություններին) հաճախ էությամբ ավելի հոգևոր ու մոտ էր քրիստոնեական աշխարհայացքին, քան այսօրվա բոլոր ծեսերը պարտաճանաչ կատարող *Homo economicus*-ը:

[1] *Станислав Кувалдин*, Дорога от костела, Эксперт, # 47(780), с. 73, 2011.

«Մուլտիկուլտուրալիզմը», քաղաքակրթական գործոնը և արտաքին ազդեցությունները

Ինչպես հայտնի է, մարդկային գիտակցության կարևորագույն մաս կազմող կրոնական պատկերացումներն ունեն խոր հիմքեր և դժվար են ենթարկվում փոփոխությունների։ Թերևս, այս հանգամանքն է նաև, որ ընկած է Եվրոպայում այսօր խոր ճգնաժամ ապրող մուլտիկուլտուրալիզմի քաղաքականության հենքում[1]։ Այս իրողությունը երբեմն առիթ է հանդիսանում, որպեսզի հայկական հանրությունը նույնպես դիտարկվի մուլտիկուլտուրալիզմի եզրաբանությամբ։ Ի լրումն՝ նկատենք, որ բացի կրոնադավանանքային խնդիրներից, Սփյուռքի հայությանը, կախված բնակության աշխարհագրությունից, բնորոշ են նաև տարբեր աշխարհաքաղաքական կողմնորոշումներ, տարալեզու հատվածներ և այլն։ Սա երբեմն հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ Հայությունը, ըստ Հանթինգտոնի հայեցակարգի, «բզկտված քաաքակրթություն է» և ենթակա է կազմալուծման։

Սակայն պետք է հաշվի առնել, որ եվրոպական և հայկական իրողությունները միմյանցից սկզբունքորեն տարբերվում են։ Եվրոպայի նորաստեղծ, գլխավորապես՝ մահմեդական համայնքներն այլ, ոչ եվրոպական քաղաքակրթության ներկայացուցիչներ են։ Մինչդեռ մեր հանրությունը հանդիսանում է հայկական քաղաքակրթական արժեքների և հատկանիշների, այն է՝ ընդհանրական հայրենիքի (ներկա պարագայում՝ ի դեմս երկու հայկական պետությունների) ուրույն և հարուստ պատմու-

[1] *Эмиль Паин,* Мирное сосуществование XXI века, Россия в глобальной политике, т. 9, #2, с. 8, 2011; *А.И. Тэвдой-Бурмули,* Мультикультурализм: между панацеей и проклятием, Актуальные вопросы Европы, #4, с. 14, 2011.

թյան և մշակույթի կրողը: Այս քաղաքակրթական ընդհանրությունը թույլ է տալիս համոզված լինել, որ մենք ի զորու ենք հաղթահարելու առկա հիմնախնդիրները:

Նկատենք, որ հայկական քաղաքակրթական գործոնը, որպես անվտանգության ռեսուրս, կարևոր դերակատարում ունի նաև պետական գործընթացներում: Հայտնի է, որ հաճախ կրոնական գործոնը, հանրություններում տարադավան հատվածների առկայությունն արտաքին ուժերի կողմից օգտագործվում են որպես քաղաքական ազդեցության լծակ: Նման իրողությունը բազմաթիվ պատմական նախադեպեր ունի, իսկ վերջին ժամանակահատվածում հայտնի դարձան նաև լայնածավալ հատուկ բնույթի գործողություններ այդ ոլորտում, որոնք կիրառվել էին Սառը պատերազմի տարիներին[1]: Նման գործողությունները մեթոդական առումով քիչ են տարբերվում տեղեկատվական պատերազմներում կիրառվող գործողություններից: Հետևաբար, այս հիմնախնդիրները լուծելիս լայնորեն պետք է կիրառվեն նաև տեղեկատվական անվտանգության գործառույթներին բնորոշ միջոցները, որոնցից տվյալ պարագայում, թերևս, ամենաարդյունավետն ազգային հոգևոր ռեսուրսների մրցունակության բարձրացումն է, ինչպես նաև հայկական քաղաքակրթական ընդհանրության գաղափարի ներդրումը հանրության գիտակցությունում:

Միևնույն ժամանակ, հայտնի է, որ ազգային անվտանգության համակարգում մարտահրավերները հաճախ զուգորդվում են հնարավորությունների հետ: Նման մոտեցման դեպքում մեր դավանական-կրոնական առկա տարբերությունները, բացի որոշակի խնդիր լինելուց, պարունակում են զգալի քաղաքական

[1] *Петер Швейцер,* Победа, Минск, 1995.

ներուժ և կարող են լայն գործնական հնարավորություններ ընձեռել: Մասնավորապես, հայ կաթոլիկները մասն են կազմում շուրջ 1 միլիարդ հետևորդ ունեցող կաթոլիկ աշխարհի, որը բավական կենտրոնացված ձևով ղեկավարվում է Վատիկանի կողմից, իսկ վերջինս ոչ միայն հոգևոր, այլ նաև հզոր աշխարհաքաղաքական կենտրոն է: Արևմտյան աշխարհում և հատկապես ԱՄՆ-ում խիստ ազդեցիկ քաղաքական գործոն են տարբեր դավանական ուղղվածություններ ունեցող ավետարանականները, և այս գործոնը, որից, ի դեպ, քաղաքական լոբբինգի առումով օգտվում են մի շարք երկրներ, նույնպես արժանի է լուրջ դիտարկման: Ամենևին չի կարելի բացառել, որ իսլամացված հայերի գործոնը նույնպես կարող է գտնել իր քաղաքական կիրառությունը, և որոշ փորձեր այս ուղղությամբ արդեն իսկ կատարվում են: Նշված հանգամանքները, համապատասխան ռազմավարության պարագայում, կարող են օգտագործվել մեր ազգային շահերին համապատասխան:

Որոշ հետևություններ

Վերը ներկայացված համառոտ նկատառումները վկայում են առնվազն այն բանի մասին, որ արդի կրոնադավանական խնդիրներն արժանի են լուրջ գիտական և վերլուծաբանական ուշադրության: Այս ոլորտում ամենաանարդյունավետ մոտեցումն առկա հարցերի շուրջ լռության կամ ծայրահեղ անհանդուրժողականության մթնոլորտի ձևավորումն է: Անշուշտ, կան խնդիրներ, որոնց վերաբերյալ իրենց խոսքը պետք է ասեն ոչ միայն փորձագետները, այլև պետական կառույցները:

Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ հոգևոր անվտանգության քննարկվող ոլորտի վերաբերյալ պատկերացումները պետք է լինեն հնարավորինս խոր և լայն: Մինչդեռ պետք է ընդունել, որ այսօր նկատվում է և՛ հետազոտողների, և՛ փորձագիտական հրապարակումների, և՛ առավել ևս գործնական՝ նկատի ունենալով առաջին հերթին տեղեկատվական գործողությունները, քայլերի որոշակի պակաս: Վերջիններիս միջոցով պետք է ձգտել հայության տարադավան-տարակրոն հատվածների գիտակցությունում ամրապնդել հայկական քաղաքակրթական ընդհանրության, հայկական պետությունների (ՀՀ, ԼՂՀ) հզորացման անհրաժեշտության գաղափարները: Նկատենք, որ տեղեկատվական գործողությունները բնավ չեն ենթադրում լոկ հռետորաբանություն և պարզունակ քարոզչություն, այլ պահանջում են, առաջին հերթին, համապատասխան ծրագրերի, մարտավարության և ռազմավարության մշակում: Այդ խնդիրների լուծումը ենթադրում է ազգային մտավոր և քաղաքական ռեսուրսների համախմբում, ինչն անհնարին է պատկերացնել առանց մեր տարադավան և տարակրոն ազգակիցների ակտիվ մասնակցության:

Այս ամենի առիթով նկատենք, որ երբեմն կարելի է լսել կարծիքներ, թե նման ծավալի ուսումնասիրություններ կազմակերպելու համար ներկայիս հայկական հետազոտական հանրության ռեսուրսները բավարար չեն, և այդ կարգի հետազոտությունները բնորոշ են խոշոր պետություններին և տերություններին: Անշուշտ, նման հարցադրումը պարունակում է իրատեսական տարրեր: Սակայն այս կամ այն խնդրի հրատապացումը, իր հերթին, հրահրում է անհրաժեշտ մտավոր ռեսուրսների ձևավորման գործընթացը:

2. ՀԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայության խնդիրները կրոնական հարթությունում

Հայ ժողովրդի պատմության ընթացքում քաղաքական, պետական հարցերի կողքին, թերևս, ամենից շատ քննարկված ու վերլուծված խնդիրների շրջանակի մեջ են մտնում կրոնական, եկեղեցական ու աստվածաբանական բնույթի հարցերը: Դեռևս 5-րդ դարում Քաղկեդոնի «տիեզերաժողովի» արդյունքում տեղի ունեցած քաղկեդոնականների ու հակաքաղկեդոնականների բաժանումը պայմանավորեց հետագա ժամանակաշրջանի ոչ միայն եկեղեցակրոնական, այլ նաև քաղաքական կյանքի հետագա ընթացքը: Հետագայում եկեղեցական կյանքում տեղի ունեցած բազմաթիվ այլ բաժանումներն էլ ավելի խորացրին ոչ միայն զուտ եկեղեցական կամ կրոնաղավանաբանական տարբերությունները, այլև պայմանավորեցին ազգերի ու տարբեր էթնիկական խմբերի ինքնության ձևավորման ու տարբերակման գործընթացները: Այս գործընթացներից չէին կարող անմասն մնալ Հայ եկեղեցին և Հայ ժողովուրդը: 1054թ. արևմուտքում տեղի ունեցած Մեծ սխիզմը, իսկ հետագայում՝ ռեֆորմա-

ցիայի դարաշրջանում տեղի ունեցած եկեղեցական պառակտումն ուղղակի ազդեցություն ունեցան նաև հայ իրականության վրա:

Քրիստոնեական տարաբնույթ ուղղությունների ձևավորմանը զուգընթաց, արևմտյան եկեղեցական կառույցները սկսեցին առավել ակտիվ միսիոներական գործունեություն ծավալել հատկապես հայաբնակ շրջաններում՝ զուգահեռ օգտագործելով իսլամական միջավայրի ճնշման ազդեցությամբ պայմանավորված սոցիալ-հոգեբանական վիճակը, ինչպես նաև հայ ազգաբնակչության կրոնական կրթության պակասն ու քաղաքական իշխանության բացակայությունը: Քաղաքական, հասարակական, սոցիալական, կրոնական ու հոգևոր այդ անկայուն վիճակից էլ երբեմն օգտվում էին կաթոլիկ ու բողոքական քարոզիչները, որոնք ժամանակի ընթացքում ակտիվ քարոզչության շնորհիվ կարողացան մեծ թվով հետևորդներ ձեռք բերել հայ ազգաբնակչության շրջանում: Այս իմաստով մտադիր չենք վերլուծել այն պատճառները, որոնց ազդեցությամբ հայության մի ստվար հատված կրոնափոխ եղավ, քանի որ այդ պատճառների վերլուծությունը կարող է խիստ տարբեր լինել՝ ադապտացման հնարավորությունների օգտագործումից մինչև ֆիզիկական ոչնչացման վտանգին դիմակայելու միակ միջոց: Չնայած դրան, պետք է նշել, որ ուշ միջնադարյան եկեղեցական և քաղաքական պատմությունը հեղեղված է օտարերկրյա քարոզիչների մասին վկայող պատմություններով, ինչը հաճախ դիտվել է որպես ազգային միասնականությունը խաթարող և ազգային ինքնությանը սպառնալիք ներկայացնող լուրջ գործոն:

Հայության բազմաշերտությունն առավել խորացավ և ընդլայնվեց հատկապես Մեծ եղեռնից հետո, երբ հայության տարաբնույթ կրոնական շերտերը թողեցին հայրենի տները և ցրվեցին աշխարհով մեկ: Պետք է նկատել, որ այդ ժամանակահատվածում եվրոպական պետությունների ու կրոնաեկեղեցական կառույցների կողմից հայ բողոքականներին ու հայ կաթոլիկներին ցույց տրված ընդգծված վերաբերմունքը շատ դեպքերում էլ ավելի խորացրեց հայ առաքելականների և հայ ավետարանականների ու կաթոլիկների միջև տեղ գտած հակասություններն ու անտագոնիստական վերաբերմունքը[1]:

Ավելին, շատ դեպքերում Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներն ուղղակի մեղադրանքներ էին հնչեցնում այլակրոն հայերի նկատմամբ՝ դրա մեջ տեսնելով իրենց կոտորածների մեղսակիցների: Նման մոտեցումները ոչ միայն չէին նպաստում ազգային միասնականության կայացմանը, այլև առավել էին խորացնում տարաբնույթ կրոնական պատկանելություն ունեցող հայերի միասնական մոտեցումները հայությանը հուզող հարցերին: Ավելորդ է խոսել այստեղ մահմեդականացված հայերի մասին, որոնց հայ լինելն առհասարակ մերժվում էր հայ առաքելականների կողմից, քանի որ ավանդաբար Հայ Առաքելական եկեղեցու հետևորդները միայն իրենց են համարում էթնիկ հայեր, իսկ այլադավանների հայ լինելն ընդհանրապես մերժում էին:

[1] Առաքելական հայերի վերաբերմունքը բողոքական հայերի նկատմամբ առավել մանրամասն տե՛ս *Խառատյան Հ.,* Կրոնի և կրոնական ինստիտուտների հասարակական դերը կամ կրոնականության իրավիճակը Հայաստանում, «Կրոն և հասարակություն» ամսագիր, Ա, Երևան, 2007, էջ 99:

Հայ Առաքելական, Կաթոլիկ ու Ավետարանական եկեղեցիների հետ կապված հարցերում ավելորդ է խոսել կրոնադավանաբանական, կանոնական կամ ծիսական հարցերի վերաբերյալ, քանի որ եկեղեցիների միջև առկա տարբերությունները ոչ միայն մշտապես գոյություն են ունեցել, այլև իրենց տարբեր լինելու փաստով պայմանավորել են հայության նկատմամբ դիվերսիֆիկացված մոտեցումների բազմազանությունը: Չնայած կրոնական տարբերություններին, պետք է նշել, որ նշված եկեղեցիներն ունեն նաև կրոնադավանաբանական նմանություններ՝ կապված առաջին երեք Տիեզերաժողովների որոշումների ընդունման հետ (Նիկեա - 325թ., Կոստանդնուպոլիս - 381թ., Եփեսոս - 431թ.), ինչը հաճախ անտեսվում կամ էլ ստորադասվում է հետագա դարերում շարունակ խորացող տարբերություններին ու հակասություններին: Մյուս կողմից՝ կրոնական հարցերի արծարծումը կարող է միայն շինծու խնդիր հանդիսանալ և չի արտահայտում եկեղեցիների միջև առկա հարաբերությունների բնույթն ու դուրս է հայ ժողովրդին հուզող էական հարցերի համատեքստից: Ավելորդ չէ նշել նաև, որ Հայաստանի տարածքում բնակվող հայ կաթոլիկներից շատերը «ժառանգական կրոնական ինքնությամբ են կաթոլիկ, քան հավատքով»[1]: Նրանցից շատերը պատկերացում չունեն իրենց «ֆրանկ» անվանման իմաստաբանական արմատների մասին, Հայ եկեղեցու հետ դավանանքային հակասությունների ընկալում չունեն, իսկ հոգևոր պահանջների բավարարման համար հանգիստ դիմում են Հայ Առաքելական եկեղեցու հոգևորականների օգ-

[1] Նույն տեղում, էջ 95:

նությանը: Մյուս կողմից էլ՝ պետք է նշել, որ հայ ավետարանականներին հասարակության մեջ անվանել են «ընգլիզ»:

Այլ է խնդիրը հայ ավետարանականների պարագայում, որոնք արևմուտքից ստացած աջակցության շնորհիվ էլ առավել խորացրին իրենց հետևորդների կրոնական պատկանելության գիտակցումը՝ դրանով ուժեղացնելով կրոնական ինքնության դրսևորումները: Այս տեսանկյունից հոդվածում հիմնական շեշտադրում է կատարվելու ոչ թե կրոնական տարբերությունների կամ նմանությունների, այլ Սփյուռքում և Հայաստանի Հանրապետությունում ապրող հայ ժողովրդի ազգային միասնականության, ինքնության արժևորման, միասնական գործողություններ մշակելու, ազգային խնդիրներին միասնաբար արձագանքելու, համաշխարհային ու տեղական մարտահրավերներին արագ արձագանքելու և ազգային ճակատ կազմելու առումով: Այս տեսանկյունից տեղին է նկատում քաղաքագիտության դոկտոր Հայկ Քոթանջյանը՝ նշելով. «ՀՀ-ի և Սփյուռքի միջև հարաբերությունները շարունակում են դժվարություններ կրել՝ կապված Համաշխարհային հայության գլխավոր համակարգաստեղծ տարրերի՝ Ազգային պետության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի միջև արդյունավետ փոխշահագրգիռ մոդելի ձևավորման անհրաժեշտությունը չհասկանալու հետ»:

Հայ ինքնության խնդիրների շոշափումը կրոնական հարթությունում

Ֆրեդերիկ Բարթն իր «Էթնիկ խմբերն ու սահմանները» աշխատության մեջ նոր մոտեցումներ է առաջ քաշում խմբային ինքնությունների համար և նախանշում այդ ինքնությունների սահ-

մանները[1]: Հայ Առաքելական[2], Կաթոլիկ և Ավետարանական[3] եկեղեցիները յուրօրինակ խմբեր են ներկայացնում, որոնք ունեն իրենց բնորոշ ինքնությունը և դրանով իրենց առանձնացնում են այլ խմբերից, այդ թվում նաև հայ ժողովրդի այլ հատված ներկայացնող եկեղեցիներից: Մյուս կողմից՝ հայության կրոնական այս խմբերը ժամանակի ընթացքում ենթարկվել են տարբեր քաղաքական, տնտեսական, մշակութային ազդեցությունների, ինչն էլ հաճախ պայմանավորել է նրանց խմբերի սահմաններն ու ինքնության առանձնահատկությունները:

Գոյություն ունենալով աշխարհի տարբեր հատվածներում և մշակութային համակարգերում՝ հայության կրոնական խմբերը ձևավորել են «բազմակի ինքնություններ», որով նրանք հնարավորություն են ստացել առավել ադապտատիվ մեխանիզմներ մշակել ու ապահովել իրենց կենսաբանական գոյությունը:

[1] *Frederik Barth,* Ethnic Groups and Boundaries. The Social Organization of Culture difference, Bergen. Oslo: Universitets Forlaget, London: George Allen & Unwin, 1969, p. 9-35.

[2] Հայ Առաքելական եկեղեցին հանդես է գալիս 4 ինքնանկախ կենտրոններով՝ ի դեմս Էջմիածնի և Կիլիկիայի կաթողիկոսությունների, Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսի պատրիարքությունների: Չնայած այս տարաբաժանվածությանը, Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների ինքնության գործում մեծ դեր է ունեցել ոչ թե կրոնական, այլ կուսակցական գործոնը: Այս տեսանկյունից, օրինակ, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության գործունեության ու հարաբերությունների կարգավորման գործում էական դերակատարում է ունեցել Հայ հեղափոխական դաշնակցությունը, որի գործունեությունն էլ հենց ձևավորել է Կիլիկիո կաթողիկոսության իրավասության ներքո գտնվող հայերի ինքնության առանձնահատկությունը (այս մասին առավել մանրամասն տե՛ս *Հովհաննիսյան Հ.,* Մայր աթոռ Ս.Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության 20-րդ դարի երկրորդ կեսի հարաբերությունների վերլուծության փորձ, Տարեգիրք Գ, Երևան, 2008թ., էջ 316-338):

[3] Խնդիրն առավել բարդ է Հայ Ավետարանական եկեղեցու պարագայում, քանի որ այստեղ բացակայում է միասնական եկեղեցական համակարգը, և հայ ավետարանականությունը կամ հայ բողոքականությունը ներկայանում է բազմազան եկեղեցիներով ու տարատեսակ անվանումներով: Այս հոդվածում Հայ Ավետարանական եկեղեցի ասելով նկատի ենք ունեցել Հայաստանի Հանրապետությունում գրանցված եկեղեցին:

Առաքելական, կաթոլիկ կամ ավետարանական հայի ինքնության կարևոր բաղադրիչների շարքում է էթնիկ ծագումը կամ էթնիկ պատկանելությունը, որը, հնարավոր է, տարբեր քաղաքական ու այլ պատճառների բերումով թաքցվի կամ էլ, բարենպաստ պայմանների բացակայության պատճառով, բավական երկար ժամանակ որևէ կերպ չդրսևորվի:

Հայության տարբեր շերտերի կրոնական պատկանելության խնդիրը հնարավոր է հաղթահարել միայն ինքնության բաղադրիչների մեջ կրոնականի ստորադասմամբ ազգային կամ էթնիկական բաղադրիչին, երբ խնդիր դրվի «ներառման» ռազմավարությամբ իրագործել հայության տարբեր հատվածների մոբիլիզացիա: Մոբիլիզացիան պետք է տեղի ունենա Հայաստանի իշխանությունների ուղղակի միջամտության արդյունքում, երբ ընդհանուր նպատակի իրագործումը կամ ընդհանուր խնդիրների լուծումն առաջին պլան կմղի առաքելական, կաթոլիկ կամ ավետարանական հայի ոչ թե կրոնական պատկանելության հարցը, այլ հայ լինելու ինքնության առաջնահերթությունը:

Ընդհանուր նպատակների հետապնդումը և ընդհանուր խնդիրների լուծումը կարող են հանգեցնել այնպիսի մեխանիզմների մշակմանն ու ընդունմանը, որոնք ոչ միայն երկրորդային պլան կմղեն Հայ Առաքելական, Կաթոլիկ ու Ավետարանական եկեղեցիների համագործակցությունը տարբեր մակարդակների վրա, այլև հնարավորություններ կստեղծեն նրանց կողմից համատեղ մարմիններ ստեղծելու և արդյունավետ հայանպաստ ծրագրեր իրագործելու համար: Համատեղ ծրագրերի շարունակական իրագործումն աստիճանաբար կստորադասի նրանց կրոնական ինքնությունն ազգային ինքնությանը և վեր կկանգնի

նրանց հավատքային տարբերություններից: Կրոնական ինքնության ստորադասումը էթնիկական ինքնությանը բավական դժվար է հատկապես ավետարանական եկեղեցու հետևորդների պարագայում, քանի որ նրանց մեծամասնությունը մերժում է կրոնական ու էթնիկական ինքնության կապը և առաջնային համարում կրոնական պատկանելությունը:

Հայության կրոնական ինքնության մասին խոսելիս անհրաժեշտ է նշել նաև լոկալ ինքնությունների խնդիրը, որովհետև հնարավոր չէ Հայ Առաքելական, Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական ավանդական եկեղեցիների հետևորդների ինքնությունների խնդիրը դիտարկել միասնական հայեցակարգերի տեսանկյունից, քանի որ տեղանքից կախված՝ փոխվում են նաև նրանց ինքնությունների բնույթն ու բաղկացուցիչները: Այս իմաստով հայաստանաբնակներին անհրաժեշտ է դիտարկել որպես առանձին միավոր, իսկ սփյուռքահայերի խնդիրները՝ բազմափուլ դիվերսիֆիկացման տեսանկյունից: Մյուս կողմից՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ավանդական հայկական եկեղեցիների միջև երկխոսության սկզբնավորումը պետք է բխի հասարակական և ոչ թե նեղ անձնական, նույնիսկ եկեղեցական շահերից, քանի որ ժամանակակից աշխարհում առաջնային պետք է համարվեն հասարակական պահանջներն ու ներքևից եկած ազդակները:

Այս տեսանկյունից չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ ժամանակակից աշխարհն ակտիվորեն թևակոխել է սեկուլյարիզմի ու հետսեկուլյարիզմի փուլ, ինչը բավական ցայտուն երևում է Հայաստանի Հանրապետությունում կրոնականի և աշխարհիկի փոխհարաբերության իմաստով: Սփյուռքի հայ-

կական գաղթօջախներում և Հայաստանում այս փուլերը դրսևորվում են տարբեր ձևերով, որի պատճառով էլ կրոնական կամ եկեղեցական երկխոսությունը պետք է իրագործվի աշխարհիկի մասնակցության ճանապարհով: Այլ կերպ ասած՝ Հայաստանի իշխանությունները ոչ կրոնական մոտեցումների դիրքերից պետք է փորձեն նպաստավոր դաշտ ստեղծել Հայ Առաքելական, Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական եկեղեցիների երկխոսության ու հայակենտրոն և հայանպաստ համատեղ գործունեություն ծավալելու համար:

Հայ եկեղեցական տարբեր կառույցների ու դրա միջոցով նաև հայության տարբեր հատվածների միջև երկխոսություն սկսելու և հայակենտրոն գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ ենք համարում մեջբերել հայտնի աստվածաբան Պաուլ Թիլիխի ձևակերպած սկզբունքները միջկրոնական երկխոսության վերաբերյալ, համաձայն որոնց երկխոսության մասնակիցները ընդունում են մյուս կողմերի կրոնական գաղափարների արժեքը, որով և ընդգծում են երկխոսության անհրաժեշտությունը: Մյուս կողմից՝ երկխոսության մասնակիցը կարող է պնդել իր կրոնական հայացքները, ինչը ենթադրում կարծիքների հակադրություն, և միևնույն ժամանակ, անհրաժեշտ են ընդհանրություններ ինչպես երկխոսության, այնպես էլ հակադրության համար: Եվ վերջապես, կողմերը պետք է բաց լինեն սեփական կրոնական հիմքերը քննադատելու համար[1]:

Պետք է նկատել, որ Թիլիխի առաջադրած վերջին պահանջը բավական բարդ է իրագործել հայ եկեղեցական կենտրոննե-

[1] Մանրամասն տե՛ս *П.Тиллих,* Христианство и встреча мировых религий // Теология культуры, М., 1995, с. 425.

րի հետ կապված, քանի որ դրանցից յուրաքանչյուրը վստահ է ու հավատացած սեփական սկզբունքների ճշմարտացիության մեջ: Կարծում ենք, որ «թիլիխյան պլատֆորմի» մյուս սկզբունքները կարող են կիրառելի լինել Հայ Առաքելական, Կաթոլիկ և Ավետարանական եկեղեցիների միջև երկխոսության դաշտ ձևավորելու և մշտական գործող մարմին ստեղծելու համար: Այս տեսանկյունից բոլոր երեք եկեղեցական կառույցներին միավորող կարող է հանդիսանալ նրանց անվանման մեջ առկա «հայ» մասնիկի բովանդակային կողմը, քանի որ նրանք բոլորն էլ կոչված են ծառայելու հայության միասնական շահին՝ լինի ընդհանրական, տեղական, հասարակական, թե պետական: Մյուս կողմից՝ պետք է նշել, որ բացի վերկրոնական նույնություններից ու ընդհանրություններից, եկեղեցական կառույցներն ունեն նաև ոչ պակաս կարևորություն ունեցող ծիսական, կանոնական, նաև դավանաբանական (օր.՝ երրորդության դոգման) նմանություններ, ինչը կարելի է շեշտադրել երկխոսության ցանկության, կամքի ու հայակենտրոն գործողություններ իրագործելու պարագայում: Ավելորդ չէ նշել նաև, որ երկխոսության կամքի ու «լատենտ կոնֆլիկտից» դուրս գալու ցանկության առկայության դեպքում անհրաժեշտ է այն ինստիտուցիոնալացնել և եկեղեցիների ղեկավարների մշտական հանդիպումների մակարդակից իջեցնել դեպի հավատացյալների լայն շերտեր, մեծացնել անհատական շփումն ու փոխհարաբերությունները, անհրաժեշտության դեպքում հրատարակել շրջաբերական ուղերձներ և այլն:

Հայաստանի տարածքում ավանդականորեն հեգեմոն դիրքեր է ունեցել Հայ Առաքելական եկեղեցին, որն այլակրոնու-

թյունը կամ կրոնական այլախոհությունը համարում էր ազգապահպանությանը և ազգային միասնությանը վնասող գործոն: Հետաքրքրական է, որ այլակրոնների դեմ հակափաստարկներ բերելու ժամանակ Հայ Առաքելական եկեղեցին օգտագործում է ոչ թե դավանանքային ու կրոնական, այլ միայն ազգային փաստարկներ: Մյուս կողմից՝ պետք է նշել, որ հայկական Սփյուռքի ձևավորումից հետո Հայ Կաթոլիկ ու Ավետարանական եկեղեցիները բավական մեծ դեր ունեցան հայապահպանության գործում և դրանով հանդերձ նպաստեցին Սփյուռքում նոր իրողությունների ձևավորմանը: Նշենք միայն, որ կաթոլիկ Մխիթարյան միաբանությունը 18-րդ դարից սկսած՝ անգնահատելի դեր կատարեց հայագիտության զարգացման ու հայապահպանության գործում, իսկ Հայ Ավետարանական եկեղեցու պարագայում կարելի է նշել ավետարանական Հրանտ Դինքի գործունեությունը և ողբերգական վախճանը ժամանակակից Թուրքիայում, ով հսկայական դեր ունեցավ ժամանակակից թուրքական հասարակության մեջ հայության խնդիրների վերհանման ու հայակենտրոն դիսկուրս ձևավորելու գործում:

Մեծ եղեռնի հիշողությունը և պատմական արդարության վերականգնումը, Հրանտ Դինքի կերպարը՝ կրոնական միասնականության գրավական

1915թ. Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած Մեծ եղեռնը և դրա հետևանքով ձևավորված հայկական Սփյուռքը մինչև օրս միասնաբար շարունակում է պայքարը հանուն պատմական ճշմարտության վերականգնման: Յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին, անկախ կրոնական ու քաղաքական պատկանելությունից,

Սփյուռքի և Հայաստանի հայությունը ոտքի է ելնում՝ բողոքի ձայն բարձրացնելու Թուրքիայում տեղի ունեցած մեծ ողբերգության կապակցությամբ: Հայ դատի արդարացի լուծումն այն եզակի հարցերից մեկն է, երբ հայ ժողովուրդը մի կողմ է դնում կրոնական տարաձայնությունները և փորձում միասնական ճակատով հանդես գալ ընդհանուր հակառակորդի դեմ: Արդարության դեմ չմեղանչելու համար պետք է նշել, որ կրոնական տարբերություններն ու հակասությունները մի կողմ դրվեցին նաև 1988թ. Սպիտակի երկրաշարժի ժամանակ, երբ ողջ հայությունը միասնաբար ոտքի ելավ աղետի հետևանքները վերացնելու համար: Ցավոք, այս ընդհանրությունն ու միասնականությունը դրսևորվում են միայն Ցեղասպանության կամ էլ դժբախտ իրողությունների հետ կապված միջոցառումների ժամանակ, բայց ոչ երբեք Հայաստանի անկախության կամ Սահմանադրության, կամ էլ որևէ այլ տոնախմբության առնչությամբ:

Հարկ ենք համարում նշել, որ ժամանակակից աշխարհում հայկական միջավայրում վերացել են նախկինում հաճախ հանդիպող սահմանափակությունները կրոնական հողի վրա, երբ առաքելական հայերը չէին ամուսնանում կաթոլիկների կամ ավետարանականների հետ և ընդհակառակը[1]: Տեղեկատվական աշխարհի կանոններն արդեն վերացրել են նախկինում գոյու-

[1] Տե՛ս նմանատիպ իրավիճակի վերլուծությունը Ջավախքում. *Միմավորյան Արեստակես, Հովյան Վահրամ*, Ջավախահայության որոշ հիմնախնդիրներ, Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2009, էջ 41: Հետաքրքրական է նաև ցարական կառավարության ժամանակ հայ առաքելականների որդեգրած բացասական վերաբերմունքը ռուս ուղղափառ ոստիկանին աղջիկ կնության տված ընտանիքի նկատմամբ: *Հովհաննիսյան Հ.,* Հայ Առաքելական եկեղեցու բարենորոգության հիմնահարցը 1901-1906թթ., Երևան, 2008, էջ 46:

թյուն ունեցող սահմանափակումներն ու ստիպել ժամանակակից մարդուն հրաժարվել արխայիկ մեթոդներից և առաջնորդվել նոր կանոններով: Ցավոք, այդ սահմանափակումները վերացրել են ոչ միայն կրոնական, այլ նաև էթնիկական սահմանները, ինչի արդյունքում օտար միջավայրում հայերը հաճախ ամուսնանում են այլազգիների հետ և միջավայրի ազդեցության տակ, հատկապես քրիստոնեական միջավայրում, ձուլվում տեղական մշակույթին ու կորցնում էթնիկ ինքնությունը: Չնայած վերոնշյալ հանգամանքին, չենք կարող չնշել ժամանակակից Թուրքիայում ծպտյալ հայերի շրջանում տեղի ունեցող ներքին ամուսնությունների մասին, որոնք նպատակ են հետապնդում անաղարտ պահել հայի էթնիկ նկարագիրը՝ ելնելով թաքնված էթնիկ ինքնագիտակցությունից, միևնույն ժամանակ՝ արտաքուստ ներկայանալով իբրև մուսուլմաններ[1]: Այս տեսանկյունից հարկ ենք համարում նշել, որ, չնայած տեղեկատվական դարաշրջանի առաջադրած պայմաններին, ժամանակակից աշխարհում տարբեր ձևերով փորձ է կատարվում պահպանել հայկական ինքնությունը, ինչը լայն հնարավորություններ է ստեղծում նոր գաղափարների ու մոտեցումների շուրջ համախմբվելու համար, որոնցից առաջնայինն ու ամենահիմնականը «Հայաստանի Հանրապետություն» գաղափարի շուրջ համախմբվելու հրամայականն է:

Այս տեսանկյունից նպատակահարմար ենք գտնում վերլուծել Սփյուռքի կաթոլիկ և ավետարանական մամուլում տեղ գտած հայացքները, որոնք վերաբերում են Հայաստանին ու

[1] Մանրամասն տե՛ս *Մելքոնյան Ռ.,* Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, Երևան, 2009, էջ 36-43:

Ցեղասպանության հիշողությանը: Վերջին շրջանում Սփյուռքի տարբեր կենտրոններում բուռն քննարկման առարկա դարձավ ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի առաջարկած երկպալատ խորհրդարանի գաղափարը շրջանառության մեջ դնելու և սփյուռքահայերին ներհայաստանյան կյանքին առավել գործուն ներգրավելու հարցը, ինչը ոչ միանշանակ ընդունվեց սփյուռքահայերի կողմից[1]: Այս տեսանկյունից հետաքրքրական է, որ ներհայաստանյան իրողության մասին խոսելիս մի կողմ են դրվել բոլոր տեսակի կրոնական տարբերությունները, խնդիրը դիտարկվել է առավելապես քաղաքական կամ հայաստանակենտրոն լուծումներ գտնելու տեսանկյունից, ինչը, կարծում ենք, լավ նախադեպ է սկսված գործընթացին շարունակականություն հաղորդելու համար:

Մյուս կողմից՝ Սփյուռքի հայկական եկեղեցական կառույցները միավեկտոր քաղաքականություն են իրականացնում Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ, քանի որ հայ լինելու հավատամքն ուղղակիորեն կապվում է Հայ դատի արդարացի լուծման պահանջի հետ՝ անկախ կրոնական ու քաղաքական պատկանելությունից: Ավելորդ չենք համարում հիշատակել նաև, որ թե՛ Հայ Առաքելական, թե՛ Հայ Կաթոլիկ և թե՛ Հայ Ավետարանական եկեղեցիները բազմաթիվ նահատակներ ու զոհեր ունեցան հավատացյալների ու հոգևորականության շրջանում: Չնայած Մխիթարյան միաբանության կենտրոնը գտնվում էր Եվրոպայում, սակայն Եղեռնի ժամանակաշրջանում Մխիթարյաններն իրենց կենտրոններն ունեին Մուշում, Տրապիզոնում, Իզմիտում և Պարտիզակում, որտեղ էլ գործող Մխիթարյանները զոհ

[1] Տե՛ս «Մասիս», մարտ 2011, 6-8:

գնացին թուրքական յաթաղանին: Մեծաթիվ զոհեր տվեց նաև Զմմառի Հայ Կաթոլիկ եկեղեցին, որոնցից որևէ մեկը չուրացավ իր հայկականությունը և քրիստոնեական հավատքը[1]:

Մեծաթիվ էին զոհերը Հայ Առաքելական ու Ավետարանական եկեղեցիների նվիրապետների շարքերում, որոնք զոհ գնացին իրենց ազգային ու կրոնական ինքնությանը պատկանելության և այդ ինքնությունը չուրանալու պատճառով: Այս տեսանկյունից պետք է նշել, որ բողոքական հայերն աշխարհի տարբեր երկրներում բավականաչափ աշխատանք են տարել ու տանում Հայության խնդիրների վերհանման ու ազգապահպանության խնդրի լուծման ուղղությամբ:

Ցեղասպանության հիշողության և նրա զոհերի մասին կարելի է անվերջ խոսել, սակայն մենք կանդրադառնանք այդ հիշողության շուրջ ժամանակակից պայմաններում և մեթոդներով հայակենտրոն պատկերացումները խորացնելուն և հայաստանակենտրոն ինքնությունն արմատավորելուն: Պետք է նշել, որ այս ինքնության արմատավորումն ուղղակիորեն կապված է Հայաստանի վերաբերյալ Սփյուռքում առկա պատկերացումների հետ, որոնք ոչ միշտ են դրական՝ պայմանավորված բազմաթիվ սփյուռքահայերի բացասական փորձառությամբ: Այս իմաստով Ցեղասպանությունից տուժած հայ ավանդական եկեղեցիները չպետք է կենտրոնանան անցյալի ծանր հիշողությունների վրա, այլ փորձեն պատմական դասերի շնորհիվ ակտիվ երկխոսություն սկսել միմյանց հետ ու համատեղ գործողությունների ծրագրեր մշակել հայկական ինքնությունը պահպանելու, հայապահպանությունը խորացնելու և Հայաստանի հզո-

[1] Մանրամասն տե՛ս «Մասիս», ապրիլ 2011, 22-30:

բացմանն ու զարգացմանը նպաստող ծրագրերին առավել լուրջ մասնակցություն ունենալու իմաստով: Հայ ավանդական եկեղեցիները համատեղ պետք է կարողանան ներկայացնել յուրատեսակ հանրային պլատֆորմ, որի խորհուրդները, քննադատությունները կարող են օգտակար լինել համատեղ խնդիրների լուծմանը նպաստելու տեսանկյունից:

Այս իմաստով ավելորդ չէ նշել պոլսահայ համայնքում տիրող իրավիճակը Հրանտ Դինքի ակտիվ գործողությունների շնորհիվ, երբ հայ եկեղեցական կառույցները հաճախ մի կողմ էին դնում իրենց տարբերությունները և նպաստում համատեղ ծրագրերի իրականացմանը: Հրանտ Դինքի սպանությունից հետո բազմաթիվ խոսակցություններ հրապարակ եկան նրա ավետարանական լինելու փաստի վերաբերյալ, ինչը տարաբնույթ կարծիքների ու մեկնաբանությունների տեղիք տվեց թե՛ հասարակական շրջանակներում և թե՛ մամուլում: Այդ խոսակցություններն էլ ավելի սրվեցին, երբ մամուլում տեղեկություններ հայտնվեցին Հայ Ավետարանական եկեղեցու առաջնորդ, վերապատվելի Ռընե Լևոնյանի հայտարարության կապակցությամբ, համաձայն որի՝ Հրանտ Դինքն ավետարանական եկեղեցու անդամ էր[1]:

Չնայած Հրանտ Դինքը սովորել է հայ բողոքական վարժարանում, այնուամենայնիվ, պետք է նշել, որ նրա համար կրոնական պատկանելության կամ ինքնության հարցերն էական կամ վճռորոշ նշանակություն չեն ունեցել՝ ի տարբերություն ազգային հարցերի կամ համայնքին հուզող վերկրոնական խնդիրների: Այս իմաստով ավելորդ չենք համարում նշել նաև այն հանգամանքը, որ Հրանտ Դինքի սպանության հետ կապված՝ թուրքա-

[1] Տե՛ս «Ազգ» օրաթերթ, 22/02/2007; http://azg.am/AM/2007022202:

կան կառավարության կողմից վճարված փոխհատուցման գումարը բաժանվեց երեք մասի. մի մասը՝ Հրանտ Դինքի անվան կրթաթոշակի ֆոնդին, մյուսը մասը՝ Ստամբուլում գործող հայկական Կենտրոնական վարժարանին, երրորդը՝ Գետիկփաշայի Հայ Ավետարանական եկեղեցուն՝ Թուրքիայում բնակվող հայաստանցի գաղթականների երեխաների ուսումն ապահովելու համար: Այս հանգամանքը հետաքրքրական է այն տեսանկյունից, որ նույնիսկ մահվանից հետո Հրանտ Դինքը շարունակում էր վեր մնալ կրոնական պատկանելության առաջնահերթությունից՝ առաջին պլանի վրա դնելով իր հայ լինելու և Հայությանն ու Հայաստանին օգտակար լինելու հանգամանքը:

Հարկ է նշել նաև, որ «Ակօս» շաբաթաթերթը ևս երբևէ իր էջերում առաջնայնություն չի տվել կրոնական պատկանելությանը, կամ՝ մարդուն չի դիտարկել այդ տեսանկյունից, ինչում հստակորեն երևում են Դինքի մտածողությունն ու դիրքորոշումը կրոնական ինքնության հարցերում: Հրանտ Դինքի անձի շեշտադրումն այս համատեքստում կարևոր է նրանով, որ Հայության խնդիրներով մտահոգ իրական հայերի համար չպետք է նշանակություն ունենա այն հանգամանքը, թե ինքը որ եկեղեցու կամ կրոնական հարանվանության անդամ է, այլ Դինքի նման մի կողմ թողնելով կրոնական ինքնության հարցերը՝ զբաղվի առավելապես և առաջնահերթորեն ազգային ու ազգապահպան հարցերի վերհանմամբ ու լուծմամբ:

Հայաստանի Հանրապետությունն իբրև վերկրոնական իրականություն

Հայ հասարակական, ազգային և քաղաքական դիսկուրսին միանգամայն նոր որակ ու բովանդակություն հաղորդեց ԱՄՆ-ում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությունն ազգային և կրոնական պատկանելության սահմանների կամ, ավելի ճիշտ կլինի ասել, սահմանների կոտրման մասին: Այս հայտարարությունից հետո սկսեց ակտիվորեն քննարկվել հայի ինքնության բաղադրիչների ամբողջությունը, որտեղ ավանդականորեն հայ լինելը նույնացվում էր Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ լինելու հետ, իսկ հակառակ դեպքում շրջանառվում էր «դավաճան հայի» կամ «ազգի դավաճանի» մոտեցումը: Նման մոտեցումը ժամանակակից աշխարհում հղի է լուրջ անհանդուրժողականության վտանգներով, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ էթնիկապես հայերի կրոնական կառույցների միջև երկխոսություն սկսելու առումով: Չնայած այս հանգամանքին, Հայ Առաքելական եկեղեցու բազմաթիվ նվիրապետներ տարբեր հարցազրույցներում շարունակում են պնդել ազգային ու կրոնական նույնությունը, ինչը ոչ միայն հակասում է ՀՀ նախագահի նախանշած ուղենիշերին, այլ նաև վտանգում է Սփյուռքի հայկական կառույցների միասնականությանը և հայապահպանության գործընթացին: Այս տեսանկյունից պետք է նշել, որ գիտական դիսկուրսում ևս վերջին շրջանում կարելի է հաճախ հանդիպել «հայրենասեր-ազգի դավաճան» եկեղեցական մոտեցման, ինչպես նաև պետական միասնականությանը խանգարող կրոնական ու էթնիկական ինքնությունների նույ-

նացման քննադատությունների, որոնք էլ հիմնական խոչընդոտ են համարվում բազմակարծության ու կրոնական երկխոսության ճանապարհին[1]:

Այս իմաստով Հայաստանում և հանուն հայ ժողովրդի միասնականության գործառող բոլոր եկեղեցիները պետք է առաջին պլան մղեն ոչ թե հավատքային տարբերությունները, այլ նույն ազգային ինքնագիտակցությունը, նույն պատմության ու ճակատագրի ժառանգորդները լինելու հրամայականը, որի շրջանակներում էլ պետք է Հայ ավանդական եկեղեցիների միջից ու փոխադարձ հարաբերություններից վերանային անհանդուրժողականությունն ու փոխադարձ մեղադրանքներ հնչեցնելու արատավոր պրակտիկան: Ազգային ինքնագիտակցության հետ կապված՝ բավական բնորոշ են հայ մեծ վիպասան Րաֆֆու գաղափարներն ու վկայությունները, համաձայն որոնց՝ բողոքական հայերը մեծ դեր են կատարել Դերսիմի հայերի մեջ քրիստոնեություն քարոզելու և հայերին դեպի իրենց ազգային արմատները վերադարձնելու ուղղությամբ: Դրան զուգահեռ, նա նշում է նաև, որ ազգային ինքնության կարևոր բաղադրիչն է ազգային ինքնագիտակցությունը. «...դավանությունների բազմատեսակությունը չէ ոչնչացնում ազգային միությունը – միությունը պետք է որոնել այդ մասների ներդաշնակության մեջ, որի հիմնական մոթիվը պետք է լինի ազգայնությունն իր բարձր նշանակությամբ»[2]: Ազգային միասնության գործը հնարավոր չէ

[1] Տե՛ս *Սարգսյան Մ.,* Անհանդուրժողականությունը և ներքին համերաշխության ձեռքբերման խնդիրը հայաստանյան հասարակության մեջ, «Կրոն և հասարակություն» ամսագիր, N. 3, ապրիլ, 2008, էջ 5-19:

[2] Մեջբերումն ըստ *Հովյան Վ.,* Բողոքական հայերը՝ տարադավան հայության շերտ, *Ռաֆֆի,* Ի՞նչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ, http://www.eanc.net/EANC/library/Fiction/Original/Raffi/Essays_9.htm?page=31&interface_language=en

պատկերացնել առանց Հայաստանի բարձրագույն իշխանությունների հովանու, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու՝ այլակրոնների նկատմամբ որոշակի հանդուրժողական քաղաքականության, որը կհանգեցնի կրոնական երկխոսության և ազգային միասնական ծրագրերի իրագործման:

Վերոնշյալի արդյունքում՝ կարծում ենք, որ հետևյալ դրույթների իրագործումը հիմք կհանդիսանա նշված նպատակներին հասնելու համար.

- Հայաստանի Հանրապետության հզորացման ու բարգավաճման տեսլականը պետք է հիմք հանդիսանա Հայ Առաքելական, Կաթոլիկ և Ավետարանական եկեղեցիների համագործակցության ու համատեղ պլատֆորմի ձևավորման համար:
- Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանության, Արցախի խնդրի արդարացի լուծման, Արցախի քաղաքական, ռազմական, տնտեսական անվտանգության հզորացման նպատակով ավանդական հայ եկեղեցական կառույցները պետք է մի կողմ թողնեն տարաձայնությունները և լծվեն հայրենանպաստ այս գործին:
- Ճանաչելով միմյանց կրոնադավանաբանական և եկեղեցական տարբերությունները՝ Հայ Առաքելական, Կաթոլիկ և Ավետարանական եկեղեցիները պետք է մշտապես երկխոսության մեջ գտնվեն իրար հետ՝ Հայաստանի Հանրապետության շահը հետապնդելու և Հայության խնդիրները համատեղ լուծելու նպատակով, քանի որ ավանդական հայկական եկեղեցական կառույցներն ունեն միևնույն էթ-

նիկական բաղադրիչը և միևնույն մշակութային ու պատմական ժառանգությունը:

- Հայ Առաքելական, Ավետարանական և Կաթոլիկ եկեղեցիները Սփյուռքի տարբեր կենտրոններում պետք է ստեղծեն համատեղ պլատֆորմներ, որոնք պետք է ենթարկվեն եկեղեցիների գլուխներից կազմված համատեղ էկումենիկ խորհրդին, որը կգործի Հայաստանի Հանրապետության նախագահի հովանու ներքո և համատեղ գործողություններ կիրականացնի Հայաստանում տոների ժամանակ և Հայությանը հուզող միջոցառումների կազմակերպման առումով:
- Սփյուռքում գործող հայկական ավանդական եկեղեցիները պետք է համատեղ ռազմավարական և գործողությունների ծրագրեր մշակեն հայապահպանության ուղղությամբ, քանի որ եկեղեցական համայնքների միջև առկա հակասություններն ու տարաձայնությունները ոչ միայն չեն նպաստում, այլև իրական սպառնալիքներին ավելացնում են նորերը (իբրև օրինակ կարելի է մեջբերել Ջավախքում գործող Հայ Առաքելական և Հայ Կաթոլիկ եկեղեցիների բնական համագործակցությունը):
- Հայ ավանդական եկեղեցիների համատեղ գործողություններն ու համատեղ ծրագրերը պետք է զերծ լինեն կուսակցական ազդեցություններից և հիմնականում նպատակաուղղվեն պետական ու ազգային ծրագրերի իրականացմանը:
- Համատեղ գործողությունների շարքում պետք է իրականացվեն երիտասարդական, բարեգործական, կրթական, մշակութային ծրագրեր, որոնք ուղղված կլինեն սփյուռքահայերին՝ համախմբվելու Հայաստանի Հանրապետության

գաղափարի և Մայր հայրենիքի գաղափարն արմատավորելու շուրջ:

- Հայ Առաքելական, Ավետարանական և Կաթոլիկ եկեղեցիների ներկայացուցիչները պետք է հնարավորություն ունենան պարբերաբար գումարելու ակադեմիական հայագիտական կոնֆերանսներ, իսկ երիտասարդները՝ Հայաստանում մասնակցեն ամենամյա ամառային դպրոցի:

3. ՄԻՋԴԱՎԱՆԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

1. Տեսական հարցեր

Կրոնը դարեր ի վեր եղել և մնում է ինչպես հասարակություններ-ը միավորող, այնպես էլ պառակտող գործոն։ Կրոնական անհանդուրժողականությունն անգամ արդի հասարակություններում է եղել եղբայրասպան պատերազմների ու աղետների պատճառ։ Այլոց կրոնական զգացմունքների ու արժեքների նկատմամբ մերժողականությունն ու անհանդուրժողականությունը հանգեցրել են արյունալի պատերազմների, պետությունների ու ազգերի պառակտման։

Հասարակությունների ներսում կրոնական անհանդուրժողականությունը միաժամանակ լուրջ ռեսուրս է նաև հակառակորդ պետությունների ձեռքին՝ այդ երկրներն ու հասարակությունները պառակտելու տեսանկյունից։ Այդ նկատառումներով են իրականացվել և իրականացվում զանազան միսիոներական առաքելությունները, որոնք, բացի կրոնական նպատակներից (սեփական կրոնի և արժեքների քարոզչություն և տարածում), հետապնդում են նաև քողարկված քաղաքական նպատակներ։

Որպես օրինակ կարող ենք բերել Մերձավոր Արևելքում (Իրան, Թուրքիա և այլն) ներկայումս լան թափով ծավալվող բողոքական միսիոներությունը: Խոսելով Իրանում ծավալվող արևմտյան միսիոներական գործունեություն մասին՝ Ս.Կրիվոշեևը նշում է. «...Ցանցային պատերազմում կարևորագույն գործոններից մեկը, որի միջոցով ակնհայտ կամ միջնորդավորված կարելի է ազդել ցանկացած երկրում սոցիալական և քաղաքական իրավիճակի վրա, կրոնականն է, և վատն է այն ստրատեգը, ով չի խաղարկում կրոնական խաղաքարտը»[1]: Հասարակությունները «ներսից պայթեցնելուն» է ուղղված նաև արտաքին աշխարհից զանազան աղանդավորական շարժումների ներմուծումը և տարածումն արդի հասարակություններում, որից զերծ չեն մնացել նաև հետխորհրդային երկրները, այդ թվում՝ Հայաստանը:

Այս ամենը ենթադրում է, որ կրոնական հանդուրժողականության խնդիրը չափազանց կարևոր նշանակություն ունի մերօրյա հասարակությունների անվտանգության ապահովման համար: Կրոնական հանդուրժողականությունն է հիմք հանդիսանում հասարակությունների ներքին կայունությունն ու ինտեգրացիան ապահովելու, նրանց ցնցումներից զերծ պահելու, ազգերի ու պետությունների պառակտումը կանխելու և, վերջապես, արտաքին կրոնական ներգործության (միսիոներություն, աղանդավորական շարժումների ներմուծում և տարածում) քաղաքական նպատակները չեզոքացնելու համար: Կրոնական հանդուրժողականության բացակայության պայմաններում է, որ հասարակության կրոնադավանանքային բազմազանությունը խայծ է հանդիսանում նրանց ներսից պառակտելու և ջլատելու, արյունալի պատերազմների սանձազերծման համար:

[1] *Кривошеев С.,* Ползучая евангелизация Ирана http://evrazia.org/article/1101

Կրոնական հանդուրժողականության էությունը

Կրոնական հանդուրժողականություն երևույթի պարզ մատուցմամբ՝ այն «...մեկ կրոնադավանանքային ընդհանրության հետևորդների կողմից հանդուրժողական վերաբերմունք է այլ կրոնադավանանքային ընդհանրությունների հետևորդների նկատմամբ: Յուրաքանչյուրը հետևում է իր կրոնական համոզմունքներին և ճանաչում է այլոց նույնատիպ իրավունքը»[1]: Այնուամենայնիվ, իր մեկնաբանություններում կրոնական հանդուրժողականությունը բազմասպեկտ և բազմաբովանդակ երևույթ է: Ուստի, պատահական չէ, որ այդ հասկացությունն ունի տարբեր մեկնաբանություններ և ընկալումներ: Չխորանալով կրոնական հանդուրժողականություն հասկացության տարբեր մեկնաբանությունների և ընկալումների մեջ՝ հպանցիկ նշենք, որ դրանք կարելի է բաժանել երկու հիմնական մասի՝ պոզիտիվ (դրական) և նեգատիվ (բացասական):

- *Պոզիտիվ* ընկալմամբ կրոնական հանդուրժողականությունը ենթադրում է այլոց կրոնադավանաբանական արժեքների ու գաղափարների ճանաչողություն, ընդունում և հարգանք դրանց նկատմամբ:
- *Նեգատիվ* ընկալմամբ կրոնական հանդուրժողականությունը ենթադրում է անտարբերություն այլոց կրոնադավանաբանական հայացքների ու արժեհամակարգի նկատմամբ, ինչի արդյունքում ապահովվում է կրոնական հողի վրա թշնամանքի ու բախումների բացակայությունը:

[1] *Абуов А.П.,* Межконфессиональный диалог как основа социального согласия, http://www.embkaztm.org/article/142

Երկու դեպքում էլ, անկախ նրանից՝ կրոնական հանդուրժողականությունը հիմնված է այլոց նկատմամբ հարգանքի, թե անտարբերության վրա, այն ապահովում է հասարակական կայունությունը և տարբեր կրոնադավանանքային խմբերի համակեցությունը: Այնուամենայնիվ, կրոնական հանդուրժողականության վերոնշյալ երկու տեսակներից նախընտրելի է առաջինը՝ այլոց կրոնադավանաբանական արժեքների ընկալումը և հարգանքը դրանց նկատմամբ, քանի որ անտարբերությունը, հաճախ բխելով չճանաչողությունից կամ չիմացությունից, վաղ թե ուշ կրկին կարող է հանգեցնել անհանդուրժողականության դրսևորումների: Պատահական չէ, որ Գ.Շլիմովան, խոսելով Ղազախստանի նման էթնիկ և կրոնական բազմազանությամբ աչքի ընկնող երկրում հասարակական համերաշխության ապահովման մասին, այս գործում կարևորում է լուսավորչական աշխատանքի դերը, որը պետք է նպատակաուղղված լինի տարբեր կրոնադավանանքային խմբերի փոխադարձ ճանաչողության մակարդակի բարձրացմանը[1]: Իսկապես, հաճախ անհանդուրժողականության պատճառ է դառնում չիմացությունը: Ծանոթ չլինելով այլոց արժեքներին ու գաղափարներին՝ անձը կարող է քամահրանքով և անտարբերությամբ վերաբերվել դրանց, ինչը և կարող է հանգեցնել անտարբերության: Մինչդեռ այլոց արժեքներին ու հայացքներին ծանոթությունը զգալի դրական տրամադրվածություն է ստեղծում դրանց նկատմամբ:

[1] *Г.Е. Шлымова,* Религиозная толерантность как фактор интеграции современного обществ,а http://www.embkaztm.org/article/140

Կրոնական հանդուրժողականության դրսևորումները

Կրոնական հանդուրժողականությունը լինում է մի քանի մակարդակների՝ կապված այն օբյեկտի (մարդկային ընդհանրության) հետ, որի նկատմամբ դրսևորվում է այն։ Ըստ այդմ՝ կրոնական հանդուրժողականությունը լինում է.

1. հանդուրժողականություն այլակրոնների նկատմամբ (քրիստոնյա-մուսուլման, մուսուլման-բուդդայական, քրիստոնյա-բուդդայական և այլն),
2. հանդուրժողականություն այլադավանների նկատմամբ (կաթոլիկ-բողոքական, բողոքական-ուղղափառ և այլն՝ քրիստոնեության մեջ, սուննի-շիա՝ իսլամի մեջ, և այլն),
3. հանդուրժողականություն աղանդավորական շարժումների նկատմամբ (ինչպես նաև աղանդավորական շարժումների հանդուրժողականություն միմյանց նկատմամբ),
4. հանդուրժողականություն Աստծուն հավատացողների և չհավատացողների միջև (հավատացյալ-աթեիստ)։

Կրոնական հանդուրժողականության ապահովման մեխանիզմները

Պայմանավորված կրոնական հանդուրժողականության ընկալման վերոնշյալ երկու մոտեցումներով (նեգատիվ և պոզիտիվ)՝ կարելի է այդ հանդուրժողականության ապահովման մեխանիզմները նույնպես բաժանել երկու խմբի.

- Նեգատիվ մեխանիզմներ, որոնք ենթադրում են անտարբերություն այլոց կրոնադավանանքային գաղափարների և արժեհամակարգի նկատմամբ։

- Պոզիտիվ մեխանիզմներ, որոնք ենթադրում են այլոց կրոնադավանանքային գաղափարների ու արժեհամակարգի ճանաչողություն, ընդունում և հարգանք դրանց նկատմամբ:

Նեգատիվ մեխանիզմներից առանձնացվում են հիմնականում երկուսը՝ աթեիզմը և աշխարհիկությունը:

1. Աթեիզմը, թեև ենթադրում է անհանդուրժողականություն բոլոր կրոնական ուղղությունների ու դավանանքների նկատմամբ[1], սակայն միաժամանակ ենթադրում է տարբեր կրոնների ու դավանանքների պատկանող խմբերի ու անձանց միջև փոխադարձ հանդուրժողականություն, ինչը հիմնված է ընդհանրապես կրոնի մերժման սկզբունքի վրա: 2001թ. Ռուսաստանում իրականացված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ թեև փոքր առավելությամբ, այնուամենայնիվ, Աստծուն չհավատացողներն ավելի հանդուրժողական են այլադավանների հանդեպ և շփումների առումով ավելի բաց են նրանց նկատմամբ, քան հավատացողները[2]:

Աթեիզմի պայմաններում կրոնական հանդուրժողականության վերելքը երևում է նաև հայ իրականության օրինակով: Մինչև խորհրդային կարգերի հաստատումը հսկայական հոգեբանական անջրպետ կար Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների և հայ կաթոլիկների միջև: Նրանք մեկուսացված էին միմյանցից, և շփումները խիստ սահմանափակ էին: Տիրում էր փոխադարձ անհանդուրժողականության մթնոլորտ: Խորհրդա-

[1] Այս առումով ծանր է իրավիճակը հատկապես պետական մակարդակով վարվող աթեիզմի քաղաքականության պարագայում: Լավագույն օրինակը ԽՍՀՄ-ն էր:
[2] Տե՛ս *Мчедлов А.П.,* Религиозная толерантность
http://www.nravstvennost.info/library/news_detail.php?ID=2070

յին տարիներին, սակայն, այդ հոգեբանական անջրպետը գրեթե լիովին վերացավ, և հայ առաքելականի ու հայ կաթոլիկի միջև հաստատվեցին նորմալ՝ դավանանքային տարբերություններով չկաշկանդված հարաբերություններ։ Այս գործում, թերևս, էական էր խորհրդային շրջանում պետական մակարդակով իրականացվող աթեիզմի քաղաքականության դերը, որը ջնջեց հոգեբանական անջրպետը Հայության դավանանքային այդ երկու շերտերի միջև։

Այսպիսով, իր բոլոր բացասական գծերով հանդերձ խորհրդային շրջանում տիրող աթեիզմի մթնոլորտն ունեցավ այդ դրական նշանակությունը Հայության ազգային համախմբման (կոնսոլիդացիայի) տեսանկյունից՝ ջնջելով հոգեբանական անջրպետը հայ առաքելականների և հայ կաթոլիկների փոխադարձ ընկալումներում։ Չի բացառվում, որ առհասարակ խորհրդային ժամանակաշրջանում պետական մակարդակով որդեգրված աթեիզմի քաղաքականությունն ուներ հստակ քաղաքական նպատակ։ Այն միտված էր ջնջելու կրոնադավանանքային տարբերություններով պայմանավորված հոգեբանական անջրպետը խորհրդային հետերոգեն (բազմէթնիկ, բազմակրոն, բազմամշակույթ) հասարակության տարբեր կրոնադավանանքային շերտերի միջև։

2. Աշխարհիկության՝ որպես կրոնական հանդուրժողականության մակարդակի բարձրացմանը նպաստող գործոնի դերն ակնհայտ արտահայտություն է ստանում ժամանակակից արևմտյան հասարակություններում։ Ժամանակակից արևմտյան երկրներում անհամեմատ քիչ են կրոնական տարբերությունների

հողի վրա տեղի ունեցող բախումներն ու թշնամանքը: Դա, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ոչ միայն ժողովրդավարական մշակույթով, այլև տիրող աշխարհիկության մթնոլորտով, որը երկրորդական պլան է մղել կրոնադավանաբանական խնդիրները՝ առաջնային նշանակություն տալով աշխարհիկ կարգի հարաբերություններին ու գործունեության ոլորտներին: Այդ համատեքստում էլ տարբեր կրոնադավանաբանական հայացքներ ունեցող և արժեքներ դավանող մարդկանց միջև ջնջվել են երբեմնի հոգեբանական անջրպետները: Պետության հստակ տարանջատումը եկեղեցուց, փոխադարձաբար միմյանց գործերին չմիջամտելը, քաղաքացիական հասարակության կայացումը, ընդհանուր խնդիրների լուծմանը նպատակաուղղված միասնական ջանքերն աշխարհիկ հասարակություններում երկրորդական պլան են մղել անհատների և մարդկանց խմբերի միջև կրոնադավանանքային տարբերությունները:

Պոզիտիվ մեխանիզմները նպատակաուղղված են հասարակությունների ներսում կրոնական հանդուրժողականության սերմանմանն ու ապահովմանը՝ կրոնադավանանքային տարբեր խմբերի միջև փոխադարձ ճանաչողության, միմյանց արժեհամակարգի ընկալման և հարգանքի միջոցով: Այդ համատեքստում կարևոր նշանակություն ունի հասարակական գիտակցությունն և մշակույթ ձևավորող կառույցների (դպրոց, ԶԼՄ և այլն) կողմից տարբեր կրոնադավանանքային խմբերի միջև ընդհանրությունների շեշտադրումը՝ չնայած կրոնադավանանքային տարբերություններին, ինչը հիմք է հանդիսանում ոչ միայն կրոնական հանդուրժողականության, այլև հասարակական համերաշխության և համախմբման համար: Ընդհանրությունների

ընդգծումը կարող է տեղի ունենալ կրոնական, ազգային և պետական-քաղաքացիական հարթություններում:

1. Կրոնական հարթությունում ընդհանրությունների շեշտադրումը ենթադրում է մի քանի տեսանկյուն: Կարևոր է ընդգծել, որ՝

- բոլոր կրոններն էլ (քրիստոնեություն, իսլամ, բուդդայականություն և այլն) ունեն գաղափարական-արժեհամակարգային ընդհանրություններ: Ինչ վերաբերում է տարբերություններին, ապա դրանք լավ նախադրյալ են կրոնների փոխլրացման համար: Հետևաբար, կրոնների տարբերությունը լուրջ նախադրյալ է ստեղծում գաղափարա-արժեհամակարգային իմաստով հասարակության տարբեր կրոնադավանանքային խմբերի փոխլրացման և հարստացման համար: Ի վերջո, տարբերությունները պարտադիր կերպով չեն ենթադրում անհամատեղելիություն: Տարբերությունն ու անհամատեղելիությունը միանգամայն տարբեր երևույթներ և հասկացություններ են: Իսկ տարբեր կրոններն ու դավանանքները լիովին կարող են համատեղելի լինել, խաղաղ և արդյունավետ գոյակցել:
- Կրոնական հանդուրժողականության գաղափարներ առկա են նաև հենց կրոնների ու դավանանքների վարդապետություններում կամ գաղափարախոսության մեջ: Թեև յուրաքանչյուր կրոն իրեն է վերապահում ճշմարտացիության մենաշնորհը, սակայն պարունակում է նաև այլոց հանդեպ հանդուրժողականության, այլոց գաղափարական և արժեքային համակարգի նկատմամբ հարգանքի տարրեր: Այս

առումով, թեև «ցանկացած կրոնական ավանդույթ հավակնում է սեփական եզակիությանն ու գերազանցությանը (կամ, ծայրահեղ դեպքում, ենթադրում է դրանք)»[1], սակայն «հանդուրժողականության ներուժ պարունակվում է մարդկության բոլոր նշանավոր կրոնական համակարգերում»[2]:

- Միևնույն կրոնի շրջանակներում տարբեր դավանանքների միջև ընդհանրությունը հենց նույն կրոնի կամ հավատի մեջ է: Այս հարցում լավագույն օրինակը Սիրիայի հայ համայնքն է, որի դավանանքային երեք շերտերն էլ (հայ առաքելականներ, հայ կաթոլիկներ և հայ ավետարանականներ) սերտորեն ինտեգրված են միմյանց հետ և կազմում են մեկ միասնական կուռ ամբողջություն՝ սիրիահայ համայնքը: Կրոնական հանդուրժողականության վրա խարսխված ինտեգրացիան և համերաշխությունն այնքան են խորացել, որ, օրինակ, Սիրիայի Հայ Ավետարանական եկեղեցիներ այցելում են նաև առաքելական հայերը: Եվ ըստ Սիրիայի հայ ավետարանական համայնքի հոգևոր առաջնորդների՝ գլխավորը քրիստոնեական հավատքն է, դավանանքը (դավանանքային տարբերությունները) երկրորդական նշանակություն ունեն:

2. Ազգային հարթությունում տարբեր կրոնադավանանքային շերտերի ընդհանրությունների շեշտադրումն ուշադրությունը կենտրոնացնում է նրանց էթնիկ, այլ ոչ թե կրոնադավա-

[1] *Джеймс Э. Вуд,* Право человека на свободу религий в международной перспективе // Диа-Логос. Религия и общество, М., Истина и жизнь, 1997 с. 12.

[2] *Л.И. Сосковец,* Религиозная толерантность и свобода совести: история и теория вопроса // Известия Томского политехнического университета, 2004, т. 307, № 2, с. 177.

նանքային պատկանելության վրա։ Այս մոտեցմամբ ընդունվում է, որ միևնույն ազգի ներկայացուցիչները՝ քրիստոնյա, թե մուսուլման, ուղղափառ, կաթոլիկ, թե բողոքական, հավատացյալ, թե աթեիստ, չեն դադարում միևնույն ժողովրդի զավակները լինելուց։ Այսպիսով, ազգային ընդհանրության շեշտադրմամբ տարբեր կրոնադավանանքային շերտերի մեջ ամրապնդվում է միևնույն էթնիկ ընդհանրությանը պատկանելու գիտակցությունը, որը լուրջ հիմք է կրոնական հանդուրժողականության և ազգային-հասարակական համախմբման ու համերաշխության համար։

3. Պետական-քաղաքացիական հարթությունում տարբեր կրոնադավանանքային խմբերի ընդհանրությունների շեշտադրումն առաջնային պլան է մղվում այն դեպքերում, երբ այդ խմբերը միաժամանակ պատկանում են նաև տարբեր ազգությունների։ Այսինքն՝ այս դեպքում էթնիկ հարթությունում ընդհանրությունների շեշտադրումը չի գործում։ Դրա փոխարեն առաջնային պլան է մղվում միևնույն պետության քաղաքացիները և միևնույն հասարակության անդամները լինելու շեշտադրումը։ Կրոնադավանանքային տարբեր խմբերի մեջ ներարկվում է միևնույն խնդիրների ու մարտահրավերների (սոցիալական, տնտեսական, բնապահպանական, քաղաքական և այլն) առաջ կանգնած լինելու, ընդհանուր շահեր ու պահանջմունքներ և, հետևաբար, ընդհանուր անելիք ունենալու գաղափարը, ինչը ոչ պակաս կարևոր նախադրյալ է հասարակական համերաշխության ապահովման և կրոնադավանանքային հիմքով հասարակական պառակտումների ու աղետների կանխարգելման համար։

2. Հայության դավանանքային հատվածների համախմբման (համագործակցության) ձևերը և մեխանիզմները

Հայության դավանանքային շերտերի ուսումնասիրության հիմնական նպատակներից մեկն ազգային ներուժի համախմբման (կոնսոլիդացիայի) արդյունավետ մեխանիզմների վերհանումն է: Խնդիրը հրատապ է հատկապես Սփյուռքի համար, որին նետված մարտահրավերներին դիմակայելը ենթադրում է համազգային ջանքերի համատեղում: Արդ, արտերկրի հայ համայնքներում Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների միջև արդյունավետ փոխգործակցության միջավայրի ստեղծումը վճռական նշանակություն ունի այդ համայնքների պահպանման և զարգացման համար: Սփյուռքում միջդավանական համերաշխության ուղիների վերհանման խնդիրն ունի թե՛ տեսական և թե՛ գործնական հարթություններ: Հետևաբար, ազգային ներուժի համախմբումն այս պարագայում ենթադրում է Հայության տարբեր դավանանքային հատվածների միավորման, նրանց մեկ միասնական՝ ազգային դաշտ բերելու տեսական և գործնական արդյունավետ ուղիների մշակում և գործարկում: Սույն խնդիրն ունի երկու կողմ.

1. Հատվածականության բացառում: Սա ենթադրում է ժխտել կամ, առնվազն, երկրորդական պլան մղել Հայությանը տարբեր չափանիշներով (տվյալ դեպքում՝ կրոնադավանանքային) առանձին հատվածների բաժանող և միմյանց հակադրող գաղափարները և գործոնները:

2. Միավորիչ գաղափարների և գործնական ուղիների մշակում և գործարկում: Սա ենթադրում է հայության տարբեր դավանանքային հատվածների (հայ առաքելականներ, կաթողի-

կեներ և ավետարանականներ) համար միասնական՝ ազգային հենքի վրա համախմբվելու տեսական և գործնական մեխանիզմների մշակում և գործարկում: Այդպիսի միավորիչ մեխանիզմների առկայության, առավել ևս՝ դրանց առաջնայնության պարագայում ազգային ներուժը ջլատող գործոններն ու գաղափարա-աշխարհայացքային դրույթները նվազագույնը մղվում են երկրորդական պլան, ինչը լուրջ հիմք է Հայության տարբեր դավանանքային հատվածների միջև ազգային համերաշխության ու արդյունավետ փոխգործակցության մթնոլորտի ձևավորման համար: Այս հարցում օգտակար են ինչպես անցյալի փորձի վրա հիմնված տեսական ընդհանրացումները, այնպես էլ նորարարական մոտեցումները:

Ենթադրվում է, որ միավորիչ գաղափարների և գործնական ուղիների մշակումն ու գործարկումը մեթոդաբանորեն պետք է հիմնվեն այն տեսական-աշխարհայացքային և գործնական հիմքերի զարգացման վրա, որոնք ապահովում են արտերկրի հայության տարբեր դավանանքային շերտերի ինտեգրացիան: Հետևաբար, նպատակահարմար է խնդիրը դիտարկել տեսական-աշխարհայացքային և գործնական հարթություններում:

Համախմբման տեսական-աշխարհայացքային հիմքերը

Տեսական-աշխարհայացքային հարթության մեջ խնդիրը ենթադրում է այն գաղափարա-աշխարհայացքային հիմքերի առաջքաշում և զարգացում, որոնք փոխադարձ համերաշխություն են ապահովում Հայության տարբեր դավանանքային հատվածների միջև: Դիտարկումները ցույց են տալիս, որ այդ-

պիսի միավորիչ նշանակություն ունեցեղ տեսական-աշխարհայացքային հիմքերն են.

- ազգային բարձր ինքնագիտակցությունը,
- ընդհանուր քրիստոնեական կրոնը,
- աշխարհիկությունը։

Ազգային ինքնագիտակցության բարձրացում։ Ինչպես վերը նշվեց, արդի աշխարհում կրոնական հանդուրժողականության մթնոլորտի ձևավորման կարևոր պոզիտիվ մեխանիզմներից է միևնույն ազգային ընդհանրությանը պատկանող տարբեր կրոնադավանանքային շերտերի ազգային ինքնագիտակցության բարձրացումը։ Վերջինս ենթադրում է կրոնադավանանքային պատկանելության փոխարեն ընդհանուր էթնիկ (ազգային) պատկանելության գիտակցության բարձրացում, այլ խոսքով՝ հայ առաքելականի, կաթողիկեի և ավետարանականի գիտակցությունում առաջին հերթին հայ, այլ ոչ թե առաքելական, կաթողիկե կամ ավետարանական լինելու զգացողության առաջմղում։ Դա ապահովելու համար անհրաժեշտ է երկու քայլ.

1. *Կրոնի (դավանանքի) և ազգության, այն է՝ կրոն (դավանանք) և ազգ հասկացությունների տարանջատում։* 19-րդ դարի կեսերին հայ մեծ մտավորական, հրապարակախոս Ստ. Նազարյանցն առաջ է քաշում ազգ և կրոն հասկացությունների տարանջատման գաղափարները։ «Կրօնք ու ազգութիւն ջոկ ջոկ բաներ են։ ...Ազգութիւնը աշխարհային (աշխարհիկ) խորհուրդ ունի. մինչդեռ կրօնը գործ ունի ուղղակի մարդու խղճի և Աստուծոյ հետ։ Ուրեմն Լուսաւորչական, Կաթոլիկ եւ Բողոքական Հայերը միշտ մնում

են արիւնակից եղբայրներ, մի ազգի որդիներ, մի լեզուի կցորդներ, մի ազգային պատմութեան ժառանգ որդիներ... Կրօնով Հայերը կարող են միշտ տարբերուել միմեանցից եւ դրանից վնաս չկայ ազգութեան համար։ ...Ազգը միապէս պատկանում է ե՛ւ Լուսաւորչականին, ե՛ւ Կաթոլիկին, ե՛ւ Բողոքականին»[1]։ Այսպիսով, կրոնի (դավանանքի) և ազգության տարանջատումը ենթադրում է, որ կրոնական (դավանանքային) պատկանելությունը դադարում է ազգային ինքնության չափանիշ լինելուց։

2. *Կրոնականի (դավանանքայինի) և ազգայինի հարաբերակցության մեջ ազգայինի գերակայություն։* Կրոնականի նկատմամբ ազգայինի գերակայության գաղափարը նույնպես Հայության մեջ առաջացել է 19-րդ դարում՝ կաթոլիկ և ավետարանական հարանվանությունների առաջացման հետ մեկտեղ։ Դրա գլխավոր խնդիրն էր մեղմել հայերի մեջ առաքելական, կաթողիկե և ավետարանական տարաբաժանումն ու այդ հողի վրա ծագող առճակատումները փոխադարձ ընկալումներում։

Կրոնականի նկատմամբ ազգայինի գերակայության սկզբունքը հայ իրականության մեջ արտացոլվել է ինչպես գիտական և հրապարակախոսական գործերում, այնպես էլ գեղարվեստական ստեղծագործություններում։ 19-րդ դարի հայ մեծանուն մտավորական Ռաֆֆին, անդրադառնալով ազգայինի և կրոնականի հարաբերակցության խնդրին, նշում է. «...Դավա-

[1] *Կ.Պ. Ատանալեան,* Յուշարձան հայ աւետարանականաց եւ աւետարանական եկեղեցւոյ, Ֆրեզնո, 1952թ., էջ 172։

նությունների բազմատեսակությունը չի ոչնչացնում ազգային միությունը: Միությունը պետք է որոնել այդ մասերի ներդաշնակության մեջ, որի հիմնական մոթիվը պետք է լինի ազգայնությունն իր բարձր նշանակությամբ»[1]: Ինչ վերաբերում է գեղարվեստական ստեղծագործություններին, ապա այդ առումով նշանակալի է, օրինակ, 19-րդ դարի նշանավոր հայ ավետարանական գործիչներից մեկի՝ վերապատվելի Գ.Մ. Շմավոնյանի «Սիրէ հայը» բանաստեղծությունը, որում հեղինակն իր ժողովրդի զավակներին փոխադարձ սիրո և հանդուրժողականության կոչ է անում՝ անկախ ունեցվածքից, սոցիալական ծագումից ու կարգավիճակից և կրոնադավանաբանական աշխարհայացքից: Բանաստեղծությունը հորդորում է.

Սիրէ Հայը թէ ըլլայ
Բողոքական, այլ կրօն,
Ըստ քո կարծեաց սնապաշտ,
Հերետիկոս, անկրօն:

Անունն է Հայ, պարտի քեզ
Սիրել զնա Հայու պէս[2]:

Մեր օրերում տեսական-աշխարհայացքային հարթությունում լրատվամիջոցների և այլ քարոզչական միջոցների գործունեությունն այս տեսանկյունից պետք է հիմնվի ազգայինի, այլ ոչ թե կրոնականի շեշտադրման վրա: Ազգային ընդհանուր պատկանելության գիտակցության առաջմղումը, անձի ինքնանույ-

[1] *Ռաֆֆի,* Ի՞նչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ, Երկերի ժողովածու, հ. 11, Երևան, 1991, էջ 292:
[2] *Կ.Պ. Ատանալեան,* նշվ. աշխ., էջ 369:

նացման մեջ երկրորդական պլան մղելով դավանանքային պատկանելության զգացողությունը, լուրջ հիմք կդառնա հայ առաքելականների, կաթողիկեների և ավետարանականների փոխհարաբերություններում դավանանքային հակասությունների և լարվածության մեղմացման համար: Սա լրջորեն կնպաստի դավանանքային հիմքով մասնատված հայության տարբեր հատվածների՝ ազգային հիմքով մեկ ամբողջության մեջ միավորմանը:

Ընդհանուր կրոնական՝ քրիստոնեական ինքնագիտակցության բարձրացում: Արդի հասարակություններում կրոնական հանդուրժողականության ապահովման մեկ այլ կարևոր մեխանիզմ է, ինչպես վերը նշվեց, միևնույն կրոնին պատկանող տարբեր դավանանքային շերտերի գիտակցության մեջ դավանանքային տարբերությունների փոխարեն ընդհանուր կրոնական պատկանելության գիտակցության խթանումը: Սա ենթադրում է մարդկային գիտակցության մեջ կրոնական (տվյալ դեպքում՝ քրիստոնեական) ինքնության առաջնայնացում դավանանքայինի համեմատ, որին պետք է տրվի երկրորդական նշանակություն: 19-րդ դարի 20-ական թթ. Բազելյան միաբանության քարոզիչները, որոնք միսիոներական գործունեություն էին ծավալում Ռուսական կայսրությունում, ըստ ավետարանականների, քրիստոնյաների շրջանում քարոզչություն իրականացնելիս հետապնդում էին ոչ թե նրանց դավանափոխության, այլ զուտ Աստծո խոսքը տարածելու նպատակ, քանի որ. «...մարդ ինչ եկեղեցու էլ պատկանելիս լինի՝ կը փրկուի, եթէ սիրտն Աստուծոյ նուիրէ»[1]:

[1] *Կ.Պ. Ատանալեան,* նշվ. աշխ., էջ 180:

Կրոնական ընդհանրության գերակայության գաղափարը դավանանքային տարբերությունների նկատմամբ նույնպես իր արտացոլումը գտել է գեղարվեստական երկերում: Գ.Մ. Շմավոնյանի «Եղբայր ենք մենք» բանաստեղծությունն ընդգծում է.

Եղբայր ենք մենք մէկ հօր որդիք,
Չկայ մեր մէջ մեծ ու պզտիկ.
Մէկ ուսուցիչ ունինք Յիսուս,
Մէկ մեր հաւատք եւ մէկ մեր յոյս[1]:

Ներկայումս դավանանքային տարբերությունների համեմատ կրոնական ընդհանրության գերակայության առումով Սփյուռքի համայնքներից օրինակելի են Մերձավոր Արևելքի հայ համայնքները: Սիրիայի հայ համայնքում, օրինակ, ընդհանուր քրիստոնեական հավատի միջոցով առաքելական, կաթողիկե և ավետարանական հայերի միավորումը Դամասկոսի Հայ Ավետարանական եկեղեցու հոգևոր հովիվ, պատվելի Տաթև Պասմաճյանի կողմից հիմնավորվում է հետևյալ կերպ. «Կարևորը հայ քրիստոնյա լինելն է: ...Վերջում, երբ Աստծու մոտ գնանք, չի հարցնելու՝ ավետարանակա՞ն ես, թե՞ առաքելական»[2]:

Դավանանքային տարբերությունները երկրորդական պլան մղելն ավելի հաջող է ստացվում ազգային և կրոնական ընդհանրությունների համակցված կարևորմամբ, երբ անձի ինքնագիտակցության կամ դիմացինի ընկալման մեջ միաժամանակ առաջնային նշանակություն են ձեռք բերում ինքնության ազգային և կրոնական բաղադրիչները: «Լուսաւորչական

[1] Նույն տեղում, էջ 369:
[2] Հարցազրույց Հայ Ավետարանական եկեղեցու Դամասկոսի հովիվ, պատվելի Տաթև Պասմաճյանի հետ, *Արաքս Փաշայան,* Դամասկոսի հայ համայնքը. ներկան և հեռանկարը, «Նորավանք» ԳԿՀ տեղեկագիր, 2008թ., թիվ 23, էջ 33, 34:

Հայը դառնալով Բողոքական,- գրում է Ստ. Նազարյանցը դեռևս 19-րդ դարում,- մնում է մեր եղբայրը թէ՛ ազգաբար եւ թէ՛ քրիստոնէաբար։ Ազգաբար՝ այն պատճառաւ, որ Բողոքական դարձած Հայի մէջ փոխուած չէ հայկական արիւնը, իսկ քրիստոնէաբար՝ այն պատճառաւ, որ Քրիստոս Բողոքականի ալ պատկանում է, Լուսաւորչականի ալ»[1]։

Աշխարհիկություն։ Օգտվելով այն իրողությունից, որ մեր օրերում մեծ տարածում ստացած աշխարհիկությունը, երկրորդական պլան մղելով կրոնադավանաբանական խնդիրներն աշխարհիկ գործերի համեմատությամբ, զգալիորեն մեղմացնում է այդ հիմքով լարվածությունն ու առճակատման հնարավորությունները, անհրաժեշտ է Սփյուռքի հայ համայնքներում որպես ազգային համախմբման գործիք խթանել աշխարհիկ ինստիտուտների ստեղծումն ու կայացումը։ Այս խնդիրը ներկայումս հրատապ է արտերկրի հայ համայնքների համար, քանի որ, չնայած արդի հասարակություններում տիրապետող աշխարհիկության ոգուն, կրոնական կառույցները (եկեղեցիներ) Սփյուռքում, թերևս, իներցիայի ուժով շարունակում են իրենց գերակայությունը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ազգային պետության բացակայության տևական ժամանակահատվածի (մի քանի դար) ընթացքում հոգևոր կառույցներն են (հիմնականում՝ Հայ Առաքելական եկեղեցին) իրենց վրա վերցրել պետական շատ գործառույթներ։

Ներկայումս, սակայն, հոգևոր-եկեղեցական կառույցների գերակայությունը համայնքային կյանքում որոշակի հիմք է կրոնադավանանքային հիմքով Սփյուռքի հայ համայնքների հատ-

[1] *Կ.Պ. Ատանալեան,* նշվ. աշխ., էջ 172։

վածավորման համար, որի հետևանքով ջլատվում է ազգային ներուժը։ Այն հանգամանքը, որ ներկայումս հայկական սփյուռքի համայնքները հանդես են գալիս ավելի շուտ որպես կրոնական, այլ ոչ թե աշխարհիկ ընդհանրություններ, տուրք տալով կրոնադավանանքային հիմքով այդ համայնքների հատվածավորմանը, որոշակիորեն խոչընդոտում է այնտեղ ազգային ներուժի համախմբմանը։

Խնդիրը չի վերաբերում միայն առաքելական, կաթողիկե, ավետարանական տարանջատմանը։ Կրոնական հարթությունում ազգային ներուժի ջլատմանը նպաստում են նաև առանձին հարանվանությունների ներսում ծագող խնդիրները։ Օրինակ՝ 1863թ. Ազգային սահմանադրության ընդունումից հետո Անտիոքում Սսի կաթողիկոսության, Կ.Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունների միջև ծավալված մրցակցությունն ու պայքարն իրենց ազդեցությունն ուժեղացնելու համար մեծ հարված հասցրին Հայ Առաքելական եկեղեցուն[1]։ «Հայ եկեղեցին, իր անտարբերութեամբ եւ ներքին հակամարտութիւններով,- գրում է Հ.Չոլաքյանը,- հայ ժողովուրդը օտարադաւանութեան մղելու ազդակներէն մէկն էր մանաւանդ Անտիոքի շրջանին մէջ»[2]։ Մեր օրերում նման կնճիռ կա Դամասկոսի հայ համայնքում։ Այստեղ 1956թ. եկեղեցական տագնապից հետո թեմական հարցը, այն է՝ Հայ Առաքելական եկեղեցու Դամասկոսի թեմը պատկանում է Մայր աթոռ Ս.Էջմիածնի՞ն, թե՞ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը, անառողջ մրցակցության պատճառ և համայնքային

[1] Տե՛ս *Յակոբ Չոլաքեան,* Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը, Անթիլիաս, 2006թ., էջ 124-125։
[2] Նույն տեղում, էջ 135։

ներուժի ջլատման աղբյուր է դարձել տեղի հայ հասարակական շրջանակների համար: Մինչ հնչակյան, ռամկավար, բարեգործական և կոմունիստական շրջանակներն էջմիածնական կողմնորոշում ունեն, դաշնակցական շրջանակների կողմնորոշումն անթիլիասական է: Խնդիրն այնքան սուր է, որ դաշնակցական շրջանակները բոյկոտում են Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդի (որը ներքին կարգով նշանակվում է Էջմիածնից) հովանավորությամբ կազմակերպվող միջոցառումները: Անգամ ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի միջոցառումը նշվում է անջատ[1]:

Հիշյալ մարտահրավերը չեզոքացնելու համար նպատակահարմար է օգտվել արդի դարաշրջանում տիրապետող աշխարհիկության ոգուց և խթանել աշխարհիկ կառույցների և ինստիտուտների ստեղծումն ու ակտիվ գործունեությունը, որոնք որպես ազգային (համազգային) կառույցներ իրենց գործունեության ծիրում կներառեն Հայության բոլոր (այդ թվում՝ կրոնադավանանքային) հատվածները՝ դառնալով ազգային համախմբման արդյունավետ միջոցներ: Այդպիսի աշխարհիկ կառույցներ կարող են լինել Սփյուռքում գործող հայ ավանդական կուսակցությունները (ՀՅԴ, ՍԴՀԿ, ՌԱԿ), բարեգործական կառույցները (ՀԲԸՄ, ՀՕՄ և այլն), մարզական և մշակութային միությունները (ՀՄԸՄ, Համազգային հայ կրթական և մշակութային միություն և այլն), համայնքային կառույցները (կոմիտեներ և այլն), կրթական հաստատությունները, լրատվամիջոցները և այլն: Փորձը ցույց է տալիս, որ այսպիսի աշխարհիկ կա-

[1] *Արաքս Փաշայան,* Դամասկոսի հայ համայնքը. ներկան և հեռանկարը, «Նորավանք» ԳԿՀ տեղեկագիր, 2008թ., թիվ 23, էջ 17-18:

ռույցների գործունեության մեջ հայերն ընդգրկվում են՝ անկախ իրենց դավանանքային պատկանելությունից։

Միաժամանակ, դրանց գործունեության դաշտը տարածվում է բոլոր հայերի վրա՝ կրկին անկախ իրենց դավանանքային պատկանելությունից։ Այս հանգամանքները լուրջ հիմք են հանդիսանում առաքելական, կաթողիկե և ավետարանական հայերին միասնական գործունեության դաշտ բերելու և այդ կերպ ազգային հիմքով (ոչ կրոնական, աշխարհիկ երանգավորմամբ) նրանց մեկ ամբողջության մեջ ինտեգրելու համար։ Ժամանակին, ինչպես նշում է Հակոբ Չոլաքյանը, Սիրիայի հայ համայնքում հայկական կուսակցությունների գործունեությունը, իր ծիրի մեջ ներառելով հայության բոլոր, այդ թվում նաև՝ կրոնադավանանքային հատվածները, մեծապես նպաստեց նրանց ընդհանուր ազգային ինքնագիտակցության վերելքին։ «Ս.Դ.Հ.Կ.ն էր,- գրում է հեղինակը,- որ ամենէն առաջ ազգային գիտակցութիւն եւ ապրում արթնցուց դաւանական խնդիրներով այնքան բաժան-բաժան եղած ու իրարու դէմ թշնամական զգացումներ տածող համագիւղացիներու մէջ։ Այդ գիւղերուն մէջ կուսակցութեան անդամ էին հայ քահանան, կաթոլիկ վարդապետը, բողոքական քարոզիչն ու պատուելին, եւ նոյնիսկ լատին օտարազգի հայրը...»[1]։

Կրթական հաստատությունների մասով ժամանակին Ռաֆֆին նշում էր. «...Ժամանակ է ձեռք առնել *դպրոցը*, որպես մի նոր կապ մեր և մեզանից օտարացած ազգայինների մեջ, որպես մի նոր ավազան, ուր հայ-կաթոլիկը, հայ-մահմեդականը

[1] *Յակոբ Չոլաքեան,* նշվ. աշխ., էջ 151։

և հայ-բողոքականը կմկրտվեն նոր հոգով և նոր կյանքով և կդրոշմվեն *ազգայնության* անունով. դրանով միայն կարող ենք միացնել մեզ հետ մեր եղբայրներին, որ բաժանեց եկեղեցու ավազանը…»[1]: Կարծես մեծանուն հայ մտավորականի խոսքերին ականջալուր, օրինակ, Քեսապում 1910թ. տարբեր դավանանքների ներկայացուցիչ երիտասարդների նախաձեռնությամբ հիմնվում է Քեսապի Ուսումնասիրաց Միությունը, որը որոշում է «կրթութեան ու դաստիարակութեան հիմնական գիծն ու նպատակը դարձնել ազգայինը եւ ո՛չ յարանուանականը, միացնել գիւղերու մէջ գոյութիւն ունեցող մէկէ աւելի դպրոցները ու յարանուանական իշխանութիւնները հեռացնել կրթական գործերը վարելու իրաւասութենէն»[2]:

Աշխարհիկ կառույցների շարքում, որոնց գործառնությունը միավորիչ ազդեցություն է ունենում Հայության տարբեր դավանանքային շերտերի համար, առանցքային դեր պետք է ունենա Հայաստանի Հանրապետությունը: ՀՀ-ն որպես համայն Հայության պետություն պետք է իր գործառնությունը տարածի ոչ միայն Հայության հիմնական դավանանքային հատվածի՝ հայ առաքելականների, այլև մյուս կրոնադավանանքային հատվածների (կաթողիկե, ավետարանական) վրա նույնպես: Այլ պետություններում ՀՀ դեսպանությունները տեղի հայ համայնքների հետ հարաբերություններում իրենց գործունեության ծիրում պետք է ներառեն ոչ միայն հայ առաքելականներին, այլև կաթո-

[1] *Ռաֆֆի,* Ի՞նչ վերանորոգություններ պետք են Տաճկական Հայաստանին, Երկերի ժողովածու, հ. 11, Երևան, 1991, էջ 57:

[2] *Յակոբ Չոլաքեան,* Քեսապ, Ա. հատոր (տեղագրութիւն, բնակավայրեր, բնակչութիւն, պատմութիւն, տնտեսութիւն), Հալէպ, 1995, էջ 79-80: Հղումը՝ ըստ Յակոբ Չոլաքեան, նշվ. աշխ., էջ 152:

ղիկեներին ու ավետարանականներին նույնպես: Այս առումով օրինակելի է Սիրիայում ՀՀ դեսպանությունը, որի կազմակերպած միջոցառումներին հրավիրվում են ինչպես Հայ Առաքելական, այնպես էլ Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիները: Այդ կերպ «դեսպանությունը փորձում է միավորիչ դեր կատարել, համախմբել համայնքը Հայաստանի դրոշի, Հայրենիքի, Հայության գաղափարի շուրջ»[1]:

Նման քաղաքականությամբ ՀՀ-ն որպես համազգային աշխարհիկ կառույց կկարողանա աշխարհիկության սկզբունքով միավորել Հայության տարբեր կրոնադավանանքային հատվածները և արտերկրի հայ համայնքների համար լինել ազգային միասնության խորհրդանիշ, ազգային միասնությունն ապահովող համազգային, աշխարհիկ գործուն ինստիտուտ: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 24.09.2008 ԱՄՆ-ում ունեցած ելույթի՝ 21-րդ դարում հայ ինքնությանը վերաբերող հատվածի համաձայն՝ «...առաքելական, կաթոլիկ, բողոքական կամ մահմեդական հայը ...պարզապես հայ է...»[2]:

Համախմբման գործնական հիմքերը

Ինչ վերաբերում է Սփյուռքի հայ համայնքների տարբեր դավանանքային շերտերի օրգանական միասնությունն ապահովող գործնական ուղիներին, ապա այս հարցում գլխավոր խնդիրն է՝ առաջ մղել և մեծ նշանակություն տալ կյանքի այն բնագավառներին, որոնք ապահովում են լայն համագործակցու-

[1] Հարցազրույց Սիրիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արշակ Փոլադյանի հետ, *Արաքս Փաշայան,* նշվ. աշխ., էջ 22:
[2] «Երկիր», 25 սեպտ., 2008:

թյուն հայ առաքելական, կաթողիկե և ավետարանական հարանվանությունների ներկայացուցիչների միջև։ «Մեր աղոթքը նույնն է, նույնն են մեր պայքարը, վտանգները...»[1]։ Հայ Կաթողիկե եկեղեցու մերօրյա նշանավոր դեմքերից Անդրանիկ վարդապետ Կռանյանի՝ կարգախոսի արժեք ձեռք բերած սույն արտահայտությունը լավագույն ուղենիշ-բանաձևն է հայ առաքելականներին, կաթողիկեներին և ավետարանականներին համագործակցության դաշտ բերելու համար։ Արդ, Սփյուռքի հայ համայնքների տարբեր դավանանքային շերտերի համագործակցությունը, որով երևում և ամրապնդվում է նրանց օրգանական միասնությունը, պետք է հիմնված լինի ընդհանուր նպատակների ու խնդիրների լուծման վրա։

Արտերկրի հայության դավանանքային շերտերի համար համագործակցության դաշտ ապահովող գործնական կյանքի հիմնական բնագավառներն են.

- հայապահպանությունը,
- տվյալ երկրի հասարակական-քաղաքական միջավայրով պայմանավորված մարտահրավերներին դիմագրավումը,
- պայքարը համազգային խնդիրների (Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում և դատապարտում, Արցախյան հիմնահարց և այլն) լուծման համար։

Հայապահպանություն։ Հայկական սփյուռքի բոլոր համայնքների վրա դամոկլյան սրի նման կախված է ձուլման

[1] *Ա.Միմավորյան,* Ջավախահայության դավանանքային վիճակի ուսումնասիրություն, *Ա.Միմավորյան, Վ.Հովյան,* Ջավախահայության որոշ հիմնախնդիրներ. ջավախահայության դավանանքային և տեղեկատվական վիճակի ուսումնասիրություն, Ե., 2009, էջ 5։

սպառնալիքը: Արտերկրում հաստատված հայությունն արագ թե դանդաղ ինտեգրվում է տեղի սոցիոմշակութային միջավայրին, ինչը ցավալիորեն զուգորդվում է ազգային ինքնության բաղադրիչների՝ լեզվի, ազգային մշակույթին հաղորդակցության, ազգային ինքնագիտակցության կորստի հետ: Հետևաբար, Սփյուռքի հայ համայնքների ազգային նկարագրի պահպանումը պահանջում է համազգային ջանքերի համատեղում ընդհանուր նպատակի՝ հայապահպանության շուրջ, ինչը, ի թիվս այլ բաների, ենթադրում է նաև հայ առաքելականների, կաթողիկեների և ավետարանականների համագործակցություն՝ կրթության (ազգային լեզվի պահպանում), մշակույթի (ազգային մշակույթին հայ համայնքին հաղորդակից դարձնելը) և այլ բնագավառներում: Հ.Չոլաքյանը, խոսելով դեռևս 19-րդ դարի վերջի իրադրության մասին, նկատում է, որ ազգային կրթության և դաստիարակության հարցն անհրաժեշտություն էր «...բոլոր հայոց համար, ի՛նչ համայնքի ալ պատկանած ըլլային անոնք»[1]:

Տվյալ երկրի հասարակական-քաղաքական միջավայրով պայմանավորված մարտահրավերներին դիմակայում: Յուրաքանչյուր երկիր կամ տարածաշրջան, որտեղ կան հայ համայնքներ, ունի իր յուրահատուկ սոցիալ-քաղաքական միջավայրը: Որոշ երկրներում այդ միջավայրը մարտահրավերներ է ծնում հայ համայնքների անվտանգության համար: Մերձավոր Արևելքի երկրներում, օրինակ, այդպիսի լուրջ մարտահրավերներ են հայատյացությունը (Թուրքիա), իսլամական արմատականությունը (Իրաք, Իրան և այլն), ահաբեկչությունը (Իրաք, Պաղեստին և այլն), քաղաքացիական կռիվները (Լիբանան), պատե-

[1] *Յակոբ Չոլաքեան,* նշվ. աշխ., էջ 151:

բազմները՝ արաբա-իսրայելական (Սիրիա, Լիբանան, Իսրայել և այլն), իրաք-իրանյան (Իրաք, Իրան), ամերիկա-իրաքյան (Իրաք), հնարավոր ամերիկա-իրանյան պատերազմը (Իրան), ներքաղաքական ցնցումները (Եգիպտոս, Սիրիա և այլն)։ Կամ, օրինակ, Ռուսաստանի հայ համայնքը հետխորհրդային շրջանում կանգնեց այդ երկրի հասարակական-քաղաքական միջավայրով պայմանավորված այնպիսի լուրջ մարտահրավերների առջև, ինչպիսիք են ներքաղաքական ցնցումներն ու անկայունությունը, ահաբեկչությունը, այլատյացությունը և այլն։

Հայ համայնքների անվտանգությանը սպառնացող նման մարտահրավերների առկայության պայմաններում հատվածականությունը (այդ թվում նաև դավանանքային հողի վրա) մեծ շռայլություն կլինի։ Մասնատելով Հայության ներուժը՝ այն վերջինիս ավելի խոցելի կդարձնի տարատեսակ սպառնալիքների առջև։ Ընդհակառակը՝ այդպիսի մարտահրավերներին դիմակայումը կրկին պահանջում է համազգային ջանքերի համատեղում, ինչը նշանակում է նաև հայ առաքելական, կաթողիկե և ավետարանական համայնքների համագործակցություն։

Պայքար համազգային խնդիրների (Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, Արցախյան հիմնահարցի և այլն) լուծման համար։ Համազգային խնդիրների լուծման համար համատեղ պայքարը լավագույն համագործակցության դաշտն է Հայության տարբեր դավանանքային հատվածների համար։ Որպես այդպիսիք հիմնականում հանդես են գալիս երկուսը՝ Արցախյան հիմնահարցը և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման համար պայքարը։

Այս երկու խնդիրները, համախմբող դեր խաղալով հատկապես սփյուռքահայության կյանքում, անգամ ազգային ինքնության բաղադրիչներ են։ «Կարելի է ասել, որ պատմական ինքնագիտակցության այդ երկու սյուները համախմբում են ողջ Հայությանը, մարմնավորում հայկական ազգային գիտակցության հիմքերը։ Որոշակի իմաստով այդպիսի համախմբմամբ է սկսվում հայերի ազգային ինքնանույնականացումը»[1]։ Հայոց ցեղասպանության պատմական հիշողության առնչությամբ ազգագրագետ Հ.Մարությանը նկատում է. «...Էթնիկ ընդհանրության կամ ազգի անդամների միջև կիսվող հիշողությունը հանդես է գալիս իբրև դրանց անդամներին կապող, նրանց հարաբերություններն ու գործողությունները կառուցող միջոց»[2]։

Արդ, Սփյուռքի հայ համայնքների տարբեր դավանանքային շերտերին միավորող և նրանց միջև սերտ համագործակցություն ապահովող գործոններից մեկն էլ համատեղ պայքարն է համազգային խնդիրների՝ Արցախյան հիմնահարցի, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման ու այլ հիմնախնդիրների լուծման համար, քանի որ դրանք այն հարցերն են, որ ընդհանուր են Հայության բոլոր (սոցիալական, կրոնադավանանքային և այլն) շերտերի համար։

[1] *Погосян Г.А.,* Современное армянское общество: особенности трансформации, М., Academia, 2005, с. 254.

[2] *Մարության Հ.,* Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում, Երևան, 2006, էջ 9։

Միջդավանական համագործակցության ձևերը և մակարդակները

Սփյուռքի հայության դավանանքային տարբեր շերտերի միջև համագործակցությունը կարող է իրականացվել երկու մակարդակով.

- *Անհատական,* երբ միմյանց հետ համագործակցում են տարբեր դավանանքներ ներկայացնող (առաքելական, կաթողիկե, ավետարանական) առանձին անձինք։
- *Ինստիտուցիոնալ,* երբ տարբեր դավանանքային շերտերի համագործակցությունը տեղի է ունենում նրանց ինստիտուցիոնալ կառույցների միջոցով։

Անհատական մակարդակով համագործակցությունը կարող է դրսևորվել հետևյալ հիմնական ձևերով.

- *Համազգային և աշխարհիկ կառույցների գործունեության մեջ տարբեր դավանանքներ ներկայացնող անհատ հայերի ընդգրկվածություն։* Որպես այդպիսի կառույցներ կարող են հանդես գալ հայկական ավանդական կուսակցությունները (ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴՀԿ), համազգային բարեգործական, մշակութային և այլ միությունները (ՀԲԸՄ, Համազգային հայ կրթական և մշակութային միություն և այլն), համայնքային կառույցները, լրատվամիջոցները, մարզական ակումբները և այլն։ Օրինակ՝ ՀԲԸՄ ազգային համախմբող դերի մասին Հ.Չոլաքյանը գրում է. «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ներկայութիւնը Անտիոքի շրջանի միւս գիւղերուն պարագային, ինչպէս Քեսապ, բարերար դեր ունեցած է տարբեր համայնքներու զաւակ-

ները նոյն մասնաճիւղին մէջ առնելու եւ անոնց մէջ ազգային դաստիարակութեան ընդհանուր նկրտումներ ապահովելու տեսակէտէն։ Հայ լուսաւորչականին հետ նոյն մասնաճիւղին մէջ մտած են նաեւ բողոքականը, կաթողիկէն եւ նոյնիսկ՝ լատինը»[1]։

- *Համազգային և աշխարհիկ միջոցառումների կազմակերպմանը և իրականացմանը տարբեր դավանանքային շերտեր ներկայացնող անհատ հայերի մասնակցություն։* Այդպիսի միջոցառումների շարքում գլխավոր տեղ են զբաղեցնում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչման ամենամյա ապրիլքսանչորսյան միջոցառումները։ Բացի Ցեղասպանության զոհերի ոգեկոչումից, Հայության դավանանքային շերտերին համախմբող միջոցառումներ կարող են լինել նաև գիտաժողովները, ցուցահանդեսները, բողոքի ակցիաները և այլն, որոնց կարող են մասնակցել առաքելական, կաթողիկե և ավետարանական հայերը։

Ինստիտուցիոնալ մակարդակով միջդավանական համագործակցությունը կարող է դրսևորվել հետևյալ հիմնական ձևերով.

- *Համատեղ կառույցների ստեղծում և գործարկում։* Այս հարցում փայլուն օրինակ են Մերձավոր Արևելքի հայ համայնքները, որտեղ տարբեր հարանվանությունների կողմից ստեղծվել և ղեկավարվում են սոցիալական, կրթական, առողջապահական և այլ հաստատություններ։ Որպես օրինակ կարելի է վկայակոչել Ազունիեի առողջարա-

[1] *Յակոբ Չոլաքեան*, նշվ. աշխ., էջ 187։

նը Լիբանանում, որը հիմնադրվել և ղեկավարվում է Հայ Առաքելական և Ավետարանական եկեղեցիների կողմից[1]:

- *Համատեղ միջոցառումների կազմակերպում և իրականացում:* Բացի յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչման արարողություններից, որ համատեղ կազմակերպում և իրականացնում են Սփյուռքի Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիները, միջդավանական համագործակցության սույն ձևը կարող է ընդգրկել նաև համատեղ գիտաժողովների, այլ հասարակական միջոցառումների կազմակերպումը և իրականացումը: Համագործակցության սույն ձևը կարևոր է հատկապես ընդհանուր խնդիրների (քաղաքական, սոցիալական, կրթական և այլ բնույթի) լուծման համար համատեղ պայքարի տեսանկյունից: 2006թ. օգոստոսին, օրինակ, Լիբանանի Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիները հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ ընդդեմ այդ երկրում թուրքական խաղաղապահ ուժերի տեղակայման[2]:
- *Մեկ համայնքի կողմից կազմակերպվող միջոցառումներին մյուսների մասնակցություն:* Այսպիսի համագործակցության ուշագրավ օրինակներից է Անթիլիասում 2008թ. հունվարին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության և Երևանի Մատենադարանի համատեղ կազմակերպած

[1] Տե՛ս *Հովյան Վ.,* Լիբանանի հայ բողոքական համայնքը, 21-րդ ԴԱՐ, 2010, թիվ 4, էջ 56-57:

[2] Армяне Ливана против включения турецких сил в состав миротворческого контингента, http://www.regnum.ru/news/690305.html

միջազգային գիտաժողովը՝ «Կիլիկյան Հայաստանի մշակույթը» խորագրով, որին մասնակցեցին նաև Լիբանանի Հայ Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիները[1]։

- *Համազգային միջոցառումներին երեք հարանվանությունների մասնակցություն։* Սփյուռքում այդպիսի համազգային միջոցառումներ կարող են դիտվել ՀՀ նախագահի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների այցերը տվյալ երկիր։ Այցերի ընթացքում հայկական երեք եկեղեցիները՝ ի դեմս իրենց առաջնորդների կամ ներկայացուցիչների՝ կարող են ուղեկցել ՀՀ նախագահին և ներկա գտնվել վերջինիս մասնակցությամբ իրականացվող միջոցառումներին։ Դա ոչ միայն կխորհրդանշի Հայության դավանանքային շերտերի միասնականությունն ազգային հենքի վրա, այլև կընդգծի ՀՀ-ի՝ որպես համայն Հայության պետության և Հայությանը համախմբող կառույցի դերը։ Օրինակ, 2010թ. մարտի 22-24-ը ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի՝ Սիրիա կատարած պաշտոնական այցի ընթացքում այդ երկրի երեք հայկական դավանանքային համայնքների առաջնորդներն ուղեկցում էին նախագահին և համատեղ մասնակցում նախատեսված միջոցառումներին[2]։
- *Համազգային կառույցներում ինստիտուցիոնալ մակարդակով ներկայացվածություն։* Սփյուռքի հայ համայնքներում ինստիտուցիոնալ մակարդակով միջդավանական համագործակցությանը մեծապես կնպաստեր նաև Հայ Առաքելա-

[1] Ливанские эскизы, http://aniv.ru/view.php?numer=16&st=2

[2] *Վ.Հովյան,* Սիրիայի հայ ավետարանական համայնքը, Գլոբուս. Ազգային անվտանգություն, 2010թ., թիվ 4, էջ 50։

կան, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների ընդգրկվածությունը համազգային կառույցների կառավարման և գործունեության մեջ։ Այդպիսի ընդգրկվածության փայլուն օրինակ է տալիս Հայաստան համահայկական հիմնադրամը, որի հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկված են ինչպես Հայ Առաքելական եկեղեցին, այնպես էլ Հայ Ավետարանական և Կաթողիկե եկեղեցիները[1]։ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկված են Ամենայն Հայոց կաթողիկոսը (Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը (Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա), Հայ Կաթողիկե եկեղեցու կաթողիկոս-պատրիարքը (Ներսես Պետրոս Թարմունի) և Հայ Ավետարանական եկեղեցու ներկայացուցիչը (վերապատվելի Ռընե Լևոնյան)[2]։

Համագործակցության սույն մոդելը կարելի է տարածել նաև Սփյուռքում գործող համազգային կառույցների, դրանց տեղական մասնաճյուղերի, ինչպես նաև արտերկրի տարբեր հայ համայնքների ղեկավար մարմինների (օրինակ՝ Ռուսաստանի հայերի միությունը) վրա։

Ամփոփում

Այսպիսով, ազգային բարձր ինքնագիտակցությունը, ընդհանուր քրիստոնեական կրոնը և աշխարհիկությունը այն տեսական-աշխարհայացքային հիմքերն են, որոնք փոխադարձ հանդուրժողականության և համերաշխության մթնոլորտ են ապահո-

[1] http://www.himnadram.org/index.php?lang=2&id=46
[2] Նույն տեղում։

վում Հայության տարբեր դավանանքային հատվածների միջև։ Հետևաբար, Սփյուռքի հայ համայնքներում ազգային համախմբումը, ի թիվս այլ գործոնների, ենթադրում է նաև սույն տեսական-աշխարհայացքային հիմքերի առաջմղում։

Միաժամանակ, հայապահպանությունը, տվյալ երկրի հասարակական-քաղաքական մթնոլորտով պայմանավորված մարտահրավերներին դիմակայումը, ինչպես նաև համազգային խնդիրների լուծման նպատակով համատեղ պայքարը գործնական կյանքի այն բնագավառներն են, որոնք համագործակցության լայն հորիզոններ են ապահովում Սփյուռքի հայության տարբեր դավանանքային շերտերի միջև։

Արտերկրի հայ առաքելականների, կաթողիկեների և ավետարանականների ակտիվ համագործակցությունն այդ բնագավառներում նախ ավելի արդյունավետ կդարձնի ընդհանուր խնդիրների լուծման համար պայքարը։ Փորձը ցույց է տվել, որ հայկական երեք դավանանքային համայնքների համատեղ ջանքերը տալիս են ցանկալի արդյունք։ Այսպես, օրինակ, Սիրիայում ժամանակին (1970-ական թթ.) Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիները համատեղ ջանքերով կարողացան հասնել նրան, որ հայկական դպրոցներում թույլատրվի հայերենի ուսուցումը, ինչպես նաև կրոնագիտությունը դասավանդվի հայերենով[1]։ Ի դեպ, Սիրիայի ազգային փոքրամասնություններից հայերը միակն են, որ օգտվում են նման արտոնությունից[2]։

Մյուս կողմից՝ միջդավանական համագործակցությունը կնպաստի սփյուռքահայության կրոնադավանանքային շերտե-

[1] Նույն տեղում, էջ 51։

[2] *Արաքս Փաշայան,* նշվ. աշխ., էջ 15։

րի միասնականության ամրապնդմանը՝ լուրջ հիմք և խթան հանդիսանալով հայ համայնքների օրգանական ամբողջականության ապահովման համար։

Միջդավանական համագործակցության թվարկված ձևերն այս կամ այն կերպ առկա են Սփյուռքի համայնքներում։ Դրանց զարգացման կարևորությունն ընդգծելով՝ միաժամանակ հարկ ենք համարում հանդես գալ ինստիտուցիոնալ մակարդակով համագործակցության նոր ձևի առաջարկությամբ, որն է՝ *Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների գործունեությունը համակարգող միջհարանվանական խորհրդի հիմնումը։* Դա կարևոր քայլ կլիներ Սփյուռքի հայ համայնքներում ինստիտուցիոնալ մակարդակով տարբեր դավանանքային շերտերի համագործակցությունն ավելի արդյունավետ և նպատակային դարձնելու ուղղությամբ։ Այն մի կողմից ավելի արդյունավետ և նպատակային կդարձներ համատեղ ջանքերը՝ լինելով հայկական երեք հարանվանությունների համագործակցությունն ապահովող արդյունավետ ինստիտուցիոնալ մեխանիզմ, մյուս կողմից՝ ինստիտուցիոնալ մակարդակով հայկական երեք հարանվանությունների համագործակցության փայլուն ձև կլիներ։ Խորհրդում Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիները կարող են ներկայացված լինել կամ համամասնության սկզբունքով (ըստ ընդհանուր հայ համայնքում իրենց ունեցած կշռի), կամ էլ հավասարապես։ Միջդավանական համագործակցության ինստիտուցիոնալացման մակարդակի բարձրացմանը կնպաստեր և դրա արտահայտությունը կլիներ համակարգող խորհրդի կանոնադրության ընդունումը։

4. ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՅԵՐԸ

Հայության տարադավան շերտերից մեկն են նաև բողոքական հայերը: Բողոքականությունը Հայության մեջ առաջացել է 19-րդ դարում: Առաջին հայկական բողոքական համայնքը պաշտոնապես ձևավորվել է 1846թ. Կ.Պոլսում, սուլթան Աբդուլ Մեջիդի հրամանով: Այն անվանվել է «Բողոքական համայնք»: Սկզբնական շրջանում փոքրաթիվ հայ բողոքականների համայնքն աստիճանաբար ստվարացել է՝ Կ.Պոլսից տարածվելով և ընդգրկելով Օսմանյան կայսրության մյուս շրջանները, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանը: Առաջին աշխարհամարտի նախօրեին բողոքական հայերը կազմում էին Օսմանյան կայսրությունում բնակվող հայության զգալի հատվածը՝ ավելի քան 60 հազ. մարդ[1]: Նրանք բնակվում էին Ադանայում, Արաբկիրում, Բալուում, Բերրիում, Եվդոկիայում, Էրզրումում, Թալասում, Խարբերդում, Կեսարիայում, Մարաշում, Մեզիրեում, Չնքուշում, Պարտիզակում, Սեբաստիայում, Սիսում, Սղերդում, Սիվրիհիսարում, Մարսվանում, Սամսունում, Օրդուում, Չարշամբայում, Վանում, Կ.Պոլսում և Անգորայում[2]:

[1] Армянская Евангельская церковь,
http://www.hierarchy.religare.ru/h-refpresb-aec.html
[2] *Արման Հակոբյան,* Բողոքականները Թուրքիայում,
http://www.yerkir.am/newspaper/index.php?section=8&id=1287

Հայոց ցեղասպանության հետևանքով բովանդակ Հայության հետ մեկտեղ իրենց բնակավայրերից գաղթում և աշխարհի տարբեր անկյուններում են հաստատվում նաև հայ բողոքականները։ Դրա հետևանքով Սփյուռքի գրեթե բոլոր հայ համայնքներում որպես առանձին ենթաշերտ ձևավորվում են հայ բողոքականների համայնքները։

Խորհրդային Միության անկումից հետո Սփյուռքի շատ հայ գործիչների ու կառույցների հետ մեկտեղ Հայաստան են գալիս և ակտիվ գործունեություն ծավալում նաև բողոքական հայ գործիչներ և կազմակերպություններ։ Մասնավորապես, Հայ Ավետարանական եկեղեցին Հայաստանում վերագրանցվում է 1994թ.՝ ստանալով «Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի» անվանումը։ Արդյունքում՝ Հայաստանում նույնպես ստվարանում է հայ բողոքականների ենթաշերտը։

Չնայած իրենց դավանաբանական յուրահատկությանը, բողոքական հայերը, այնուամենայնիվ, ունեն բարձր ազգային գիտակցություն և իրենց համարում են Հայության մի մասը։ Նրանք չեն ընդունում բովանդակ Հայությունից կտրված կամ օտարացած լինելու տեսակետները։ Բողոքական հայերի ընկալումներում Հայության անկապտելի մասը լինելու թեզը խարսխված է հիմնականում երկու սկզբունքային խնդրի շուրջ ծավալվող քննարկումների և փաստարկումների վրա.

1. *Հայոց մեջ բողոքականության ծագումնաբանությունը։* Այս հարցում փորձ է արվում ցույց տալ, որ բողոքականությունը հայոց մեջ ամենևին էլ օտարածին երևույթ չէ։ Այն ծագել է հենց հայոց մեջ։

2. *Հայ ժողովրդի պատմական ուղու ընթացքում բողոքականների ունեցած դերն ու նշանակությունը:* Այս հարցում փորձ է արվում ապացուցել բողոքականների մեծ ներդրումը պատմության ընթացքում Հայության առջև ծառացած հիմնախնդիրների լուծման գործում: Կարևոր տեղ է հատկացվում նաև համազգային խնդիրների լուծման գործում նշանավոր բողոքական հայերի՝ որպես հայ ժողովրդի արժանավոր զավակների, ներկայացման խնդրին:

Ծագումնաբանական հիմնախնդիրները հայ բողոքականների ինքնընկալումներում

Ծագումնաբանական հիմնախնդիրներում հայ բողոքականներն ունեն իրենց սեփական ինքնընկալումները, որոնք հակադրվում են տարածված այն տեսակետներին, համաձայն որոնց՝ բողոքականության ծագումը հայոց մեջ տեղի է ունեցել օտարերկրյա (ամերիկյան) միսիոներների ծավալած գործունեության արդյունքում: Հայ բողոքականների ինքնընկալումներում գերիշխում է այն տեսակետը, թե բողոքականությունը հայոց մեջ ունի ներքին՝ հայկական ծագում: Օտարերկրյա միսիոներական գործունեությունը նպաստել է բողոքականության տարածմանը, բայց չի հանդիսացել դրա առաջացման պատճառ: Ամերիկյան միսիոներներն այստեղ պարզապես գտել են պարարտ հող՝ իրենց գործունեությունը ծավալելու համար:

Այն, որ բողոքականությունը հայոց մեջ ունի հայկական ծագում կամ արմատներ, բողոքականների կողմից հիմնավորվում է հիմնականում 2 հարթությունում, որոնք պայմանականորեն անվանում ենք.

- աղանդավորական (պավլիկյանական և թոնդրակյանական),
- ռեֆորմիստական։

1. *Աղանդավորական* ուղղությունը բողոքականությունը հայոց մեջ համարում է միջնադարյան աղանդավորական շարժումների՝ պավլիկյանների և թոնդրակյանների ժառանգորդը։ Այս ուղղությունը փորձում է ցույց տալ դավանաբանական ընդհանրությունները միջնադարյան Հայաստանի աղանդավորական շարժումների և բողոքականության միջև։
2. *Ռեֆորմիստական* ուղղությունը պնդում է, որ բողոքականությունը հայոց մեջ առաջացել է դեռևս 17-րդ դարում, Հայ Առաքելական եկեղեցու ներսում ծավալված ռեֆորմիստական (ավետարանական) շարժման արդյունքում։ Ռեֆորմիստական շարժման նախաձեռնողներն ու իրականացնողները եղել են Հայ Առաքելական եկեղեցու հոգևորականները։
   Սկզբնական շրջանում Հայ Առաքելական եկեղեցու շրջանակներում նրա ռեֆորմիստական թևը՝ իր ներկայացուցիչներով հանդերձ, խաղաղ և համերաշխ գոյակցել է ավանդական թևի հետ։ Հետագայում, սակայն, նրանք հեռացվել են Հայ Առաքելական եկեղեցուց։ Այդժամ «...նրանց հանգուցյալները մնում էին չհուղարկավորված, երեխաները՝ չկնքված, երիտասարդները՝ չամուսնացած, և ողջ իրավական պաշտպանությունը մերժվում էր...»[1]։ Այս խնդիրները հանգեցրին նոր եկեղեցի հիմնելու անհրաժեշտությանը, ինչը և տեղի ունեցավ։ 1846թ. օսմանյան սուլ-

[1] *Hagop A. Chakmakjian,* The Armenian Evangelical Church and The Armenian People http://www.cacc-sf.org/c-aecHAC.html

թանի հրամանով հայ բողոքականները ճանաչվեցին որպես առանձին համայնք։

Թեև բողոքականության հայկական ծագումը մատնանշող այս երկու հարթությունները միմյանցից անկախ են, սակայն այդ անկախությունը կրում է հարաբերական բնույթ։ Բանն այն է, որ որոշակի փոխադարձ կապ, այնուամենայնիվ, կա այդ հարթությունների միջև։ 17-րդ դարում սկիզբ առած ռեֆորմիստական շարժումը երբեմն դիտվում է որպես միջնադարյան հայ աղանդավորության՝ Պավլիկյան և Թոնդրակյան շարժումների վերազարթոնք։ Ընդունվում է այն տեսակետը, համաձայն որի՝ Պավլիկյան և Թոնդրակյան շարժումները, թեև պարտություն կրեցին միջնադարում, սակայն ամբողջությամբ արմատախիլ չեղան և վերազարթոնք ապրեցին 17-րդ դարում՝ ի դեմս Հայ Առաքելական եկեղեցու ներսում ռեֆորմիստական շարժման։ Այդ կերպ էլ բողոքականությունը դիտվում է որպես միջնադարյան Հայաստանի աղանդավորական շարժումների՝ պավլիկյանականության և թոնդրակյանականության ժառանգորդ։

Բացի վերոնշյալ երկու ուղղություններից, առկա է նաև ոչ այնքան տարածված մեկ այլ ուղղություն, որը նպատակաուղղված է ոչ այնքան բողոքականության հայկական ծագումն ապացուցելուն, որքան առաջ մղելուն այն թեզը, որ բողոքականության արտաքին ծագումը չի զրկում հայ բողոքականներին իրենց ազգային ինքնությունից՝ հայ լինելուց։ Համաձայն այս մոտեցման, եթե անգամ բողոքականությունը հայոց մեջ ունի արտաքին ծագում, այսինքն՝ առաջացել է օտարերկրյա միսիոներների ծավալած գործունեության արդյունքում, ապա դրանում որևէ սարսափելի բան չկա։ Մարդկության պատմությունը տարբեր քաղաքակրթու-

թյունների և մշակույթների փոխազդեցության պատմություն է: Այդ փոխազդեցությունն էլ, ըստ էության, նման է «առևտրի»:

Տարբեր քաղաքակրթություններ և մշակույթներ, փոխազդեցությունների մեջ մտնելով միմյանց հետ, միմյանցից վերցնում և միաժամանակ միմյանց փոխանցում են իրենց արժեքները: Հետևաբար, եթե բողոքականությունը հայ իրականության մեջ է ներթափանցել արտաքին աշխարհից, դրանում ողբերգություն չկա: Հայությունն իր պատմության ընթացքում այլ քաղաքակրթություններից և մշակույթներից վերցրել է բազմաթիվ արժեքներ՝ միաժամանակ իր արժեքները փոխանցելով նրանց: Եթե Հայությունը հրաժարվի այլ քաղաքակրթություններից և մշակույթներից վերցված արժեքներից, դրանով նրա քաղաքակրթական և մշակութային գանձարանն էապես կաղքատանա: Հետևաբար, Հայության այն հատվածը, որն արտաքին աշխարհից վերցրել է բողոքականությունը որպես դավանանք կամ կրոնական արժեք, զուտ դրա համար արժանի չէ պարսավանքի, հատկապես այն դեպքում, երբ այդ կրոնական արժեքի փոխառությունը չի հանգեցնում ազգային ինքնության կորստին կամ ազգային ինքնագիտակցության անկմանը: Բողոքական հայերը նույնքան հայ են, որքան մյուս հայերը:

Բողոքական հայերի ինքնընկալումը հայության անցյալի և ներկայի ճակատագրում իրենց դերի մասին

Բողոքական հայերի պատկերացումները Հայության ճակատագրում իրենց ունեցած դերի մասին ընդհանուր առմամբ հանգում են նրան, որ հայ բողոքականները, մյուս հայերի նման, հավասարապես ենթարկվել են ճնշումների ու զրկանքների, կրել

են Հայությանը ճակատագրով բաժին հասած բոլոր տառապանքները: Միևնույն ժամանակ, բողոքական հայերը, ըստ իրենց ինքնընկալման, մեծ ներդրում ունեն Հայության առջև ծառացած հիմնախնդիրների (հայապահպանություն, կրթամշակութային զարգացում, սոցիալական խնդիրներ և այլն) լուծման գործում: Իսկ բողոքական հայերի համազգային նշանակություն ունեցող գործողություններում դրդապատճառ հանդիսացել է ոչ թե նրանց բողոքական, այլ հայ լինելու հանգամանքը:

Բողոքական հայերի ինքնընկալումները Հայության ճակատագրում իրենց մեծ դերի մասին կարելի է բաժանել մի քանի ոլորտների.

- կրթամշակութային ոլորտ,
- հայապահպանություն,
- սոցիալական ոլորտ:

1. Կրթամշակութային ոլորտում հատկապես կարևորվում է այն հանգամանքը, որ բողոքական հայերի կողմից է առաջին անգամ աշխարհաբար հայերենով թարգմանվել Աստվածաշունչը[1], որի արդյունքում գրաբարին այլևս չտիրապետող Հայությունը կրկին կարողացավ հասու լինել քրիստոնեական արժեքներին: Բողոքական հայերի կողմից բացվել են բազմաթիվ դպրոցներ և ուսումնական հաստատություններ, որտեղ հայ երեխաները ստացել են որակյալ կրթություն:

[1] Տե՛ս Rev. *Barkev Darakjian,* Evangelism in the Early Armenian Evangelical Church http://www.cacc-sf.org/c-eeaBND.html; *Karl Vartan Avakian*, The Armenian Evangelical Church (1846 – 1996): A Historical Overview http://www.cacc-sf.org/c-aehistory.htm; Rev. *Barkev N. Darakjian,* Armenian Evangelical Identity: Historical and Theological Perspectives http://www.cacc-sf.org/c-aeidentityBND.html; Rev. Dr. *Vahan H. Tootikian*, The Armenian Evangelical Witness to the Armenian People http://www.cacc-sf.org/c-aewVHT.html:

Բողոքական հայերի ինքնընկալումներում հայոց կրթամշակութային կյանքի զարգացման մեջ բողոքականության կարևոր դերը մեկնաբանվում է նաև այն տեսանկյունից, որ բողոքականության առաջացումը մրցակցություն առաջ բերեց Հայ Առաքելական և Հայ Ավետարանական եկեղեցիների միջև, ինչն էլ լճացումից դուրս բերեց հայոց հոգևոր-մշակութային կյանքը՝ լուրջ խթան հանդիսանալով վերջինիս զարգացման համար։ Այսպես, բողոքական հայերի կողմից աշխարհաբարով Աստվածաշնչի թարգմանությանը հետևեց այն, որ Հայ Առաքելական եկեղեցին նույնպես թարգմանեց Աստվածաշունչը աշխարհաբար հայերենով։ Կամ բողոքականների կողմից հայկական դպրոցների հիմնումը խթան հանդիսացավ Հայ Առաքելական եկեղեցու համար՝ նույնպես հիմնելու դպրոցներ։ Այսպիսով, բողոքականության առաջացմամբ Հայ Առաքելական և Ավետարանչական եկեղեցիների միջև առաջացած մրցակցությունը լուրջ խթան հանդիսացավ կրթամշակութային կյանքի վերելքի համար։ Բողոքականների ընկալմամբ, առանց այդ մրցակցության՝ լճացման եզրին հասած հայոց հոգևոր կյանքը դատապարտված էր վերջնական կորստի։

2. Հայապահպանության ոլորտում բողոքական հայերի ունեցած դերը սեփական ինքնընկալումներում կարևորվում է հատկապես ուծացման տարբեր մակարդակներում գտնվող Հայության հայադարձության տեսանկյունից։ Խնդիրն այն է, որ Օսմանյան կայսրությունում բողոքական միսիոներները (այդ թվում նաև՝ հայ) գործունեություն են ծավալել նաև այլալեզու և այլադավան հայերի շրջանում և նրանց վերադարձրել իրենց ազգային արմատներին։ Այս հանգամանքն ընդունվում է ան-

գամ առաքելադավան հայերի կողմից: Մասնավորապես, բողոքական հայերը վկայակոչում են Ռաֆֆուն, ով ասում էր. «Այժմ Դերսիմի մեջ բողոքականները մտնելով, սկսած են քրդացած հայերին Մեսրոպի տառերով Ավետարան կարդացնել. սկսել են մոռացված մայրենի լեզուն սովորացնել նրանց: Ի՞նչ ասենք այդ քարոզիչներին. ասե՞նք, թե դուք գնացեք հեթանոսներին քարոզեցեք. դուք հայերի հետ գործ չունեք»[1]:

3. Սոցիալական ոլորտում հայ բողոքականների դերը սեփական ինքնընկալումներում կարևորվում է այն բազմաթիվ սոցիալական և բարեգործական ծրագրերով (և դրանց նշանակությամբ), որ իրականացվել են բողոքական կազմակերպությունների կողմից թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում, թե՛ անցյալում և թե՛ ներկայում: Օրինակ, 1989թ. Ֆրանսիայում հիմնադրվեց «Հույս Հայաստանի» կազմակերպությունը, որի նպատակն էր աջակցել 1988թ. Սպիտակի երկրաշարժից տուժած շրջանների վերականգնմանը, ինչպես նաև Հայաստանում անցումային շրջանի դժվարությունների հաղթահարմանը[2]:

Այս ամենի համատեքստում կարևորվում է նաև բողոքական հայերի կողմից իրականացված գործողությունների դրդապատճառը: Բողոքական հայերի ինքնընկալմամբ, այդ գործողությունների հիմքում ընկած է ազգային, այլ ոչ թե կրոնական ինքնագիտակցությունը: Վառ օրինակը 1921թ. Ս.Թեհլերյանի

[1] *Պարգեւ Ն. ՏարագՃեան,* Հայ Աւետարանական դիմագիծ, http://www.chanitz.org/2009/12/blog-post_2262.html

[2] Հարցազրույց Հայաստանյայց Ավետարանական եկեղեցու նախագահ վեր., դոկտ. Ռընե Լեւոնյանի հետ, http://www.hayernaysor.am/news.php?p=9&c=0&t=0&r=0&year=2009&month=10&day=12&shownews=3941&LangID=4

կողմից Թալեաթ փաշայի սպանությունն է: Ինչպես շեշտում է Պարգև Դարաքջյանը, Ս.Թեհլերյանն իրականացրել է Թալեաթ փաշայի սպանությունը ոչ թե նրա համար, որ բողոքական էր, այլ նրա համար, որ հայ էր[1]: Այսպիսով, բողոքական հայերի ինքնընկալումներում ազգային և համազգային նշանակություն ունեցող գործողությունները պայմանավորված են հայ լինելու հանգամանքով և բխում են հենց այդ հիմքից:

Այսպիսով, ազգային ինքնության կարևորագույն բաղադրիչն է ազգային ինքնագիտակցությունը: Ինչպես նշում է Ռաֆֆին. «...դավանությունների բազմատեսակությունը չէ ոչնչացնում ազգային միությունը – միությունը պետք է որոնել այդ մասների ներդաշնակության մեջ, որի հիմնական մոթիվը պետք է լինի ազգայնությունն իր բարձր նշանակությամբ»[2]: Հայ բողոքականները, չնայած իրենց դավանանքային որոշակի առանձնահատկությանը, ունեն Հայությանը պատկանելու հստակ զգացում: Իրենց բարձր ազգային ինքնագիտակցության շնորհիվ նրանք կազմում են Հայության անքակտելի մասը:

[1] *Barkev N. Darakjian,* Armenian Evangelical Identity: Historical and Theological Perspectives, http://www.cacc-sf.org/c-aeidentityBND.html

[2] *Ռաֆֆի,* Ի՞նչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ, http://www.eanc.net/EANC/library/Fiction/Original/Raffi/Essays_9.htm?page=31&interface_language=en

5. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴԸ ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայոց ավելի քան հինգհազարամյա պետականության պատմության ընթացքում Հայաստանը, որպես քաղաքակրթության բնօրրան[1], իր ներդրումն է ունեցել համաշխարհային քաղաքակրթական զարգացումներում: Հայկական մշակույթը հազարամյակների ընթացքում կուտակած իր բարձր որակական հատկանիշներով, միևնույն ժամանակ, քաղաքակրթական կամուրջներն ամրապնդելու մեծ հնարավորություններ ունի: Այդ երևույթի վառ արտահայտություններից է V դարում Հայ Առաքելական եկեղեցու հովանու ներքո հայ դպրության և կրթության մեծագույն նվիրյալների՝ սուրբ թարգմանիչների կատարած աշխատանքը, որի արգասիքներից է հին աշխարհի և վաղ միջնադարի նշանավոր օտար հեղինակների գործերի թարգմանությունը, ինչի շնորհիվ դրանց մի մասը պահպանվեց հենց հայերեն թարգմանությամբ:

[1] Dictionnaire historique, archéologique , philologique, chronologique; géographique et littéral de la Bible par le Rev. Pére dom Augustin Calmet (1672-1757). Dixième édition, revue, corrigée, complétée et actualisée par A.F. Jame, publié par M. l'abbé Migne, Paris, 1863, p. 590, D.M. Lang, Armenia Cradle of Civilization. London, 1970.

XVIII դարից Վենետիկի Սբ. Ղազար կղզում և Վիեննայում գործող հայ կաթոլիկ միաբանությունները, իրենց ավանդը նույնպես ներդնելով հայոց գիտակրթական գանձարանում, դարձան հայագիտության զարգացման խոշոր կենտրոններ Եվրոպայում: Մխիթարյանները մեծ գործունեություն են ծավալել հասարակությանը հայագիտության հին և նոր արգասիքներին ծանոթացնելու և ուսուցանելու, հայկական հոգևոր և գիտական արժեքային համակարգերը պահպանելու և ներկայացնելու առումով:

Մխիթարյան միաբանների ներդրումը մեծ է հայ մշակույթի բազում ասպարեզների պահպանման ու զարգացման գործում. հայ պատմագրության գիտակրթական գործի շարունակականություն, օտար երկրներում հայագիտական դպրոցների հիմնադրմանն օժանդակում, հայագիտական և կրոնաբարոյական ու ծիսական ոլորտներում գրաբարյան հայերենին տիրապետում: Շատ հայանպաստ գործերի տեր Մխիթարյան միաբանները միշտ բարձր են պահել Հայոց Հայրենիքին՝ Հայաստանին անմնացորդ ծառայելու գիտակցությունն ու պատիվը:

Դեռևս XIX դարում Էդուարդ Դյուլորիեն (1807-1881թթ.), բարձր գնահատելով աբբահայր Մխիթար Սեբաստացու (1676-1749թթ.) մտահղացումը, գրել է. «Միաբանության՝ հոգևորական և մտավորական հիմնադրի հիմնարար մտքերը հետևյալն էին. իր հայրենակիցների մշակութային կյանքի և մտածողության նորոգում, հին հայերեն լեզվի վերականգնում, այս լեզվով բոլոր կարևոր աշխատությունների մատչելի կերպով հրատարակություն… ազգի կարիքներին և մտավորականների իրավասություններին համապատասխանող եվրոպական լավագույն

մեթոդներով ուսուցման ձեռնարկում…»[1]:

Հազարամյակների պատմություն ունեցող Հայկազունիների գլխավորած Հայոց պետականությունը քրիստոնեական դարաշրջան մտավ: Հենց I դարում հիմնադրվեց Հայ Առաքելական եկեղեցին, ու 301թ. աշխարհում առաջինը Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց: Միջին դարերում՝ Հայոց թագավորությունների (Արշակունյաց, Բագրատունյաց, Կիլիկիա) ժամանակներում Հայաստանյայց Առաքելական եկեղեցին՝ Հայոց պետության հոգևոր կառույցը, մշտապես եղել է հայ ժողովրդին միավորող ամբողջական հոգևոր համակարգը:

Հայաստանը, դառնալով քրիստոնեական աշխարհի արևելյան պատվարը, ժամանակի ընթացքում իր վրա կրեց արևելյան հորդաների հարվածները: Միևնույն ժամանակ, քրիստոնյա Արևմուտքի տերությունները Հայաստանի նկատմամբ վարում էին սեփական շահերը հետապնդող քաղաքականություն, որին ծառայեցնում էին նաև եկեղեցական քաղաքականությունը: Այդպես վարվեցին Բյուզանդական կայսրությունը՝ քաղկեդոնականության դրոշի տակ, իսկ դարեր անց՝ նաև Եվրոպայում գերակայող և դեպի Արևելք ձգտող Հռոմի կաթոլիկ եկեղեցին: Վերջինիս վարած անհանդուրժողական քաղաքականության ճնշման պայմաններում Մխիթար Սեբաստացու ծավալած ազգանվեր գործունեության խորքային մղումները ներկայացրել է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը՝ որպես սկզբնաղբյուր նշելով «Մխիթար Սեբաստացու Վարքը»[2]. «Հայրենաւանդ եկե-

[1] *E.Dulaurier,* La Société arménienne contemproraine, Revue des Deux-Mondes, April 15, 1854, p. 245.

[2] Վարք Մխիթարայ Աբբայի Սեբաստացւոյ. աշխ. Հ. Յովհաննէս վարդ. Թորոսեան, Վենետիկ, Ս.Ղազարու, 1901:

ղեցւոյ սիրայար, բայց եւ ուսումնական զարգացման բուռն հետապնդող մը, որ եթէ առաջին կէտը երկրորդին կը զոհէր, բայց եւ ստէպստէպ դժուարին կացութեան մէջ կը գտնուէր, զի չէր կրնար առաջինին խիղճը արմատաքի սիրտէն քանցել: Այդ է պատճառը, որ Մխիթար յաճախ կը տեսնուի ինքն իրեն հակասող դիրքերու մէջ, մերթ իբր անկեղծ հռոմէադաւան գովուած, եւ մերթ իբր հայադաւան ամբաստանուած պապութեան առջեւ»[1]:

Տարանջատելով դարեր շարունակ հայ ժողովրդի նկատմամբ Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու վարած քաղաքական նպատակները տարբեր պատմական իրավիճակներում կաթոլիկություն ընդունած հայերի ազգային զգացումներից՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանը, Երուսաղեմի աքսորից[2] վերադարձի ճանապարհին՝ Հունգարիայում, 1893թ. օգոստոսի 14-ին հայ կաթոլիկ համայնքի ներկայացուցիչների հետ ջերմ հանդիպման ժամանակ՝ «իր հունգարահայ զավակներին հայտարարում էր, որ դավանանքը խղճի գործ է և ինքը հավասարապես իր որդիներն է համարում բոլոր դավանանքի հայերին՝ գլխավորը համարելով ազգային պատկանելությունը»[3]:

[1] *Մ. արք. Օրմանեան,* Ազգապատում, հ. Բ, Մայր աթոռ Ս.Էջմիածին, 2001, էջ 3277:
[2] 1892թ. մայիսի 5-ին Էջմիածնում կայացած կաթողիկոսական ընտրությունների ժամանակ Մկրտիչ Խրիմյանն ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս, սակայն Մայր աթոռ Ս.Էջմիածին գալու համար երկարատև բանակցություններ ընթացան ռուսական ցար Ալեքսանդր III-ի և արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի միջև թուրքական հպատակությունից ազատվելու և Երուսաղեմի աքսորավայրից մեկնելու թույլտվություն ստանալու համար: Ցարի պնդմամբ՝ սուլթանը ստիպված էր կարգադրություններ անել Խրիմյանին ազատել և թույլ տալ մեկնել Էջմիածին, սակայն իրեն բնորոշ դաժան նենգամտությամբ, ի թիվս այլ պայմանների, պահանջ էր դրել, որ կաթողիկոսի ճանապարհը չանցնի Կոստանդնուպոլսով և Արևմտյան Հայաստանով (տե՛ս *Է. Կոստանդյան,* Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Երևան, 2008, էջ 351-352):
[3] Նույն տեղում, էջ 353:

Խրիմյան Հայրիկը, որ Վենետիկի Մխիթարյան միաբանության հետ նամակագրական կապ էր հաստատել դեռևս 1858թ., Տրիեստից մեկնեց «հայ մշակույթի այդ հռչակավոր օրրան, ծանոթացավ տեղի ազգանվեր գիտական ու մշակութային այրերի հետ»[1]:

Մխիթարյան հայրերի գիտակրթական և մշակութային գործունեությունը[2] Հայոց հոգևոր և մշակութային ներդաշնակ ամբողջության մեջ են գնահատել Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը և Մաղաքիա արք. Օրմանյանը: Այս տեսանկյունից հայ միջնադարյան պատմագրության ավանդույթների շարունակության մեջ առանձնանում է Մխիթարյանների պատմագիտական ժառանգությունը, որի գագաթներն են Միքայել Չամչյանի և Ղևոնդ Ալիշանի երկերը:

Մեծանուն հայ պատմաբանները՝ համաշխարհային քաղաքակրթության մեջ բարձր որակների ներդրման առումով, հայ ազգի ազգաբանության կապակցությամբ հատուկ ուշադրություն են դարձրել Հայոց հնագույն պատմության երեք սյուների վրա.

1. Աստվածաշնչյան դրախտի տեղադրության և Նոյի տապանի՝ Արարատի վրա իջնելու ու դրանցից բխող հոգևոր ընկալումների խորհրդապաշտական արմատները Հայաստանում:
2. Հայոց լեզվի բնիկ ծագումը Հայկական լեռնաշխարհում:
3. Հայկ նահապետի հաղթանակը:

[1] Նույն տեղում:

[2] *Հ. Յարութիւն վրդ. Պզտիկեան,* Մխիթարի եւ մխիթարեանների նպաստը հայ մշակոյթին, Երեւան, 2003, *Ա.Փաշայան,* Վիեննայի Մխիթարյանները գիտության և մշակույթի ջահակիրներ (Միաբանության 200-ամյակի առթիվ), ՊԲՀ, N 1, էջ 22-35:

Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» երկում (V դար) արտացոլվել է Հայաստանում դրախտի գտնվելու մասին աստվածաշնչյան տեղեկության[1]՝ հոգեպես մաքրվելու խորհրդով, հայրենի պատմությամբ անցյալը վերապրելու ընկալումը: Դրախտի տեղադրության և Նոյի տապանի նստելու լեռան՝ Արարատ-Մասիսի մասին կասկածողներին և վիճարկողներին[2] պատասխանելով՝ Հայոց հոգևոր ժառանգության ակունքների բարձր գնահատմամբ Եղիշեն գրել է. «Արարատու լեառն ոմանք զԿորդուացն ասեն, այլ ճշմարտութիւն յայտնի առնէ զնա ի Մասիս գոլ… Երկու գետով եւ տապանաւն գեր ի վերոյ եմք քան զյոլովս: Եւ թէ զինչ օգուտ է... իմաստութեան պատճառ է մեզ, անմոռաց պահելով զԱստուծոյ արարչութեան, եւ ակն ունել փոփոխմանն ի նոյնն...»[3]:

[1] «Եւ տնկեաց Աստուած զդրախտն յԵդեմ ընդ արեւելս, եւ եդ անդ զմարդն զոր ստեղծ… Եւ զգետ ելանէր յԵդեմայ ոռոգանել զդրախտն. եւ անտի բաժանի ի չորս առաջս: Անուն միում Փիսովն… Եւ անուն գետոյն երկրորդի Գեհովն… Եւ գետն երրորդ՝ Տիգրիս… Եւ գետն չորրորդ Եփրատէս» (Աստուածաշունչ մատեան. Հին և Նոր կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց, համեմատութեամբ եբրայական եւ յունական բնագրաց, Կոստանդնուպոլիս, 1895, Ծննդ. Բ, 8-14):

[2] Աստվածաշնչում Եփրատի և Տիգրիսի ակունքների հիշատակությունից երևում է, որ խոսքն Արարատյան լեռների՝ Հայկական լեռնաշխարհի մասին է: Իսկ Փիլոն Եբրայեցին (Աղեքսանդրացի) (մ.թ.ա. 20 - մ.թ. 50թթ.) մերժում էր դրախտի մասին աստվածաշնչային տեղեկության կապը Հայոց լեռների հետ՝ գրելով. «Ասին Դկղաթայ (Տիգրիս- *հեղ.*) եւ Արածանւոյ աղբիւրքն բխել ի Հայոց լերանցն. եւ անդ դրախտ ոչ է, այլ եւ ոչ երկուք եւ այլ աղբիւրք գետոյ» (Փիլոն Եբրայեցւոյ Մնացորդք ի Հայս որ են մեկնութիւն Ծննդոց եւ Ելից, Վենետիկ, 1826, էջ 9): Այն, որ դեռևս I դարում Փիլոնը միտումնավոր կերպով մերժում էր Հայոց լեռներում, ըստ գետերի ակունքների ճշգրիտ տեղորոշման, դրախտի գտնվելու մասին պատկերացումը, վկայում է, որ նույնիսկ հնում դրա դեմ գաղափարական պայքար է եղել (*Է.Դանիելյան, Վ.Թաիրյան,* Հայոց պատմական ժառանգության պաշտպանության գործը և անվտանգ տեղեկատվական արդի միջոցները, տե՛ս Հայկական լեռնաշխարհը Հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2004, էջ 6-12):

[3] *Լևոն Խաչիկյան,* Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», Երևան, 1992, էջ 245:

Հայր Միքայել Չամչյանցի (1738-1823թթ.) բազմավաստակ հայագիտական գործունեության մեջ առավել նշանակալից է «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ Տեառն 1784» եռահատոր աշխատության ստեղծումը 1784–1786թթ.: Միքայել Չամչյանցը, հայոց լեզվի ծագմանն անդրադառնալով աստվածաշնչյան ոգով, գրել է. «Այն առաջին բարբառ՝ որով խօսէին մարդիկ յԱդամայ անտի մինչեւ զբաժանումն լեզուաց, Հայոցն էր, որ եւ մնաց մինչեւ ցայժմ… Իսկ արդ՝ այն լեզու որով խօսէր Նոյ եւ որդիք իւր անդ ի Հայաստան, ոչ խառնեցաւ, եւ ոչ բարձաւ, եւ ոչ յայլ փոխեցաւ, այլ է նոյն, որ այժմ կայ ի Հայաստան, ապա յայնժամ Հայաստանու կամ հայոց լեզուաւ խօսէին Նոյ եւ որդիք իւր»[1]: Այս ոգով է գրված նաև «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի»-ի «Նախադրունք»-ը. «…զառաջինն ունի տեղի Հայկականս մեր բարբառ, որպէս մտերիմ եւ կարեւոր ընտանութեամբ յառաջագայեալ ի լեզուէ մեծի նահապետին Նոյի յԱյրարատեան աշխարհ մեր դադարելոյ աշխարհակեցոյց տապանաւն իւրով հանդերձ զվախճան իւր: Եւ այն իսկ է պատճառն անժխտելի, զի յամենայն գոգցես լեզուս ազգաց եւ ազանց սփիւռ տարածեալս յետ վաղափուլ աշտարակին մինչեւ ցօրս ցայս նշմարին հետք հայերէնաբարբառք»[2]:

[1] *Հայր Միքայէլ Չամչեանց,* Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 153-154: Իոհան Շրյոդերը և Մխիթար Սեբաստացին դեռևս XVIII դարի առաջին տասնամյակներին հայոց լեզվի հնությունը նույնպես դիտում էին Աստվածաշնչի Ծննդոց գրքի դրախտի և Նոյի ժամանակների (նախքան աշտարակաշինությունը և լեզուների խառնակությունը) առումով (Մխիթար Սեբաստացի, Բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1749: *Schröder J.J.,* Thesaurus linguae Armenicae, antiquae et hodiernae, cum varia praxios materia, cujus elenchum sequens pagella exhibet. Amstelodami, 1711):

[2] Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, հ. Ա, էջ 5:

Ինչպես նշել է Մ.Չամչյանցի պատմագիտական ժառանգության հետազոտող Անի Ութուջյանը, «Չամչյանի տեսությունը զուտ գիտական հետաքրքրություն հետապնդելուց բացի, ունեցել է նաև ազգային-քաղաքական շարժառիթ: Հայերի ծագման վերաբերյալ նրա դրույթը ուղղված էր թե՛ իր ազգակիցներին՝ ի բավարարումն հարազատ ժողովրդի պատմական անցյալի նկատմամբ նրանց ունեցած այն մեծ հետաքրքրության, որը հետևանք էր XVIIIդ. հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զարթոնքի և թե՛ օտարներին՝ նրանց հետաքրքրությունը շարժելով թուրք-պարսկական տիրապետության տակ հեծող հայ ժողովրդի նկատմամբ»[1]:

Հատկանշական է, որ 1816թ. Ջորջ Գորդոն Բայրոնը (1788-1824թթ.), այցելելով Սբ. Ղազար կղզու Մխիթարյանների միաբանություն, ոգեշնչվելով հայ մշակույթով ու, մասնավորապես, գրական ժառանգությամբ, սկսել է ուսումնասիրել հայոց լեզուն: Հայերի ու Հայաստանի մասին նա նշել է. «Ինչպիսին էլ լինի նրանց ճակատագիրը, իսկ այն դառն է եղել, ինչ էլ որ նրանց սպասի ապագայում, նրանց երկիրը միշտ պետք է լինի երկրագնդի ամենահետաքրքիր երկրներից մեկը, և գուցե նրանց լեզուն միայն ավելի մեծ ուսումնասիրություն է պահանջում... Դա հարուստ լեզու է... Եթե Սուրբ Գիրքը ճիշտ է մեկնաբանվում, դրախտը Հայաստանում է գտնվել... Հայաստանում է առաջինը ջրհեղեղը նահանջել և աղավնին նստել»[2]:

[1] *Անի Ութուջյան,* Հայ ժողովրդի ծագման Միքայել Չամչյանի տեսությունը, տե՛ս Հայկական լեռնաշխարհը Հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2004, էջ 19:

[2] Lord Byron's Armenian Exercises and Poetry. Venice: in the Island of St. Lazzaro, 1870, p. 8, 10, 12.

Ըստ Մովսես Խորենացու (Vդ.), Հայոց ձորի ճակատամարտում Հայկն իր լայնալիճ աղեղից արձակած երեքթևյան նետով սպանեց Բելին: Հայկի հաղթանակը խորհրդանշում էր Լույսի ուժերի հաղթանակը խավարի հրոսակների նկատմամբ: Հայոց բուն թվականի՝ «Հայկայ շրջանի» պարբերականության վրա հիմնված տոմարագիտական հաշվարկը կատարել է մեծանուն հայագետ հայր Ղևոնդ Ալիշանը (1820-1901թթ.)[1]՝ նշելով, որ մ.թ.ա. 2492թ. նշանավորվել էր Հայկի հաղթանակով: Հայ Առաքելական եկեղեցու օրացույցը պահպանել է *Հայկյան* կամ *Բուն Հայոց* թվականը: 2008թ. լրացավ Հայկի հաղթանակի 4500-ամյակը, որը մեծ հանդիսավորությամբ նշեցին հայ ժողովուրդը և Արցախի ազատամարտում վերկերտված պանծալի Հայոց բանակը:

Հայ իրականության մեջ հոգևոր, գիտակրթական՝ ազգապահպան մեծ նշանակություն ունեցող Հայ Առաքելական եկեղեցու կողքին մեծ ներդրում ունի XVIII դարից ազգանպաստ մեծ գործ կատարող Մխիթարյան միաբանությունը:

[1] *Ղեւոնդ Ալիշան,* Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 79-81, 94-96:

6. ԵՎՐՈՊԱՅԻ ԿՐՈՆԱԴԱՐՁ ՀԱՅԵՐԻ ԽՄԲԵՐԸ

1950-ական թվականների վերջին Արևմտյան Գերմանիայում տնտեսական զգալի աճի արդյունքում առաջացել էին հազարավոր աշխատատեղեր: Այս հանգամանքը ստիպել է գերմանական իշխանություններին համեմատաբար ավելի էժան աշխատուժ փնտրել նվազ զարգացած երկրներում: 1955-1968թթ. Գերմանիայի և Իտալիայի, Իսպանիայի, Հունաստանի, Թուրքիայի, Մարոկոյի, Պորտուգալիայի, Թունիսի, Հարավսլավիայի միջև կնքվեցին պայմանագրեր, համաձայն որոնց՝ այդ երկրների որոշակի թվով քաղաքացիներ հնարավորություն էին ստանում մեկնել Գերմանիա՝ արտագնա աշխատանքի[1]: 1961թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիայի և Գերմանիայի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ այդ երկրից ևս սկսվեց, այսպես կոչված, «գաստարբայթերների» (հյուր աշխատող) ներհոսքն Արևմտյան Գերմանիա: Ըստ տարբեր մասնագետների կարծիքների, այդ պայմանագիրը ձեռնտու էր երկուստեք, քանի որ Գերմանիան

[1] *Губанов Н.,* Роль диаспоры в системе турецко-германских экономических отношений, Современная Турция: проблемы и решения (сборник статей), Институт Ближнего Востока, Институт Востоковедения РАН, Москва, 2006, с. 187.

ձեռք էր բերում էժան աշխատուժ, իսկ Թուրքիան որոշակիորեն լուծում էր իր երկրում առկա գործազրկության հարցը[1]: 1960-70-ական թվականներին թուրքերի՝ դեպի Եվրոպա սկսված ինտենսիվ արտագաղթի հետևանքով նախ Գերմանիայում, այնուհետև եվրոպական այլ երկրներում ձևավորվեցին թուրքական համայնքներ, և այսօր Եվրոպայում թուրքերի թիվը հասնում է մի քանի միլիոնի, ինչը լրջագույն խնդիր է դարձել եվրոպական մի շարք պետությունների համար:

Թուրքիայից Եվրոպա արտագաղթի այս ընդգրկուն թեմայի մեջ մեզ համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն, որ Եվրոպա արտագաղթածների մեջ, ըստ տարբեր տվյալների, եղել են հայեր, ընդ որում՝ ինչպես բացահայտ քրիստոնյա, այնպես էլ կրոնափոխ կամ ծպտյալ: Փաստերը ցույց են տալիս, որ Գերմանիա տեղափոխված աշխատուժի մեծ մասը հավաքագրվել է «արևելյան Անատոլիայում»[2], այսինքն՝ պատմական Հայաստանի այն տարածքներում, որտեղ ենթադրաբար պահպանվել են բռնի կրոնափոխված հայության բեկորներ: Կրոնափոխ հայերը և նրանց սերունդները մի քանի տասնամյակների ընթացքում Թուրքիայից գաղթել և հաստատվել են Գերմանիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Շվեդիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի տարբեր բնակավայրերում, և այսօր նշյալ երկրներում կան կրոնափոխ և կրոնադարձ (քրիստոնեություն վերընդունած) հայության համայնքներ կամ համայնքատիպ կառույցներ: Տեղափոխվելով աշխարհագրական նոր միջա-

[1] *Утургаури С.,* Турецкая диаспора в Германии: социокультурная эволюция, «80 лет новой Турции», материалы международной научной конференции, Москва, 2003, с. 250.
[2] Նույն տեղում:

վայր՝ կրոնափոխ հայերի և նրանց սերունդների շրջանում սկիզբ են առել և շարունակվում են որոշակի գործընթացներ և երևույթներ, որոնք կապված են իրական ինքնությունը փնտրելու կամ դրան վերադառնալու հետ։

Եվրոպաբնակ կրոնափոխ հայության շրջանում ամենատարածված և ուշագրավ երևույթը, անշուշտ, կրոնադարձությունն է՝ քրիստոնեության վերընդունումը։ Այսօր Եվրոպայի կրոնափոխ հայերի շրջանում ակունքներին վերադարձածների թիվը բավական մեծ է։ Ինչպես փոխանցում են մի շարք աղբյուրներ, քրիստոնեություն ավելի արագ վերընդունել են ծպտյալ հայերը, որոնք Թուրքիայում էլ գաղտնի պահպանել են քրիստոնեական որոշ սովորույթներ և ամեն բարենպաստ առիթ օգտագործել են ակունքներին վերադառնալու համար։ Առավելապես այս խմբից որոշ թվով հայեր Եվրոպա տեղափոխվելուց անմիջապես հետո կամ կարճ ժամանակ անց ընդունել են քրիստոնեություն։ Օրինակ, մի աղբյուրում հանդիպում ենք տվյալների, որ Թուրքիայից Գերմանիա տեղափոխված, արտաքուստ մուսուլման երևացող մի խումբ մարդիկ ինքնաբացահայտվել են հենց մաքսատանը և պաշտոնյային ներկայացրել ոչ թե անձնագրերում առկա մուսուլմանական, այլ հայկական անուններ[1]։ Այս ուշագրավ օրինակը ցույց է տալիս տասնամյակներով թաքցրած իրական ինքնությանը վերադառնալու ցանկությունը։ Ինչպես նշում է նույն աղբյուրը, վերոհիշյալ հայերն այսօր Գերմանիայում ունեն համայնք և եկեղեցի[2]։

[1] *Գևոնեան Թ.,* Ո՞վ է հայ, «Յոյս», Թեհրան, 2010, թիւ 6924։
[2] Նույն տեղում։

Սակայն, միևնույն ժամանակ, հարկ է շեշտել, որ եվրոպաբնակ հայերը ևս խնդիրներ ունեն ինքնությունը բացահայտելու հարցում, քանի որ իրենց ազգականների մի մասը ներկայումս էլ բնակվում է Թուրքիայում և կարող է դառնալ հալածանքի թիրախ, ուստի երբեմն նրանք ստիպված պահպանում են որոշակի զգուշություն: Կան ընտանիքներ, որոնք կրոնադարձվելուց հետո որոշակիորեն անհանգստանալով Թուրքիայում մնացած ազգականների համար՝ այդքան էլ բացահայտ չեն խոսում իրենց վերագտած ինքնության մասին և անգամ ունեն երկակի կենսակերպ: Նման օրինակ է Հոլանդիայում հաստատված դիարբեքիրցի Մերջանյանների ընտանիքը. նրանք 1970-ականներին Ամստերդամ տեղափոխվելուն պես վերընդունել են քրիստոնեություն, սակայն այսօր էլ Դիարբեքիրում ունեն ազգականներ: Ինչպես նշում է թուրք հետազոտող Ուղուր Ունգորը. *«Այսօր, երբ նրանք այցելում են Դիարբեքիրում մնացած իրենց ազգականներին, Եվրոպայի և Թուրքիայի միջև ինքնաթիռային թռիչքների ժամանակ կարելի է ականատես լինել մի կրոնից մյուսին անցման յուրահատուկ դրսևորման. կանայք արդեն ինքնաթիռում գլուխները ծածկում են գլխաշորով, հայկական անունների փոխարեն օգտագործում մուսուլմանական անուններ և Դիարբեքիրում իրենց պահում են մուսուլմանների պես»*[1]:

Գերմանաբնակ թուրք գրող Քեմալ Յալչընը ևս որոշ փաստեր է ներկայացնում Եվրոպայում ապրող կրոնադարձ հայերի շրջանում տարածված զգուշավորության մասին և մեզ

[1] *Ունգոր Ու.,* Կրոնափոխություն և փրկություն. գոյատևման ռազմավարությունը Հայոց ցեղասպանության ընթացքում, Տեղեկագիր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի, Երևան, 2008, թիվ 22, էջ 108:

ուղարկած իր նամակում նշում է. *«Ես Գերմանիայում մարդկանց գիտեմ, որոնք առաջացած տարիքում անգամ վերընդունում են քրիստոնեություն և մկրտվում: Իմ հետազոտությունների ընթացքում շատ իսլամացած, ծպտյալ հայեր կամ էլ, այսպես կոչված, «մերոնք», որոնք ազգականներ, մերձավորներ ունեն Թուրքիայում, պատմել են, որ նույնիսկ Գերմանիայում նրանք ստիպված են եղել երկար ժամանակ իրենց ինքնությունը թաքցնել: Շատ հայեր դեռ վախենում են, որ Ստամբուլի, Անատոլիայի իրենց մերձավորի, եղբոր, ընտանիքի հետ կարող է փորձանք պատահել: Այս վախի պատճառով էլ նրանք լռում են, թաքցնում իրենց իրական ինքնությունը: Այս վախը ոչ միայն Եվրոպայում ապրող թուրքահայերի շրջանում է տարածված, այլև դեռ առկա է նույնիսկ հեռավոր Արգենտինայում ապրող որոշ թուրքահայերի շրջանում»:*

Եվրոպայում բնակվող կրոնադարձ հայերի խմբերի մասին կցկտուր և համառոտ տվյալներ ենք հանդիպում տարբեր աղբյուրներում. օրինակ, Գերմանիայի Վիսբադեն քաղաքում, ըստ լրագրող Համո Մոսկովյանի, կա կրոնադարձ հայերի ռեստորան-հավաքատեղի, որը կոչվում է Անի: Հիշյալ քաղաքում ապրում են նաև կրոնադարձված մի խումբ հայեր, որոնցից, օրինակ, Նուրեդդին Գյունդենը, որը վերանվանվել է Սիմոն ու մկրտվել որպես քրիստոնյա, պնդում է, որ սերում է մեծ ֆիդայի Հրայր Դժոխքի տոհմից[1]:

Մի քանի աղբյուրից պարզ է դարձել, որ 1960-ականներին Թուրքիայից Գերմանիա տեղափոխված աշխատավորների մեջ

[1] *Մոսկոֆեան Հ.,* Տէ՛ր կանգնինք մեր «կորուսեալ» կրօնափոխ Հայո՛ւ զաւակներուն, http://www.keghart.com/Moskofian_Hamshen

որոշակի թիվ են կազմում նաև համշենահայերը, որոնք արդեն ազատ Եվրոպայում կարողանում են ներկայանալ և պահպանել իրենց իրական հայկական ինքնությունը[1]: Նույն Համո Մոսկովյանը նշում է համշենցի Սեդեթ Փոսթանի մասին, որն անվանափոխվել է՝ դառնալով Տիգրան Կոստանյան[2]:

Ինչպես վերը նշվեց, այսօր ակունքներին վերադարձած հայերի խմբեր կան նաև Շվեդիայում, որոնցից է ծնունդով Ադանայից Սուլեյման Ֆարուքը, որը, գտնելով իր իրական ինքնությունը, ընդունել է քրիստոնեություն և փոխել անունը՝ դառնալով Հայկ Արամյան: Նա մեկն է բազմահազար ուծացած հայերից, որոնք ապրում են թուրքի կամ քրդի արտաքին ինքնության քողի տակ: Դեռ մանկուց կասկածներ ունենալով իր ինքնության շուրջ՝ նա զբաղվել է արմատների որոնումներով և 1983թ. Դամասկոսում տեղի հայկական եկեղեցում մկրտվել է, իսկ երկու տարի անց՝ 1985թ., տեղափոխվել ու հաստատվել է Շվեդիայում: Իր ինքնության մասին նա նշում է. *«Ներքուստ ես միշտ զգում էի, որ ուրիշ եմ: Ես կարող էի քուրդ մնալ, բայց ես այլ կերպ որոշեցի»*[3]: Հաստատվելով Ստոկհոլմում՝ Հայկ Արամյանն ամուսնացել է այնտեղ բնակվող դիարբեքիրցի հայուհու հետ, երկու զավակներին անվանել Մասիս և Անի: Երեխաները, ի դեպ, սովորել և տիրապետում են հայերենին: Հատկապես ուշագրավ է, որ ակունքներին վերադարձած Հայկ Արամյանը ձգտում է իր երեխաների, այսինքն՝ նոր սերնդի մեջ արմատավորել ու էլ ավելի վառ պահել հայկականության զգացումը: Այդ

[1] Alt A., Tarihin ve Bugьnьn Aynasında Hemşin Ermenileri, İstanbul, 2005, s. 70.

[2] *Մոսկոֆեան Հ.,* Համշէնահայ ընտանիքի մը ողիսականը՝ Մայնի-Ֆրանքֆուրթի մէջ, Մասիս, Բեյրութ, հունիս, 2006, էջ 51:

[3] *Zenian D.,* Armenians by choice http://www.agbu.org/publications/article.asp?A_ID=47

նպատակով նա նրանց մի քանի անգամ արդեն բերել է Հայաստան ու Արցախ: Նա նշում է. *«Ես այնքան շատ բան էի բաց թողել, ես ուզում եմ, որ իմ երեխաները մեծանան՝ իմանալով, թե իրենք ով են: Ես ուզում եմ, որ իմ որդին հպարտանա իր հայկական ծագումով»*[1]: Այսօր Հայկ Արամյանը շվեդահայ համայնքի ակտիվ անդամներից է: Այստեղ հարկ է նշել, որ Հայկի ընտանիքի մի մասը մնացել է Ադանայում, այսինքն՝ կա այնտեղ հալածվելու վախը, որը, սակայն, չի կարողացել խոչընդոտել նրան իրական ինքնությանը վերադառնալու համար: Ավելին՝ մի քանի տարի առաջ Շվեդիա է տեղափոխվել նաև նրա եղբայրը և կրկին վերադարձել արմատներին՝ ընդունելով Արամ անունը:

Թուրքիայից Եվրոպա տեղափոխված հայերի մեջ կա մի յուրահատուկ շերտ, որը թեև կրոնափոխ չի եղել, սակայն հեռացել է ազգային արմատներից, կորցրել լեզուն և բռնել լիովին ուծացման ճանապարհը: Եվրոպա մեկնելու արդյունքում նրանք կարողացել են զգալիորեն վերականգնել իրենց հայկական ինքնությունը և, ըստ էության, վերադառնալ ակունքներին: Ուստի, ելնելով այս տրամաբանությունից՝ նրանց նույնպես ներկայացնում ենք իրենց հայկականությունը վերագտած հայերի շարքում:

Բելգիայում բնակվող հայերի նմանատիպ մի խմբի մասին հետաքրքրական հոդվածով է հանդես եկել Դավիթ Զենյանը, համաձայն որի՝ հիմնականում Շըրնաքից և Սիլոպից գաղթած քրդախոս հայերն այսօր վերադառնալով իրենց ինքնությանը՝ կազմում են տեղի առաքելական համայնքի հիմքը և հանդես

[1] Նույն տեղում:

գալիս որպես ջերմեռանդ քրիստոնյաներ[1]: Հոդվածագիրը նշում է. *«Բրյուսելում և Մարսելի Սբ. Ժերոմ արվարձանում ապրող, այսպես կոչված, քրդացած հայերը համարվում են տեղի Հայ Առաքելական եկեղեցու հիմքն ու պաշտպանը»*[2]: Նրանց երեխաները սովորում են հայերեն, և այդ միջոցով մայրենիին են սկսում տիրապետել նաև ծնողները: Բրյուսելի քրդախոս հայերի համայնքի կարևոր դեմքերից և հիմնադիրներից Մեսրոպ Աֆշարը, պատմելով հայրենիքում իրենց վիճակի մասին, նշում է. *«Վախը և ճնշվածության զգացումը մեր մշտական ուղեկիցներն էին: Ճնշումները շատ էին, բայց մեր մեծերը մշտապես հիշեցնում էին մեզ, որ չնայած լեզվի կորստին՝ մենք հայ ենք»*[3]: Աֆշարը Թուրքիայում իրենց կենսակերպի որոշ մանրամասներ է պատմում, որոնցից պարզ է դառնում, որ նրանք ծպտյալ հայեր են եղել և գաղտնի շարունակել են քրիստոնեական սովորույթները, ասորի քահանայի միջոցով գաղտնի մկրտել իրենց երեխաներին, կատարել հարսանյաց, թաղման քրիստոնեական արարողություններ: *«Գիշերվա քողի տակ մոտակա գյուղերից Շըրնաք էր գալիս ասորի ուղղափառ քահանան, մկրտում նորածիններին և գաղտնի հեռանում մինչ լուսաբաց քաղաքի քուրդ բնակչության ուշադրությունը գրավելուց խուսափելու համար: Հարսանիքներն ու թաղումները կատարվում էին նույն եղանակով»*[4]:

Ինչպես շատ վայրերում, այնպես էլ Շըրնաքում վերապրած ծպտյալ հայերն ունեցել են կրկնակի անձնանուններ՝ տան և

[1] *Zenian D.,* The new Armenians of Western Europe, http://www.agbu.org/publications/article.asp?A_ID=99
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

դրսի համար։ Նույն Մեսրոպ Աֆշարն այս մասին պատմում է. *«Մերոնց շրջապատում մենք հայեր էինք։ Մկրտելիս մեր երեխաներին տալիս էինք հայկական անուններ, օրինակ՝ Սարգիս, Դավիթ, Նուբար, Գևորգ և Սարո, բայց արտաքին միջավայրում մենք նման էինք քաղաքի մնացած բնակիչներին։ Մենք կրում էինք քրդական անձնանուններ, օրինակ՝ Էուզ, Յալիք, Օդեմիշ, Բիրջին։ Մենք չէինք կարող գոռալ մեր ինքնության մասին։ Գուցե ձեզ դժվար լինի հասկանալ, բայց պրակտիկ նպատակներով մենք խաղաղ ապրում էինք որպես հայկական ծագում ունեցող քրդեր՝ պահպանելով մեր հայկական քրիստոնեական հավատը»*[1]։

Ավելորդ չէ նշել, որ հայերի այս խմբի փրկության և հայկականության վերադարձի մեջ լուրջ դեր է ունեցել Պոլսո պատրիարք, լուսահոգի Շնորհք Գալուստյանը, որի ջանքերով 1960-ականների կեսերին հայության այս բեկորները նախ սկսել են Շըրնաքից և Սիլոպից տեղափոխվել Ստամբուլ, իսկ այնուհետև՝ 1980-ականներին, Բելգիա, Ֆրանսիա, Հոլանդիա։

Թուրքիայից Եվրոպա տեղափոխված հայության մեջ յուրահատուկ խումբ է «Էրմենի Վարթո» անվանված ցեղախումբը, որն անցել է խիստ դրամատիկ զարգացումներով լի ուղի։ Հայոց ցեղասպանության տարիներին Շըրնաք նահանգում բնակվող բազմամարդ հայկական մի ցեղախումբ, որն իր առաջնորդի՝ Վարդանի անունով կոչվում էր Վարթո, կարողանում է խույս տալ կոտորածից և ապաստանել լեռներում։ Այնուհետև փրկված հայերի այս խումբը, մեկուսանալով ամբողջ աշխարհից, անասելի պայմաններում սկսում է գոյապայքար, որը տևում է մի

[1] Նույն տեղում։

քանի տասնամյակ։ Այդ ընթացքում ինքնապահպանման բնազդը դրդում է նրանց խախտել քրիստոնեության մեջ պարտադիր համարվող արյունակիցների միջև ամուսնություններ չկնքելու սովորույթը և հարկադրաբար կնքել ներցեղային ամուսնություններ։ Կրոնական արգելքի խախտման արդյունքում բազմացած ցեղախմբի անդամները, միևնույն ժամանակ, լինում են խիստ կրոնասեր քրիստոնյաներ։ Վարթո ցեղախմբի անդամ է նաև Հրանտ Դինքի այրին՝ Ռաքել Դինքը, որին, 2009թ. մայիսին Ստամբուլում կայացած մեր անձնական զրույցի ժամանակ, հարցրինք ներցեղային ամուսնությունների և քրիստոնեական սովորույթի միջև եղած հակասության մասին։ Նա պատասխանեց, թե Պողոս Առաքյալը մի միտք ունի, որի համաձայն՝ ստիպողաբար գործված մեղքը մեղք չի համարվում։ Ապա հավելելով, որ արյունակիցների միջև ամուսնությունների ժամանակ մեծ է հիվանդությունների հավանականությունը, Ռաքել Դինքն ասաց. *«Մեր ցեղի մեջ հիվանդ կամ մտավոր հետամնաց մարդիկ չկան, և սա մենք համարում ենք Աստծո շնորհ ու նշան, որ մեր ստիպողաբար գործված մեղքը մեղք չի համարվել»։*

Անհավատալի կերպով գոյատևած Վարթո ցեղախմբի մասին Ստամբուլի հայկական համայնքում տեղեկանում են միայն 1960-ականների վերջին։ Պոլսո այն ժամանակվա պատրիարք Շնորհք Գալուստյանի և Հայ Ավետարանական եկեղեցու սպասավոր, պատվելի Հրանտ Գյուզելյանի ջանքերով ցեղախմբի նախ դպրոցահասակ երեխաները, այնուհետև ամբողջ ցեղախումբը տեղափոխվում են Ստամբուլ։ Իհարկե, հայ հոգևորականների այս նախաձեռնությունը հանդիպում է թուրքական հատուկ ծառայությունների կոշտ արձագանքին, որոնք ամեն

կերպ ցանկանում են խոչընդոտել փրկված հայության բեկորների վերազարթոնքին: Ինչևէ, շուրջ մեկ տասնամյակ Ստամբուլում անցկացնելուց հետո Վարթո ցեղախումբը որոշում է գաղթել Եվրոպա, և այժմ Թուրքիայում նրանցից մնացել է միայն մեկ ներկայացուցիչ՝ Ռաքել Դինքը: Մեզ հասած տարբեր աղբյուրներից տեղեկանում ենք, որ Եվրոպայում ևս Վարթո ցեղախումբը հիմնականում շարունակել է ապրել ներցեղային որոշակի օրենքներով, որոնք պարտադիր են բոլորի համար: Բավական հետաքրքիր է նաև, որ Վարթո ցեղախումբը տարիներ շարունակ պայքարել է իրենց հողերը զավթած քրդերի դեմ, և ներկայումս էլ դատական գործերը շարունակվում են: Ինչպես նշում է Ռաքել Դինքը, իր հայրը՝ ցեղապետ Սիյամենթը, 2004թ. Բրյուսելում մահվան մահճում իր երեխաներից պահանջել է, որ նրանք շարունակեն հետամուտ լինել իրենց հողերը վերադարձնելու գործին:

Սակայն հարկ է խոստովանել, որ Վարթո ցեղախմբի պատմության շատ մանրամասներ դեռևս լուսաբանված չեն, իսկ Եվրոպայում ներկայումս նրանց վիճակի մասին գրեթե տեղեկություն չկա: Այդ առումով խիստ ուշագրավ է թուրքական *Hurriyet Daily News* թերթի հայազգի լրագրող Վերջիհան Զիֆլիօղլուի 2011 թվականի հունվարին տպագրած հոդվածը[1], որտեղ նա պատմում է Եվրոպայում Վարթո ցեղախմբի ներկայիս վիճակի մասին: Ըստ Զիֆլիօղլուի, այսօր Վարթո ցեղախումբը կազմում է 1200 մարդ, որոնք հիմնականում բնակվում են Մարսելում և Բրյուսելում: Այսօր էլ նրանք մեծ մասամբ թուրքախոս

[1] *Zifliogłu V.,* Varto Armenian clan makes long trip from Turkey to France, Hürriyet Daily News, 14,01, 2011.

կամ քրդախոս են[1]: Ցեղախմբի անդամների մի մասը զբաղվում է բիզնեսով՝ մուշտակագործությամբ, դերձակությամբ և այլն[2], սակայն կան նաև հասարակական-քաղաքական ոլորտում ընդգրկված «վարթոյականներ»[3]: Ռաքել Դինքի ազգականներից մեկը՝ Սամվել Յաղըրը, լրագրող Զիֆլիօղլուի հետ զրույցում անդրադառնում է ցեղախմբի՝ Եվրոպա արտագաղթի խնդրին՝ ասելով. *«Մեր ցեղախմբից մի երիտասարդ 1980թ. զինվորական հեղաշրջման ժամանակ մասնակից էր եղել դեպքերին և այնուհետև փախել Ֆրանսիա: Երբ մեզնից որևէ մեկը վտանգի մեջ է լինում, մենք բոլորս միասին համախմբվում ենք նրա կողքին. սրան կարող եք ասել ինքնությունը պաշտպանելու բնազդ, այնուամենայնիվ, ցեղի ավագները նորից հավաքվելով՝ մի նոր գաղթի ծրագիր մշակեցին, և կրկին ճամփա ընկանք: Երկու խմբերով, տարբեր ուղիներով հասանք Մարսել և Բրյուսել: Ներկայումս թեկուզ տարբեր երկրներում ենք ապրում, սակայն կրկին միասին ենք և միմյանցից տեղյակ ենք»*[4]: Ռաքել Դինքի հորեղբորորդի Պարգև Յալիչը, խոսելով Հայաստանի հանդեպ իրենց վերաբերմունքի մասին, ուշագրավ հայտարարություն է անում. *«Ֆրանսիայում և Բելգիայում մենք խնդիր չունենք, սակայն մեր սիրտը Հայաստանի կողքին է, մեկ էլ տեսար մի որոշում ընդունենք և բոլորս միասին Հայաստան գաղթենք»*[5]: Այս ամենը ցույց է տալիս, որ վերապրած հայերի սույն խմբի մեջ վառ է պահպանվել նաև ազգային ինքնագիտակցությունը:

[1] Նույն տեղում:
[2] *Akar R.,* Cudi'li Rakel'in masalı, Aktüel, İstanbul, 30,12,1999, s. 54.
[3] *Zifliogłu V.,* Varto Armenian clan makes long trip from Turkey to France, Hürriyet Daily News, 14,01, 2011.
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:

Տարբեր աղբյուրներ փաստում են, որ այսօր Եվրոպայում բնակվող և քրիստոնեություն վերընդունած հայերը կրոնի հարցում շատ ավելի ջերմեռանդ են։ Այստեղ կա նաև հոգեբանական կողմ, այն է՝ շրջապատին ապացուցել հայկականության հանդեպ իրենց հավատարմությունը։ Իրական ինքնությանը վերադարձած հայերի շրջանում նկատվում են նաև որոշ հոգեբանական և հոգեկան խնդիրներ։ Ոմանք անգամ բուժման կուրսեր են անցել հոգեբան բժիշկների մոտ. վերջիններիս ախտորոշումը եղել է այն, որ կրոնադարձ հայերի հոգեկան վիճակի մեջ կարևոր և որոշիչ դեր են ունեցել Հայոց ցեղասպանության տրավմատիկ հիշողությունները, տասնամյակներով ապրած վախի և սպառնալիքի մթնոլորտն ու իրական ինքնությունը շարունակ թաքցնելը։

Պետք է փաստել նաև, որ Եվրոպայում ևս բռնի կրոնափոխ հայերի և քրիստոնյա հայ համայնքների միջև հարաբերությունները ցանկալի հունով չեն ընթանում և փոխադարձ ընկալման խնդիրը ողջ սրությամբ արտահայտվում է նաև այնտեղ, ինչը բացասական հետևանքների է հասցնում։ Համաձայն որոշ աղբյուրների, այսօր Եվրոպայում քրիստոնեություն վերընդունած հայության մի մասը կարողացել է փոքր-ինչ ինտեգրվել տեղի հայկական համայնքներին, իսկ մի մասն էլ, խորթության հանդիպելով համայնքների կողմից, շարունակում է վարել ավելի մեկուսի կենսակերպ և համայնքային կյանքից դուրս մնալ։ Այս խնդիրը կապված է ինչպես մշակութային տարբերության, այնպես էլ փոխադարձ անվստահության հետ։ Օրինակ՝ Գերմանիայում հաստատված, քրիստոնեություն վերընդունած համշենահայ Ալիյե Ալթը պատմում է. *«Համայնքի շատ անդամների*

հետ լավ հարաբերություններ ունեմ, սակայն խորթություն էլ է նկատվում: Աշխատում եմ հայերեն սովորել, հասկանում եմ և կարողանում եմ մի քիչ խոսել: Մի օր եկեղեցում էի, լսեցի, որ մեկը հայերեն ասաց. «Այս թուրքը ի՞նչ է փնտրում այստեղ, ինչո՞ւ է եկել»: Սակայն ես շատ մեծ կարևորություն չեմ տալիս համայնքի՝ ինձ լիովին ընդունելու խնդրին: Ես զգում եմ, որ պատկանում եմ այս ազգին, և դա արդեն բավարար է»[1]:

Փոխադարձ խորթությունը պայմանավորված չէ միայն քրիստոնյա հայերի կամ «հին համայնքի» վերաբերմունքով: Երբեմն հենց Թուրքիայից տեղափոխված կրոնափոխ հայերն են ձգտում ավելի թուրք երևալ, որպեսզի չդառնան իրենց շրջապատող թուրքերի թիրախ: Բացի այդ, այս ամենում մեծ դեր ունի տասնամյակներով վախի մթնոլորտում ապրելու հանգամանքը: Սակայն անգամ նման մարդկանց մեջ երբեմն տեղի են ունենում ինքնության վերազարթոնքի երևույթներ, որոնք, թերևս, կախված չեն նրանց կամքից: Նման հետաքրքիր փաստի ենք հանդիպել համացանցային ֆորումներից մեկում, որտեղ հոլանդաբնակ մի քրիստոնյա հայ պատմում է. *«Նոր էինք եկել Հոլանդիա, գտնվում էինք ֆիլտրացիոն ճամբարում, կատարյալ բաբելոնյան խառնաշփոթ էր, ինչ ազգի ու գույնի մարդ ասես կար: Բնականաբար, յուրաքանչյուրս գնաց իր երամի կողմը, հավաքվեցինք հայերով իրար կողք, մյուս ազգերն էլ իրար կողք: Շատ էին քրդերն ու թուրքերը: Այս թուրքերի մեջ մեկը կար հիսուն տարեկանի մոտ, կնոջ ու երկու գեղեցկուհի աղջիկների հետ: Շատ ակտիվ էր. ակումբում, ուր մեզ հավաքում էին ինչ-որ*

[1] *Asal M.,* Frankfurt'ta Hemşinli Bir Ahçik: Aliye Alt
http://www.hyetert.com/yazi3.asp?s=0&Id=451&DilId=1

միջոցառման համար, թուրքերեն երգում էր, տեղի-անտեղի Թուրքիայի դրոշն էր ծածանում: Մի անգամ էլ հոլանդացի համերգավարը Թուրքիայի անունը տվեց, սա տեղից վեր թռավ ու սկսեց ծափ տալ, մյուս թուրքերը սկսեցին ծիծաղել: Թուրքերից մեկի հետ մոտիկ էի, հարցրի, թե ինչու են ծիծաղում, ասաց. «Ձեր ազգից է, իրեն ճղում է, որ թուրք երևա»: Ահավոր ատելությամբ էի լցվել դրա հանդեպ: Մի օր էլ գնացել էինք մեր քաղաքի կաթոլիկ եկեղեցին, քանի որ հայկական չկար, մեկ էլ ականջիս լացի ու հեկեկոցի ձայներ եկան, շուռ եկա՝ տեսնեմ այդ մարդը այան հետևը մտած հոնգուր-հոնգուր լաց է լինում: Հասկացա, որ մարդու մեջ ինչ-որ բան է արթնացել, կամ հենց նոր ինչ-որ բան մեռավ, ու մենք երբեք չենք հասկանա օտար հողում ծնված, օտարի ձեռքի տակ մեծացած, իր արմատներից հեռացած, բայց ամեն դեպքում հայի գենը պահած մարդու ողբերգությունը»[1]:

Ամփոփելով՝ նշենք, որ եվրոպաբնակ կրոնափոխ և կրոնադարձ հայերի թեմայի ուսումնասիրությունը ոչ միայն գիտական մեծ կարևորություն, այլև խիստ այժմեական նշանակություն ունի: Պետք է նկատել, որ Թուրքիայից Եվրոպա գաղթած հայերի այս խմբի խնդիրը կրոնափոխ և ուծացած հայերի ընդհանուր թեմայի ուշագրավ և, միևնույն ժամանակ, յուրահատուկ մասն է կազմում: Հայտնի է, որ ընդհանրապես կրոնափոխ հայության ներկայիս վիճակի մասին տվյալները, փաստերը շատ քիչ են, և եթե վերջին տարիներին Թուրքիայի իսլամացված հայերի մասին ի հայտ են գալիս որոշ տվյալներ, ապա Եվրոպայում բնակվողների վերաբերյալ նյութերն անհամեմատ ավելի քիչ են, ուստի հարկ է այս ուղղությամբ կոնկրետ քայլեր կատարել:

[1] http://www.armtown.com/news/am/azg/20091107/2009110701/

Բացի այդ, Եվրոպայում ստեղծված պայմաններն անհամեմատ ավելի նպաստավոր են հայության այս շերտի վերինտեգրման համար, ինչի ուղղությամբ վաղուց պետք էր քայլեր անել։ Եվրոպայի հայ համայնքների ղեկավարները և կազմակերպիչները պետք է գործուն քայլեր անեն քրիստոնյա և կրոնադարձ հայության միջև փոխադարձ խորթությունը և առկա խնդիրները լուծելու համար, քանի որ նրանց վերինտեգրումը հայության ընդհանուր ճակատում էլ ավելի միասնական և արդյունավետ կդարձնի համազգային խնդիրների համար մղվող պայքարը։

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ չհանդիսացող հայերը կազմում են հայկական հանրության 10-20%-ը, և այս իրողության հետ հնարավոր չէ հաշվի չնստել։ Պետք է առանձնապես շեշտել այն հանգամանքը, որ չնայած կրոնադավանանքային տարաբաժանմանը, մեր հայրենակիցները հայկական քաղաքակրթական արժեքների կրողներն են և իրենց ավանդն ունեն այդ քաղաքակրթության ձևավորման գործում։

Այս համատեքստում տեղին է հիշել Վենետիկի Մխիթարյան միաբանության 300-ամյա գործունեությունը։ Անառարկելիորեն մեծ են Մխիթարյան հայրերի և կաթոլիկ հայերի գործունեության դերն ու նշանակությունը հայոց լեզվի, գրականության, մշակույթի և գիտության պահպանման և զարգացման գործում։

Ավետարանական հայերի պարագայում, բացի հայապահպանության գործում ունեցած մեծ ավանդից (այս հարցում հատկապես առանձնացնելով Բեյրութի Հայկազյան համալսարանի գործունեությունը), հայկական քաղաքակրթությանը նրանց պատկանելությունն ամրապնդվում է նաև հայոց մեջ ավետարանականության ներքին՝ հայկական ծագման վերաբերյալ ինքնընկալումներով, ինչպես նաև հայ ժողովրդի պատմական ճակատագրում ավետարանական հայերի խաղացած նշանակալի դրական դերով։ Այս կարծիքը հիմնավորելու համար բավական է միայն հիշատակել, որ Աստվածաշունչն առաջին անգամ աշխարհաբար հայերենով թարգմանվել և հրատարակվել է հայ ավետարանականների կողմից։

Իսլամացված հայերը Հայ Առաքելական եկեղեցուն չպատկանող հայերի ամենաանպաստ պայմաններում հայտնված շերտն են։ Միայն այն հանգամանքը, որ հայերի զանգվածային բռնի իսլամացումը տեղի է ունեցել հայկական կոտորածների և Ցեղասպանության տարիներին, նրանց ծանր դրության խոսուն փաստ է։ Չնայած դրան, իսլամացված հայերի պարագայում նույնպես նկատելի են հայկական ընդհանրությանը պատկանելության դրսևորումներ, ինչպիսիք են, օրինակ, գաղտնի հավատարմությունը նախնիների հավատքին, լեզվին, մշակույթին և ավանդույթներին, հիշողությունը հայկական ծագման և ինքնագիտակցության վերաբերյալ, նպաստավոր պայմանների ի հայտ գալու պարագայում ազգային ինքնագիտակցության վերելքը, որը դրսևորվում է շատ հաճախ հայադարձությամբ, կրոնադարձությամբ (վերաքրիստոնեացում) և այլն։

Ընդհանուր քաղաքակրթական հիմքի առկայության պարագայում Հայության մեջ տարբեր կրոնադավանական հատվածների առկայությունը, չնայած առկա բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմնախնդիրներին, հանդես է գալիս ոչ թե ազգը պառակտող, այլ Հայության հոգևոր-մշակութային բազմազանությունը և Հայության ներքին հարստությունն ապահովող գործոն, քանզի հարստության նշանը բազմազանությունն է, իսկ միօրինակությունը, ընդհակառակը, վկայում է աղքատության կամ սնանկության մասին։ Հայության ներքին բազմազանությունը միևնույն ժամանակ ընդլայնում է նրա հնարավորությունները տարատեսակ մարտահրավերների և խնդիրների լուծման ասպարեզում՝ բացելով ազգային ներուժի զորեղացման նոր հորիզոններ։

Այսօր Հայության տարբեր կրոնադավանական հատվածների առնչությամբ գլխավոր խնդիրը տեսական-հայեցակարգային և գործնական մեխանիզմների մշակումն ու գործարկումն է՝ միասնականությունն ու համախմբումն ամրապնդելու նպատակով։

Տեսական-հայեցակարգային առումով որպես այդպիսի համախմբող մեխանիզմ կարող է լինել տեղեկատվական դաշտում այն գաղափարա-աշխարհայացքային դրույթների առաջքաշումը, որոնք ընդհանուր են և նույնատիպ հույզեր են արթնացնում Հայության տարբեր կրոնադավանանքային հատվածների շրջանում։

Որպես այդպիսի գաղափարական-աշխարհայացքային դրույթ հանդես է գալիս առաջին հերթին ընդհանուր ազգային պատկանելության գիտակցությունը։ Կաթոլիկ, ավետարանական և իսլամացված հայերի գիտակցությունում կրոնական պատկանելության զգացումն առաջնայնության առումով տեղը պետք է զիջի հայ լինելու գիտակցությանը՝ հիմք հանդիսանալով ազգային համերաշխության և համագործակցության մթնոլորտի ամրապնդման համար։

Հաջորդ հայեցակարգային դրույթը, որն առավելապես կիրառական է քրիստոնեության տարբեր ճյուղեր ներկայացնող հայերի միջև միջդավանական հանդուրժողականության մթնոլորտի ձևավորման համար, ընդհանուր կրոնական՝ քրիստոնեական պատկանելության մասին գիտակցությունն է։ Քրիստոնյա լինելու գիտակցությունն առաջնայնություն պետք է ձեռք բերի առաքելական, կաթոլիկ կամ ավետարանական լինելու գիտակցության նկատմամբ։

Երրորդ կարևոր դրույթն աշխարհիկությունն է: Օգտվելով արդի աշխարհում մեծ տարածում ստացած աշխարհիկության ոգուց՝ Հայության ազգային համախմբման նպատակով անհրաժեշտ է Սփյուռքի համայնքներում նոր թափ հաղորդել աշխարհիկ կառույցների ստեղծմանն ու ակտիվ գործունեությանը: Ընդհանուր ազգային բովանդակությամբ աշխարհիկ գործերն, ընդհանուր Հայրենիքի հզորացմանն ուղղված ծրագրերը, կարող են և պետք է հետին պլան մղեն դավանանքային տարաձայնությունները:

Ինչ վերաբերում է Հայության տարբեր կրոնադավանանքային շերտերի միջև համերաշխության ապահովման գործնական հիմքերին, ապա այս հարցում լուրջ մեխանիզմ է գործնական կյանքի այն բնագավառների առաջնայնացումը, որոնք համագործակցության դաշտ են ապահովում այդ հատվածների համար: Սփյուռքի հայ համայնքներում գործնական կյանքի այդպիսի ոլորտ է հայապահպանությունը, որը ենթադրում է համազգային ջանքերի համատեղում, այդ թվում նաև՝ ակտիվ համագործակցություն Հայության տարբեր կրոնադավանանքային հատվածների միջև:

Մեր համայնքներում տարբեր կրոնադավանանքային հատվածների միջև ակտիվ համագործակցություն ենթադրող գործնական կյանքի մյուս բնագավառը համատեղ պայքարն է համազգային խնդիրների լուծման համար, ինչպիսիք են, օրինակ, պայքարը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, Արցախյան հիմնահարցի արդարացի կարգավորման համար և այլն:

Սփյուռքի կրոնադավանանքային հատվածների համար համագործակցության դաշտ ապահովող գործնական կյանքի կարևորագույն բնագավառ է նաև տվյալ երկրի հասարակական-քաղաքական մթնոլորտով հարուցված մարտահրավերներին (պատերազմներ, ներքաղաքական ցնցումներ, այլատյացություն, ահաբեկչություն և այլն) դիմագրավումը, քանի որ դրանք ընդհանուր են բոլոր հայերի համար՝ անկախ կրանական կամ դավանանքային պատկանելությունից։

Պատմության փորձը ցույց է տվել, որ Հայության տարբեր կրոնադավանանքային հատվածների միջև համագործակցությունն ընդհանուր խնդիրների լուծման հարցում տալիս է ցանկալի արդյունք։ Նման համագործակցությունն անհրաժեշտություն է ոչ միայն ընդհանուր մարտահրավերներին առավելագույն արդյունավետությամբ դիմագրավելու, այլև ազգային համախմբման և ինքնագիտակցության վերելքի առումներով։ Այդպիսի համագործակցությունը կարող է տեղի ունենալ երկու մակարդակներով՝ անհատական և ինստիտուցիոնալ։

Անհատական համագործակցությունը, որը տեղի է ունենում տարբեր կրոնադավանանքային պատկանելություն ունեցող անհատ հայերի միջև, դրսևորվում է, օրինակ, համազգային և աշխարհիկ կառույցների գործունեության մեջ նրանց ընդգրկվածության, համազգային և աշխարհիկ միջոցառումներին մասնակցության և այլ ձևերով։

Ինստիտուցիոնալ մակարդակով համագործակցությունը, որն առավել կարևոր նշանակություն ունի ազգային համախմբման և համերաշխության ապահովման տեսանկյունից, տեղի է ունենում Հայության տարբեր կրոնադավանանքային շերտերի

ինստիտուցիոնալ կառույցների միջև: Այս մակարդակով համագործակցության դրսևորումներն են՝ համատեղ կառույցների ստեղծումն ու կառավարումը, Հայաստանի Սփյուռքի նախարարության հետ համատեղ միջոցառումների կազմակերպումը, համազգային կառույցների կառավարման մարմիններում ինստիտուցիոնալ մակարդակով ընդգրկվածությունը («Հայաստան» համահայկական հիմնադրամն այլն):

Ինստիտուցիոնալ մակարդակով համագործակցության վերոհիշյալ ձևերին կարելի է ավելացնել նաև Սփյուռքի համայնքներում Հայության կրոնադավանանքային հատվածները ներկայացնող կառույցների գործունեությունը համակարգող խորհուրդների ստեղծումը:

РЕЗЮМЕ

Армяне, не принадлежащие Армянской Апостольской церкви, составляют 10-20% всего Армянства, и с этим фактом невозможно не считаться. Нужно особо подчеркнуть то обстоятельство, что, несмотря на конфессиональные отличия, наши соотечественники являются носителями армянских цивилизационных ценностей и внесли свой вклад в формирование этой цивилизации.

В этом контексте вспомним 300-летнюю деятельность Конгрегации Мхитаристов в Венеции. Трудно переоценить роль и значение мхитаристов и армян-католиков в сохранении и развитии армянского языка, литературы, культуры и науки.

В случае с армянами-евангелистами, помимо весомого вклада в сохранение армянства (в этом плане особо отметим деятельность Бейрутского университета «Айказян»), их принадлежность к армянской цивилизационной общности подкрепляется, в том числе, их самовосприятием в вопросе внутреннего, исконно армянского происхождения евангелизма, а также той значительной положительной ролью, которую сыграли армяне-евангелисты в исторической судьбе армянского народа. Для обоснования этого мнения достаточно упомянуть, что первый перевод и издание Библии на новоармянский язык (ашхарабар) сделали армяне-евангелисты.

Исламизированные армяне – это не входящий в Армянскую Апостольскую церковь пласт армянства, оказавшийся в наиболее

неблагоприятных условиях. Об этом красноречиво свидетельствует массовая насильственная исламизация армян, имевшая место в период резни и Геноцида. Несмотря на это, среди исламизированных армян также заметны проявления принадлежности к армянской общности: например, тайная приверженность вере, языку, культуре и традициям предков, память об армянском происхождении и самосознании, подъем национального самосознания при наличии благоприятных условий, зачастую выражающийся в форме признания своей армянской национальной идентичности, верообращения (рехристианизации) и пр.

Наряду с существованием общего цивилизационного фундамента наличие разных конфессиональных сегментов в Армянстве, несмотря на множество объективных и субъективных проблем, необходимо воспринимать не как фактор разобщенности, а как проявление духовно-культурного многообразия Армянства, обеспечивающее внутреннее богатство нашей нации, поскольку многообразие – знак богатства, а однообразие, наоборот, свидетельствует о бедности или скудности. Внутреннее разнообразие Армянства одновременно расширяет его возможности в плане противостояния разным вызовам и проблемам, открывая новые горизонты усиления национального потенциала.

Сегодня главной задачей, относящейся к разным конфессиональным сегментам Армянства, является разработка и задействование теоретико-концептуальных и практических механизмов, нацеленных на укрепление нашего единства и консолидации.

В концептуальном плане в качестве такого консолидирующего механизма может служить продвижение в информацион-

ном пространстве тех идейно-мировоззренческих постулатов, которые совпадают и вызывают схожие эмоции среди разных религиозно-конфессиональных сегментов Армянства.

В качестве такого идейно-концептуального постулата, прежде всего, выступает осознание общей национальной принадлежности. В сознании исповедующих католицизм, евангелизм или исламизированных армян приоритетное осознание своей конфессиональной принадлежности должно смениться осознанием собственной национальной идентичности, что станет основой для национального согласия и укрепления атмосферы сотрудничества.

Следующий постулат, наиболее подходящий для формирования атмосферы терпимости среди армян, представляющих разные ветви христианства, – осознание общей принадлежности к христианству. Осознание себя христианином должно превалировать над узко конфессиональным самосознанием.

Третий важный постулат – светскость. Армянство в целях национальной консолидации должно придать новый размах созданию и активной деятельности светских структур в общинах Диаспоры. Инициативы и программы общенационального содержания, нацеленные на усиление общей Родины, могут и должны оттеснить конфессиональные разногласия.

Что касается основ обеспечения согласия между разными конфессиональными сегментами Армянства, то в этом вопросе серьезным механизмом является выделение сфер практической жизни, обеспечивающих возможность сотрудничества между ними. Такой практической сферой для армянских общин Диаспоры

выступает сохранение армянской идентичности, предполагающее совмещение общенациональных усилий, в том числе и активное сотрудничество между разными конфессиональными сегментами Армянства.

Другой практической сферой, предполагающей активное сотрудничество между разными конфессиональными сегментами диаспоральных общин, является совместная борьба за решение общенациональных проблем, например, борьба за международное признание и осуждение Геноцида армян, справедливое урегулирование Арцахской проблемы и т.д.

Важнейшей сферой практической жизни, обеспечивающей пространство для сотрудничества между разными конфессиональными сегментами Диаспоры, выступает также противостояние вызовам, выдвигаемым общественно-политической обстановкой данной страны (войны, внутриполитические потрясения, ксенофобия, терроризм и др.), поскольку они одинаковы для всех армян, независимо от их религиозной или конфессиональной принадлежности.

Исторический опыт показал, что сотрудничество разных конфессиональных сегментов Армянства для решения общих проблем дает желаемый результат. Такое сотрудничество необходимо не только для максимально эффективного противостояния общим вызовам, но и в аспекте национальной консолидации и подъема самосознания. Это сотрудничество может развиваться на двух уровнях – индивидуальном и институциональном.

Индивидуальное сотрудничество между отдельными армянами, принадлежащими к разным конфессиям, проявляется, на-

пример, в виде их вовлеченности в деятельность общенациональных и светских структур, участии в общенациональных и мирских мероприятиях и в других формах.

Сотрудничество на институциональном уровне, наиболее значимое в плане обеспечения национальной консолидации и согласия, осуществляется между институциональными структурами разных конфессиональных сегментов Армянства. Проявлениями сотрудничества на этом уровне выступают создание и управление совместными структурами, организация мероприятий совместно с Министерством Диаспоры РА, институциональная вовлеченность в органы управления общенациональных структур (общеармянский фонд «Айастан» и др.).

На институциональном уровне к вышеупомянутым формам сотрудничества можно добавить создание советов, координирующих деятельность структур, представляющих конфессиональные сегменты Армянства в общинах Диаспоры.

SUMMARY

According to different estimations the Armenians who do not adhere the Armenian Apostolic Church constitute 10-20% of the Armeniancy. It should be especially underlined that despite their religious and confessional differences our com-patriots are bearers of the Armenian civilizational values and they have contributed to the formation of that civilization.

In this context it is appropriate to remember the 300-years' activity of the Mkhitarian congregation. The role and the significance of the activity of the Mkhitarian Armenians and Catholic Armenians in preserving and development of the Armenian language, literature, culture and science is unquestionable.

In case with the Evangelical Armenians, besides great contribution to the work of preserving Armenian language and culture (in this issue Haykazian University in Beirut particularly stands out), their belonging to the Armenian civilization is also substantiated by the self-perceptions connected with the internal Armenian origin of the Evangelism, as well as by the remarkable role of the Evangelical Armenians in the history of the Armenian people. To substantiate this opinion it is suffice to mention that for the first time the Bible was translated in Ashkharhabar (modern Armenian) and published by the Evangelical Armenians.

The Islamized Armenians are the strata of the Armeniancy which does not adhere to the Armenian Apostolic Church and which appeared in the most unfavorable conditions. Only the fact that the forced convertion of the Armenians to Islam took place in the years of the Armenian Genocide, is the vivid example of their hard situation. Despite this, even in case with the Islamized Armenians we can observe manifestations of their belonging to the Armenian whole, such as, e.g. secret adherence to the religion, language, culture and traditions of their ancestors, memories of their Armenian origin and self-consciousness, the upsurge of the self-consciousness which is very often manifested in reclaiming their self-identity, religion (reconversion to Christianity) and etc.

In case if there is a common civilizational ground the availability of the different religious and confessional segments in the Armeniancy, despite various objective and subjective problems, is a factor which rather provides spiritual and cultural diversity and inner richness of the Armeniancy than splits it, as the diversity is a sign of richness, meanwhile uniformity proves either its shallowness or insolvency. The inner diversity of the Armeniancy at the same time broadens its possibilities in facing various challenges and setting different problems, by opening new prospects for the development of the national potential.

Today the main issue regarding different religious and confessional segments of the Armeniancy is the elaboration and implementation of theoretical-conceptual and practical mechanisms directed to their consolidation.

In theoretical-conceptual aspect putting forward the ideological and civilizational postulates which are common for all the segments of the Armeniancy and arouse the same emotions can be used as such mechanisms.

First of all the consciousness of the same national belonging can be used as such a postulate. Among the Catholic, Evangelical and Islamized Armenians the consciousness of religious affiliation should yield to the consciousness of their being Armenian, thus serving as a ground for strengthening the atmosphere of nationwide peace and cooperation.

Another conceptual postulate which can be used for forming the atmosphere of tolerance between different Christian Armenian confessions is the consciousness of being Christians. The consciousness of being Apostolic, Catholic or Evangelical should be inferior to the consciousness of being Christian.

The third important condition is secularism. Taking advantage of the prevalence of secularism in the modern world, it is necessary to attach additional impulse to the process of establishment and activity of secular organizations in Diaspora in order to consolidate the Armeniancy. Common national issues, programmes directed to the strengthening of the Armeniancy in general should sideline confessional controversy.

As for the practical grounds of providing peace between different confessional segments of the Armeniancy, here advancing of the practical spheres, which may provide field for cooperation between those segments, may serve as a serious mechanism. Such a practical sphere in the life of Diaspora is preserving of the Armenian language

and culture which demands consolidation of nationwide efforts, including eager cooperation between different religious and confessional segments of the Armeniancy.

Another sphere of active cooperation between those different segments of the Armeniancy is the struggle for setting the issues of nationwide character such as recognition of the Armenian Genocide, settlement of the Artsakh issue and etc.

Countering challenges of the social and political atmosphere of the country of residence (wars, domestic political collisions, chauvinism, terrorism and etc.) is also a crucial for the cooperation between religious and confessional segments, as they are common for all the Armenians, despite their religious and confessional belonging.

The historical experience comes to prove that the cooperation between different segments of the Armeniancy for setting common issues takes effect. Such a cooperation is necessary not only for efficient countering the challenges but also for the national consolidation and development of self-consciousness. Such a cooperation may take place on two levels – personal and institutional.

Personal cooperation is manifested in, e.g. involvement of the Armenians of different confessions in the activity of the nationwide and secular organizations, participation in nationwide and secular events and etc.

Cooperation on the institutional level, which is mostly important for the national consolidation and peace, takes place between institutional organizations of those religious and confessional segments. On this level the cooperation manifests itself in the establishment and running of the joint organizations, holding joint events to-

gether with the Ministry of Diaspora, involvement on the institutional level in the management of the nationwide structures ("Hayastan" All-Armenian Fund) and etc.

The examples of the institutional cooperation can be supplemented by the establishment of the boards in the Diaspora coordinating the activity of the organizations representing different religious and confessional segments of the Armeniancy.

Նշումների համար

ՍՓՅՈՒՌՔԻ ԴԱՎԱՆԱՆՔԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հեղինակային խմբի ղեկավար՝
Արեստակես ՍԻՄԱՎՈՐՅԱՆ

Հեղինակային խումբ՝
Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Էդուարդ Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Հովհաննես ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ռուբեն ՄԵԼՔՈՆՅԱՆ
Վահրամ ՀՈՎՅԱՆ

Տեխնիկական խմբագիրներ՝
Խոնարհիկ ՔԱՐԱՈՒՂԼԱՆՅԱՆ
Լուսինե ԲԱՂՐԱՄՅԱՆ

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ office@noravank.am
Հեռախոս/ֆաքս՝ + (374 10) 44 04 73

Թուղթը՝ օֆսեթ, ծավալը՝ 16,75 տպ.մամուլ։
Տպաքանակը՝ 300։ Տառատեսակը՝ Sylfaen։
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում։